






ՀԱՄԱԶԱՍՊ ՀԱՄԱՐՉՈՒԹԵԱՆ

ՏՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՆԵՄՈՐ ԵՌԵՂԻՍ




ՎԻԵՆՆԱ 1927.

ՀԱՄԱԶԱՍՊ ՀԱՄԱՐՉՈՒԹԵԱՆ

891.99

2-

ԲԱՆԱՍՏԵՂԺՈՒԹԻՒՆՆԵՐ



ՎԻԵՆՆԱ 1927.

123/
A II
1333

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

ԸՆ	Տողը վերից	Գրութեան Է	Պատճառ է լինի
6	15	զարկ	զարկ, զարկ
8	3	պարտեզում	պարտեզում
29	13	Ու ամէն բան եմ ես,	Ու ամէն բան եղեւ եմ ես,
42	19	ու անշափ	անշափ
50	21	Դառը դատում, կարօտ նստում.	Բանուոր ենք մենք երկնքի տակ, Դառը դատում, կարօտ նստում.
54	6	հովերի	ծովերի
102	12	Սրտիս բերը ում տամ.	Սրտիս բերը ես ում տամ.
112	3	Աներեւոյթ հոգիներն	Աներեւոյթ հոգիներն են
116	14	խամբոյրը	համբոյրը
141	11	Ես ծախրում եմ իմ ծանօթ	Ես ծախրում եմ ծանօթ
149	20	Յօրինում ես	Մանում ես
155	16	Արժանական	Արժանացայ
157	14	աւերակ	աւերակ
168	13	ահաբակ	ահաբակ
170	7	Ծնապարհին	Ծնապարհին
170	10	Որ հնչում	Որ հնչում են
175	2	լոյսերն է	լոյսերը

Ա.

ԴԱՐՔԻՆ.

Մտֆէ կայծակներ շանթող փաջ դարբին,
Որ կեանք ու հոգի գիտես միշտ կռել.
Ինչո՞ւ, ինձ ասա՛, գործադուլ, անհոգ
Կռան զնդանին դադար ես տուել . . .

Կայծակին նայիր,
Հակատդ լայն բաց
Ու կարող ձեռքով
Նետի՛ր յաղթ հարուած . . .

Ու գա՛րկ, գարկ անվերջ — երկաթէ սրտեր
Աստուած հոգիներ կողոկոսանով .

Այդ աստուածաշունչ զնդանիդ վերայ
Թող ծնունդ առնի շանթէ մտֆի ծով .

Հպարտ անհունին
Հարագատ եղբայր
Զնդան ու մուրմով
Հրդեհիր աշխարհ . . .

Տիեզերքը հանուր հոգեբուլիս դարբնոց —
Հոգեծին արգանդ կռանն ու զնդան .
Կայծակը ֆեղ ձեռք ու սիրտդ որոտ,
Կռի՛ր ու կռիր, կռիր յաւիտեան . . .

Արար աշխարհը
Գարշ գծուծ զանգուած՝
Կրակի՛ր, դարձրու
Մի՛տք, հոգի՛ կռած . . .

Լազուրը լաջուարթ աստղերով ցիրցան
Դարբնոց երազին թող փառք նուագեն.
Մասիս, Արագած եւ լեա՛ն եւ հովիտ
Քեզնով կրակուած՝ թող հոգի շնչեն . . .
Եւ կեանքն ու սրտեր,
Եւ չարն ու բարին
Թող ՚ի մի կազմեն
Հրաշունչ հոգին . . .

Դարբին փաջարի՛ նակատդ ազատ՝
Վերցո՛ւր յաղթ կռանն ու գա՛րկ զնդանին.
Ու գա՛րկ անդուլ, կռի՛ր ու կռի՛ր,
Որ գծուծ աշխարհն առնէ իր ուղին . . .

1904.

Բ.

Էս աշխարհում կեանքս մի գուր գրագ էր.
Իսկ սրտիս հուր ճանապարհը անհաս էր . . .
Տանջանք միշտ, գարուն ու վիշտ շուտ անցան,
— կեանքս ասես բնութեան գուր տնագ էր . . .

Միտքս մի օր նաւ էր հզօր յաւերժութեան ծովի մէջ.
Սիրտս ունէր բիւր այգիներ՝ միշտ անմահն ու անվերջ.
Դիրքս մոլոր եւ անցաւոր ճախորդութեան ծովի մէջ,
— կեանքս մի լի՛, անմեկնելի երագ էր . . .

Քունս կ'անցնի, տունս կ'ընկնի յաւերժութեան սահմա-
նում.

Մտքիս նաւը կ'մոռանայ կիրք ու կռիւ, մաքառում.
Սրտիս ցաւը կ'վերանայ մոռացութեան խորանում,
— Ինչո՞ւ, եարար, կեանքս մոլի գարիւրելի տնագ
էր . . .

1926.

Գ.

ԻՄ ՊԱՐՏԵՉԸ.

Ոչ աշխարհի բախտն ու ծաղիկ,
Ոչ վարդն ու թուփ, ոչ բոյսեր.
Իմ պարտեզում չ'կայ թռչնիկ,
Ի'կան երգեր, չ'կայ սէր . . .

Իմ միտքը կուռ ու երկնահաս՝
Որոնում է ցնորքներ.
Հօր ապրում, գարուն, երազ
Յօրինում է նոր կուռքեր . . .

Իմ պարտիզում երկինք ու լոյս՝
Բանաստեղծի սուրբ խոհեր.
— Ճորտե՛ր է՛ք դուք անմիտ, անյոյս,
Ու չէ՛ք տեսնում իմ ջահեր . . .

1916.

Գ.

Անմահական ու երկնային կորուցել եմ իմ ուղին.

— Աշխարհ եկայ — անդրաշխարհի արեւները սրտիս
մէջ .

— Զ'տեսնուած գարունների սուրբ կարօտը սրտիս
մէջ . . .

Յաւերժութեան զանգերի պէս դողանջում եմ ես ան-
վերջ . . .

— Ճշմարտութեան անհաս ուղին կորուցել է իմ
հոգին . . .

1926.

Ե.

ԻՄ ԿԵԱՆՔԸ.

Հեֆեաթի պէս օրս վառուեց ու անցաւ.
Ողջ աշխարհը սրտիս համար ցաւ դարձաւ.
Լոկ մի վարկեան փայլեց ունայն իմ ուղին,
— Յաւերժութեան ծովը կիսող նաւ դարձաւ . .

Ինձնից առաջ՝ յաւերժութիւնն անպակաս.
Ինձնից յետոյ նա կ'լինի հանապազ . . .
Երկու անվերջ սահման ունի իմ ուղին,
Երկու կողմից յաւերժութիւնն է անհաս
Անդրդուելի սահման դրել իմ նամբին . . .
— Կեանքս իզուր անցա՛ւ, դարձաւ մի երազ . . .

1926.

Զ.

ՓԱՐՎԱՆԻ ՊԷՍ ՄԻՇՏ ԳԱԼԱՐՈՒԵՆՔ ԱՐԵՒԻ
ՇՈՒՐԶ . . .

Ին՞չ կայ այստեղ անմահակա՛ն վսեմ եւ լուրջ . . .
Զուր ինչո՞ւ եմ մեզ բորբոքում կիրք եւ անուրջ.
— Միայն մի բան կայ յաւիտեան — արեւն է վառ,
երկնածին.
— Փարվանի պէս միշտ գալարուենք նորա շուրջ . . .

Ին՞չ կ'լինի յաւերժական մեր սեւ ուղին
Ո՞ւր կ'դիմի անկարեկից եւ տարագիր մեր հոգին,
Եթէ մարի կամ տկարի արեւը վառ երկնային, —
— Փարվանի պէս միշտ գալարուենք նորա շուրջ . . .

1926.

ՋՈՒԼՀԱԿՆԵՐ.

Երկնքի գաւակ — արեւի ծնունդ
 Քաջ աշխատաւոր՝ մտքի ջուլիակներ.
 Ձեր սիրտը ազատ՝ լոյսերի խառնուրդ,
 Երկաթէ մկան՝ ածղահայ ձեռքեր —
 Հպարտ եւ արի՛
 Ձեռք գարկէ՛ք գործի.
 — Ձեր թափն ու հանճար
 Նոր կեանք կ'ստեղծի . . .

Եւ արեւագարդ երկնքի նման,
 Որ արարչական դազգահն է, դիվան.
 Գորար ու ջուլիակ՝ ձեր կուրծքը արնոտ՝
 — Կանգնեցէ՛ք դազգահ հոգու մեծութեան . . .
 Ձեր նակտին կնիւն, ձեր սրտին աւիւն՝ —
 Քանի երկնքում դեռ կայ արեգակ,
 — Գործի վիճակում թանուոր ու ջուլիակ,
 Զարկէ՛ք, վերանայ կապանքն ու արիւն . . .

Քանի այս հզօր եւ վեհ տիեզերքում
 Դազգահն է գործում անմահ բնութեան —
 Իսկ արեւն, աստղեր, երկինք ու եթեր
 Վսեմ դազգահի կերտուածքն են միայն, —

Ձեր վիշտն ու յոյսեր
 Երկաթ սրտերից.
 Քրտինքն ու լոյսեր
 Ձեր լայն նակատից
 Սուրբ ազատութեան անհուն թելի տակ
 Երկինք կ'թռնեն, յաղթանակ կ'երգեն . . .
 — Դազգահին գարկէ՛ք բանուոր ու ջուլիակ,
 Աշխատանքն ու լոյս թող կեանքը գրկեն . . .

Հողմերն աշխարհի թող նիւթ կուտակեն,
 Եւ մանեն մանած կեանքի անիւներ.
 Գցէ՛ք ամէն ինչ դազգահի բերան,
 Գզէ՛ք ու գործէ՛ք մեզ ազատ օրեր,
 — Արդ՝ նորոգ կեանքի թերթերն են վսեմ
 Հիմնուած դազգահի վերայ կախարդուն.
 Թռիչիչն ու թողմախ, մալանչն ու մանած
 Կանչում են միշտ ձեզ դէպ գործը անհուն . . .
 Աշխատաւորներ,
 Ձեր սիրտը արեւ.
 Յօրինէ՛ք աստուած
 Եւ սէր յարատեւ . . .

Ձեր նոր գարունին թող փարթամ ծաղկին
 Սուրբ ազատութիւնն՝ աստուածը մտքի.
 Թող գործն ու հոգին հեղեղեն աշխարհ, —
 — Գործով են ազատ սրտերը փառքի . . .

Գործի սուրբ զեղում

Ցրէ՛ք աջ ու ձախ .

— Զարկէ՛ք անդադրում .

Թո՛ւիս, քախ . . . քա՛խ — քրա՛խ . . .

1904 .

Ը .

Միթէ՞ շփեղ եւ փառահեղ աշխարհը այս տէր չունի .

Երկինքը լուռ, աստղերը հուր, կամ արեւը սէր
չունի՞ . . .

— Ո՞ր վեհագոյն աստուածութիւնն է այս ծնել անուա-
նի .

Միթէ՞ անափ եւ հոյակապ աշխարհը այս տէր չունի . . .

Ինչի՞ եմ պէտք իմաստութեան շէնքերը գուր, նրբամիտ,
Քանի մարդը չի հասկանում աշխարհը պարզ ու վնիտ .
Ո՞վ կարող է քարգման լինել խորհուրդներին մշմա-
րիտ,

— Սո՛ւտ է . կեանքը համայնական հգօր ու վեհ տէր
ունի . . .

1926 .

Թ.

Ասէ՛ք, ինչո՞ւ երկիրը մեր
էս անկոպար տիեզերքի մէջ
Մենա՛կ, օտա՛ր, անընկեր
Թափառում է լու՛ռ, անվերջ . . .

Ո՞վ է գծել մեր սեւ ուղին
Միշտ երերուն ու տարագիր . . .
Հարց եմ տալիս միշտ դառնագին . . .
Ու՞ր ես, անգութ փակատագիր . . .

Անծայրածիր տարածութեան՝
Ժամանակի ցանցի մէջ
Կա՞յ մի երկիր մեզ նման,
Միշտ ցաւ ու դաւ սրտի մէջ . . .

Օր ու գիշեր մտքիս փշեր —
Հարց եմ տալիս աստղերին.
Ո՞վ է մեր սեւ ուղին փաշել,
Ո՞վ կայ այսպէս մեր օրին . . .

1926.

Ժ.

ՄԻՏՔ ՈՒ ԵՐԱԶ.

Դուրս եմ գալիս իմ պարտէզ.
— Բիր աննման ծաղիկներ.
Երազների հուր հանդէս, —
— Ո՞վ է վառել իմ լոյսեր . . .
Ծաղիկները աննման
Լուռ նայում են արեւին.
Երազներս դիւթական,
— Ձեզ ո՞վ ցանեց սեւ հողին . . .

Ման եմ գալիս ծովափին.
— Մրրիկներ են շառաչում.
Իսկ ջրերը կայծակին
Անվախ կռուի են կանչում . . .
— Ո՞վ էր բռնեց իմ սրտից
Մրրիկները ահարկու.
Ո՞վ էր յանձնեց երկնքին
Կայծակները իմ հոգու . . .

1926.



ԺԱ.

Ո՞վ է ԽՕՍՈՒՄ ՄԹԻ ՄԷՋ.

Ո՞վ է խօսում մթի մէջ
Խօսքեր ասում ինձ անվերջ.
— Լուռ գիշերին իւր յուշերին
Միտքն է շողում ելեւէջ:

Ո՞վ է վառել սրտիս մէջ
Ճրագները միշտ անշէջ.
— Ծաղիկներով զարդարուած
Հարսանիք կայ սրտիս մէջ . . .

Ե՞րբ է աստուածն աներեւ
Զարկել իմ մէջ իւր վրան.
— Ինչ եմ կապել յարատեւ
Կանաչ, կարմիր ծիածա՛ն . . .

Ո՞վ է եարար սեւաւոր
Սգում տրտում սրտիս մէջ . . .
— Մահն է իգուր ամէն օր
Թաղում անում սրտիս մէջ . . .

Գալարում են ինձ անվերջ
Յար հարսանիք, կռիւ ու գօրք,
Եւ մա՛հ, եւ լո՞յս սրտիս մէջ.
— Երա՞գ է սա, քե՞զ ցնորք . . .

1926.

ԺԲ.

Ես շատ անգամ ման եմ գալիս՝ աչքս գցած արեւին.
Գիշերները հարց եմ տալիս ճամբայ ելած աստղերին.
— Երբ կ'իինի երկնքի պէս կեանքը վսեմ ու պայծառ.
Երբ կ'հասնի նա աստղերի կախարդական բարձուն-
քին . . .

Ասէ՛ք. ինչո՞ւ գոյութեան տէրն ահաւոր
Լեցրել է զուր կեանքը թոյնով նենգաւոր.
— Ինչո՞ւ միայն մարդը քաշի վիշտ ու ցաւ,
Ու հանապազ կրի պատիժ անսովոր, —
Երբ ամէն ինչ կատարեալ է, ներդաշնակ.
Սնտառ ու բոյս, հաւք ու թռչուն, ծով-ցամաք,
Լուսաւոր են, անփոյթ, անվիշտ ու վնիտ.
— Ինչո՞ւ միայն մարդն է տրուած էս ժխորին այլան-
դակ . . .

Ես շատ անգամ ման եմ գալիս՝ աչքս գցած արեւին,
Ու ամէն ժամ հարց եմ տալիս իմ սաւառնող մտքերին.
— Ի՞նչ էք այդպէս 'ի զուր սահում, ի՞նչ էք անվերջ
որոնում.
— Ե՞րբ կ'իինի երկնքի պէս վա՛ռ ու պայծառ մեր հո-
գին . . .

1926.

Կեանքի լոյսով լեփ լեցուն է իմ հոգին.

Անմահութեան բարձր տուն է իմ հոգին.

Քանի կ'ուզէ փորձանքն ու վիշտ մեզ մաշեն.

— Կեանքն ու աշխարհ իր մէջ ունի իմ հոգին:

Ժամանակի նախարակը թող գուր բանի, կեանք մանի.

Եւ նիւթական խենթ աշխարհը իրարանցում թող անի.

Մեր օրերին թող միշտ իշխեն բռունցք եւ սուտ վայ-
րենի, —

— Ողջ աշխարհը, չարն ու բարին իր մէջ ունի իմ հո-
գին . . .

Երկնքի լոյս եւ աստղերի սուրբ լեզուն,

Ծաղիկ ու բոյս, սէր ու արեւ, նուրբ գարուն.

Օր ու գիշեր, փառք եւ յուշեր, մահ-արիւն —

— Յաւերժաբար իր մէջ ունի իմ հոգին . . .

Դրսի կեանքում թող միշտ գործի հրմուսնալ սուտ,
անխնայ.

Եւ նիւթական խենթ աշխարհը իր արարքով արբենայ.

Քանի կ'ուզէ կեանքն անմիտ խաղ դառնայ . . .

— Էս աշխարհի միակ տէրը նա' է, — արթուն իմ հո-
գին . . .

1926.

Դատարկ ու սին է աշխարհի սեւ ուղին,

— Միայն հոգին է լոյս տալիս մեր կեանքին.

Անարգ եւ հին է նիւթական այս շուկան,

— Ուխտաւոր է, մուրազ ունի մեր հոգին . . .

Ինչի՞ս եմ պէտք ձերք ու ձգտում նիւթապաշտ.

Ինձ չեն յուզում կիրք ու կռիւք անհաշտ.

Մեզ կանչում են յաւերժութեան գարունքին, —

— Ուխտաւոր է, մուրազ ունի մեր հոգին . . .

Լսիր սրտիդ ներքին ձայնը լուսաւոր.

Հասիր մտքիդ թռիչքներին երկնաւոր.

— Լա՛ւ տես. այստեղ չի՛ վերջանում մեր ուղին,

— Ուխտաւոր է, մուրազ ունի մեր հոգին . . .

1926.

Արեւներին եւ աստղերին միշտ կանչում է իմ հոգին . . .
Յաւերժութեան զանգերի պէս ղօղանջում է իմ հոգին . . .

Ոչ ոք չասի, հասկանում է էս աշխարհի վերուդիր,
— Տիեզերական շարժումները ներշնչում է իմ հոգին . . .

Երագումս ես տեսնում եմ մեր էութեան անհաս եւ իսկ
մի բնոյթ,
Իսկը այնպէս, ինչպէս որ կայ, եւ ոչ խաբող երեւոյթ.
— Ինչ որ տեսար եւ ապրեցար, անցաւոր է, զուր եւ
սուտ.

Բնութեան ողջ անցուդարձը ներշնչում է իմ հոգին . . .

Ինձ կանչում են անյայտ աշխարհ, ուր չի հոսում ժամանակը երեւուն.

Այնտեղ չ'կան տարածութեան ձեւերը սուտ եւ դժգոյն.

— Անդրաշխարհի կարօտն է սուրբ սիրտս լեցնում միշտ անհուն,

— Հոգեպսակ աշխարհների ժպիտներով փառանջւում է իմ հոգին . . .

Աշխարհը սուտ. նորա ունայն իրադարձը երեւոյթ.

Ինչ որ տեսար եւ ապրեցար, երազի պէս շուտով կ'անցնի զուր, անփոյթ.

Լսի՛ր միայն սրտիդ ներքին աստուածների կանչերին, —

— Յաւերժութեան զանգերի պէս ղօղանջում է իմ հոգին . . .

1926.

Ո՞վ է հիմնել սփանչագործ այս տունը.

Արեւների եւ աստղերի յաւերժական այս բունը.

Ո՞ր հանճարն է յօրինել այս սարգն ու կարգ.

Ո՞վ է շինել արարչագործ Անհունը . . .

Հազար ու բիւր արեւներ կան լոյսի՛ պէս՝

Յաւերժութեան տաճարի մէջ՝ տեսանելի՛ եւ անտես.

— Ձեռքդ վերցուր մի հեռադէտ լուսավարք, —

Անմահութեան արեւները կ'տեսնես . . .

Մեր հոգին էլ երկնքի պէս մի տուն է.

Հազար ու բիւր արեւների արարչական խոր բուն է.

Տրուած են հուր աստղերը բիւր մեր սրտում.

— Մեր հոգին էլ տիեզերքի պէս անհուն է . . .

Ներկայ եւ անց արեւները սաւառնում են սրտի մէջ.

Կեանք յօրինում տեսանելի՛ եւ անտես՝ . . .

— Շիտկի՛ր սրտիդ հեռադէտը երկնաէջ,

Քո հոգեւոր եւ հեռաւոր արեւները կ'տեսնես . . .

1926.

ԺԵ.

Քանի՜ կ'ուզէ վայրենաբար թող ինձ տանջի իմ ցաւը.
Խեղճ իմ ուղին թշնամաբար թող հալածի սեւ դաւը.
Փորձանքն ու վիշտ, մրրիկը միշտ թող գալարուին իմ
գլխին,

— Կռուի դաշտում ոչ մի դէպքում չի՛ նահանջի իմ
նաւը . . .

Մի անգամ լոկ ծնուել եմ ես իմ մօրից.

Երբ մայր մտնի իմ արեւը, էլ յետ չեմ գայ ես նորից.
Էլ ինչո՞ւ գուր ես սարսափեմ էս աշխարհի ժխորից,
— Կեանքի կռում ոչ մի դէպքում չի նահանջի իմ
նաւը . . .

Քանի՜ անհուն խորհուրդ անեն աստղերը խոր երկըն-
քում,

Քանի՜ գարուն, սէր ու ծաղիկ նո՛ր կեանք շողան իմ
սրտում.

Քանի՜ միտքս արեւի պէս լուսաւորի բարձունքում —

— Կռուի դաշտում երբէ՛ք, բնա՛ւ չի նահանջի իմ
նաւը . . .

1926.

ԺԸ.

Կայծակը ինձ նետ՝

Անհունը հոգիս —

Աստղերը պսակ

Ազատ ճակատիս՝

— Կեանքիս կապանքը

Փշրե՛մ ու երթամ

Կայծակը ինձ թել

Երկի՛նք սլանամ . . .

Իմ երգն է դողանք

Անհունի հօր.

Աստուած դառնալու

Կիրքն իմ ահաւոր . . .

Հեռու երկնքում

Մտքերս ցրե՛մ.

— Աստղերի ցանցում

Նո՛ր կուռք որոնեմ . . .

1903.

ԺԹ .

ՄԻՏՔԸ .

Տխուր եւ լուռ՝
Աչքերդ խուփ,
Մտքերդ հուր
Միշտ պեծուփ .

Ինչպէս ալիք
Յուզում եմ յար .
Ինչպէս մրրիկ
Շաչում յամառ . . .

Ո՞ր ծովերի
Ալիքն է այդ .
Որ աշխարհի
Զօրքն է անյայտ . . .

Կամ ե՞րբ ու ո՞վ
Ի՞նչ արարեով —
Մրրիկն անշէջ
Թաղեց իմ մէջ . . .

1922 .

Ի .

ԶՄՐԱՆ ԳԻՇԵՐ .

Զմրան գիշեր — տխուր յուշեր
— Ին՞չ էք ուզում ինձանից .
Մարած լոյսեր՝ կեանքի փշեր
Ի՞նչ էք յուզում ինձ նորից . . .

Շարժի՛ր, քաշի՛ր միշտ անխռով
Ժամանակի ճախարակ —
Պատանքը մեր հիւսիք շուտով, —
Հանգչելու է արեգակ . . .

1926 .

ԻԱ.

ԵՍ ԵԿՈՒՈՐ ԶԵՄ ԷՍ ԱՇԽԱՐՀՈՒՄ.

Ինձ ասացին.

— Նոր ես եկել, զուր ես եկել էս աշխարհ.
Կարն է, գծուծ մեր երկրային ֆանապարհ...
Մեր օրերի կծիկը սեւ սկսում է էն օրից,
Երբ տանջահար մենք ծնում ենք մեր մօրից...
Ու գնում ենք մեր սեւ ուղին դառնութեան,
Մինչեւ մահը կանչի դէպի գերեզման...

— Սո՛ւտ է. երբե՛ք ես չեմ ծնուել անէութեան ակուն-
քից.

Ես եկուոր չեմ այս փառահեղ ու հոյակապ աշխարհում.
Մայրս միայն ինձ սնել է, հանել նախորդ վիճակից...
Սո՛ւտ է, չ'կան մահ ու վախճան արարչագործ էս
կեանքում.

Ես եկուոր չեմ, երբե՛ք դժբախտ անցաւոր,
Որ գնում է խեղճ ու կրա՛կ, անհամարձա՛կ իր ուղին.
Վախճան չունի, սահման չունի ֆանապարհն իմ երկ-
նաւոր.

Ես ծնուած եմ արարչագործ անհունի հետ միասին,
Արարչութեան վեհ գործի մէջ ես մաս ունիմ յաւի-
տեան.

էութեամբ իսկ պատկանում եմ արեւների սուրբ դա-
սին, —

Ես եկուոր չեմ էս ահաւոր անցուդարձում բնութեան...

Տիեզերքը ողջ ես անցնել եմ ծայրէ ծայր,
Ու եղել եմ աստղերի մէջ, արեւների զանգուածում.
Երբային բարձունքներից գծել եմ մերթ ֆանապարհ,
Եւ մասնակից եղել եմ ես բնութեան մեծ պայքարում...
Թափանցել եմ կայծակի մէջ եւ շանթահար բանակնե-
րում ամպերի,
Միշտ ահարկու կռուի ժամին՝ ծովերի մէջ բարկա-
նայթ...

Մերթ ապրել եմ կեանքը հանգիստ ու անխռով բոյսերի,
Ու ամէն բան եմ ես, լոյս ու կրակ, պիրկ ու հե-
ղուկ եւ երկաթ.

Այժմ ահաւոր զօրքերը բիւր տիեզերքի
Կարգել են ինձ տէր ու աստուած մեծ աշխարհի տաճա-
րում.

Յաւերժութեան կրքերն ու ջանք, խաւար ու լոյս, եւ
հոգի

Յօրինել են նոր արարիչ մեր մարդկային հանճարում...

— Ես եկուոր չեմ էս աշխարհում եւ ոչ մուր անցաւոր,
Հանապարհն իմ վախճան չունի, իմ օրերին քիւ
չ'կայ...

Քանի դեռ կան երկինքն, արեւ եւ աստղերը հեռաւոր,

Ինձ, իմ կեանքին, իմ հոգեւոր ջանքերին մահ չ'կայ . . .

— Երբէք չասէ՛ք ինձ զուր անցորդ համայնական էս
նամբին .

Էս աշխարհում ես եկուոր չեմ պատահական ու թշու-
ան . . .

Վեհ բնութիւնն է արարիչ աստուած կարգել իմ հո-
գին,

Որ փառաբար նա թարգմանի իւր օրէնքներն յաղթա-
րար . . .

1927 .

ԻՔ .

Լուսնի պէս մեռակ՝ անդունդի ափին —

Արեւը հոգուս շողշողաց հեռուն .

Ծովի ալիքներ — խորհուրդ նակատին՝

Անյայտի երգեր հնչեցին անհուն . . .

Ու ձայներն ահեղ, յաւիտեանական,

Իբրեւ աստուածներ զարթնեցին իմ մէջ .

Եւ բիւր դարերի արարքներ մահուան

Կապեցին հոգուս մոայլ ելեւէջ . . .

Մեռակ եմ, մոլոր . . . հոգիս անսահման

Տեսարանների աստղեր ու յոյգեր . . .

— Այս վեհ տիեզերքը՝ անցեալն ու ներկան —

Թւում են ինչ որ անյայտ երազներ . . .

1916 .

ԳԶՐԱՐԻ ԵՐԳԸ.

Դեռ մեր կեանքը չունի արեգակ,
 Մեր հովտում փառացած է խաւար.
 — Բայց մեր սիրտը տոկուն, համարձակ,
 Մեզ նոր կեանք կ'ստեղծի մեր հանգար...
 — Երգիր երգ լուսաւոր,
 Երգ արիւն ու ֆրտինք —
 Արեւներ ու երկինք
 Յօրինող փառք քանուոր...
 Ինչպէս մէզն է լեռան ուսերին
 Կուտակուած վաղորդեան ժամերին.
 Անգիգ բուրդը տխուր, խառն ի խուռ,
 Որ ծնունդ է կեանքի, փորձանքի,
 Կուտակուած է մեր դէմ միշտ եւ լուռ,
 — Պէտք է գործ ե՛ւ ձեռքի, ե՛ւ մտքի...
 Ահա եւ վեհ չափին,
 Ահա մեր սուրբ անեղ.
 — Զան ընկեր անմեկին,
 Զա՛րկ, գգեմք, «բըզ ու դըզ, չախ ու չեխ»...
 Շուտ գգեմք ու գործենք յաղթաբար,
 Նոր արեւ յօրինենք մեզ համար...
 Երգիր երգ լուսաւոր,
 Երգ արիւն ու ֆրտինք.

Արեւներ ու երկինք

Յօրինող փառք քանուոր...

Մեր կննիւրը կայծակն է մտքի՝
 Մեր նակտին փառացած լեռան պէս, —
 Մեր այս գործը աղբիւրն է փառքի,
 Նա միշտ կեանք է գգում — ա՛յ էսպէս...
 Զան ընկեր. մէկ նայիր դէպ հեռուն,
 Տե՛ս ինչե՞ր են կեանքում կատարում.
 Էս տանջանքն, էս արիւն դառնութիւն
 Թշնամին մեր գլխին է թափում...
 Տե՛ս, հեռուից՝ ծովի պէս անսահման —
 Հեղեղում է կեղծիք եւ չարիք.
 — Օձի պէս նենգաւոր ու դաժան
 Իրար միս են ուտում չար մարդիկ...

Ահա քո վեհ չափին,
 Ահա քո սուրբ անեղ.
 Զան ընկե՛ր անմեկին,
 Զա՛րկ, գգեմք միատեղ...
 Գգեմք բուրդը աղտոտ, խնամուած,
 Գգեմք կեանքը մթին, դառնագին.
 — Աշխատանք է մեզի վիճակուած,
 Գգելով կ'հասնենք արեւին...

Աշխարհի սկզբից կեանքի կեղտը էսպէս —
 Կուտակուած է մեր դէմ անգիգ բուրդ ծովի պէս.

Նորա մէջ խննուած են Բարին եւ Հարիֆ
Ճշմարիտն ու կեղծիք եւ ստեր,
— Ամէն բան ինչ անում են մարդիկ . . .
Բայց մեր ձեռքը ազատ, քաջ ընկեր,
Մեր անեղը կայծակ երկնացու,
Մեր չափին է հոգին անվեհեր, —

— Զա՛րկ, գգեմք, գտեմք բուրդը խոժոռ . . .
Եթէ միշտ է, այս բուրդը աղտոտ, մթագոյն
Իւր մէջ ծէրք, լոյս արեւ էլ ունի.
Թէ կեանքին վիճակուած է գարուն,
— Մեր անեղ ու չափին կ'ծնի . . .
Եւ քանի երկնքում շողշողան
Տիեզերքի նրագները — աստղեր —
Իսկ ծովում ալիքները դաժան
Միշտ ոռնան, կրծոտեն սեւ ժայռեր —
— Թող անդուլ կայծկտայ մեր անեղ,
Թող չափին շանթէ միշտ յաղթ հարուած.
Շուտ գգեմք բրդի դէզը ահեղ,
Զտուելու է այս բուրդը բերուած . . .

Ողջ աշխարհին ու արեւը հօր
Նոյնպէս մեծ մի գորոց են ազատ ու համայն
Ժամանակն է վարպետը նոցա, — մի գորար ահա-
ւոր,
Որ գգում է անխախտ անցուղարձը հօր բնութեան . .

Նա է, որ միշտ գգում է, գտում իրարից
Լուսաւո՛ր անհուն ծէրք եւ օովանք աղտալից —
Իսկ երկիրը, լուսին եւ աստղեր
Երկնային, յաղթական այդ գորոցն է ծնել . . .
— Ահա մեր վեհ չափին,
Ահա մեր սուրբ անեղ.
Զա՛րկ ընկեր սրտագին,
Գգեմք կեանքը ահեղ . . .
Եկ գգե՛նք բուրդը մութ, լեռնացած,
Ու դիգեմք ծէրքը ջոկ, օովանք ջոկ եւ այստեղ —
լոյսին մօտ . . .
Բնութեան գորարից, — որ ահեղ ժամանակն է կար-
գուած,
Առաւել փառաւեղ մենք կարող ենք գգել կեանքի բուր-
դը աղտոտ . . .
Շուտ արա՛ւ. ա՛յ էսպէ՛ս, ծէրքը ջոկ, օովանք ջոկ.
Զարկ ընկեր, աշխարհում չենք ծնուած
Որ ապրենք ու սողանք միշտ անգործ ու անհոգ . .

1904 .

ԻԴ.

Քանի՞ գնամ անդուր ի գուր իմ ուղին.

Ե՞րբ պիտի գայ մահը տխուր իր որսին . . .

Երբ հեռանամ, ո՞ւմ պիտի տամ շէնքերը վեհ իմ մըտ-
քի.

Ասէ՛ք, եարա՛ք ե՞րբ կ'հասնի վերջին ժամը տաջան-
քի . . .

Ո՞վ ինձ կ'ասի. ի՞նչ կ'լինի երազական աշխարհում.
Ով դուրս կը գայ ինձ ընդ առաջ յաւերժութեան նոր
կեանքում . . .

Ո՞ւր ես տանում անդուր, ի գուր ֆանապարհ,
— Ո՞վ է հիմենլ քեզ, անպտուղ չար աշխարհ . . .

1926.

ԻԵ.

Ո՞վ էր ասաց, թէ կայ աստուած մեզնից հեռու երկրե-
քում —

Գահը նստած միշտ վեհապանծ վառ աստղերի խըն-
նոյքում,

Դատ է անում, հարց ու փորձում իւր ահաւոր գորքե-
րին,

— Զուր է ասուած, թէ կայ աստուած յաւերժութեան
բարձունքում . . .

Իմ մտքերի, երազների կախարդական թելերին
ինձ լուր բերին բարձունքներից այն վերին,

Որ կայ աստուած գահը նստած արարչական իմ հո-
գում, —

— Ինձանից դուրս աստուածային ոչիչ չ'կայ անմար-
մին . . .

Իմ մէջն է նա — իւր վեհափորձ, արարչագործ գոր-
քերով —

Նա է ցրում սրտիս դաշտում լոյս ու արեւ, վիշտ ու ծով.
Նա է վարում արշաւանքն իմ, կռիւ եւ ջանք, փոթորիկ.

— Իմ մէջն է նա. — միայն իմ մէջ աստուածը կայ
անվրդով . . .

1926.

Սուտ մի՛ ասէ՛ք. մարդը երբէ՛ք չի մեռնի.
Արեւների, աստղերի հետ նա յաւիտեան կապ ունի.
Իւր մարմնաւոր ու անցաւոր բունը մի օր կ'թողնի,
— Բայց իբր հոգի, իբրեւ մի լոյս երկնքի —
Յաւերժական նոր անապարհ կ'գտնի . . .

Սուտ է մահը, նորա գահը վրահաս.
Տիեզերքի մէջ չի մահանայ ոչ մի մազ.
Եւ ամէն ինչ, որ ծնուած է յաւերժութեան ակունքից,
Անմահ կ'ապրի, միշտ կ'լինի բնութեան մէջ անպա-
կաս . . .

Միթէ՞ մարդը, կեանքի զարդը, գարունների սուրբ
վկայ . . .

Պէ՛տ աննշան մի աւազի չափ չ'կայ . . .

— Սուտ է՛ք ասում. մարդը երբէ՛ք չի մեռնի.
Յաւերժական բնութեան մէջ մահ չ'կա՛յ . . .

1926.

Նստած մենակ միտք եմ անում.
— Միտք եմ անում ու ցանում.
Ցանքսարար եմ ժիր եւ անվախ,
Միշտ մտքեր եմ ես ցանում . . .
Մտքերը իմ անհուն զօրքով
Արշաւում են աջ ու ձախ.
Յաւերժութեան սուրբ կարօտով
Կեա՛նք են հիւսում անխարդախ . . .

Սերմնացան եմ ես անվրդով,
Ցանքս եմ անում ու սպասում.
— Ե՞րբ կ'հասնի հունձը շուտով,
Որ հաւաքեմ բերքն ամբարում . . .
Միտք եմ անում ես անդադար.
Ե՞րբ կ'տիրեն ողջ տիեզերքին
Զօրքերը իմ աստուածաբար . . .

1926.

ԻԸ .

Հագար տեսակ վարպետներ կան իմ ձեռքի տակ շինարար ,

Հագար տեսակ մթերք ու նիւթ միտք ունի յաղթարար .
Քանի ազատ դեռ կ'ըզդան աստղ ու արեւ կենարար ,
— Ես զմայիլ երկնատեսիլ տուն եմ շինում ձեզ համար . . .

Աղիւսներս հուր ու կրակ միտքս է քափել համարձակ ,
Երկաթները պիրկ ու հաստատ սիրտս է տուել անյատակ .

Քար ու աւազ , կիր անպակաս միշտ կ'լինի ձեռքիս տակ ,
— Յաւերժական գարուններից տուն եմ շինում ձեզ համար . . .

Դիրքս ազատ , հիմքս հաստատ՝ իմ պատերը անսասան ,
Պարիսպները հասնելու են անդրաշխարհին դիւքական .
Աշտարակներն ու զանգերը երկինք ցցուած յաւիտեան —
Եղեմական երգ կ'հնչեն , երգ անմահ ձեզ համար . . .

Իմ երկնահաս՝ դիրքը երազ եթերային շէնքի մէջ —
Կան արեւներ յաւերժութեան-կախարդական եւ անշէջ ,
Ուր հոգեւոր գարունները շողշողում են երկնաէջ —
— Ճորտեր է՛ք դուք եւ չէ՛ք տեսնում , անմահական տուն
եմ շինում ձեզ համար . . .

1926 .

ԻԹ .

Էս աշխարհից , էս փաղափից ու գիւղից —
Ես չեմ եկել ձեր մութ անգութ վայրերից .
Հեռո՛ւ է , վառ իմ երկնային հայրենիք ,
— Ես եկել եմ լոյս աստղերից , արեւից . . .

Եկել եմ ես արեւի պէս միտք հիւսեմ ,
— Աստուածային , յաւերժական միտք վսեմ ,
Որ տէր լինի այս տիեզերքին բովանդակ ,
Կեանքի համար դառնայ հոգի լուսադէմ . . .

Էս աշխարհից , էս փաղափից ու գիւղից
Ես չեմ ուզում ընկեր ու սէր կարեկից ,
— Իմն են արեւ , եւ աստղերը հայրենի .
— Արեւներ եմ ես յօրինում իմ մտքից . . .

1926 .

ԿԼԵՅԶԻ.

Շուտ արա ընկեր իմ տարագիր.
 Դրստուիր, սիրտդ բաց.
 — Պէտք է գործ ու եռանդ անխտիր,
 — Աշխատանքն է հոգի եւ աստուած . . .
 Դէ՛հ վե՛ր կաց, փութադ բեր,
 Շուտ վառենք մեր բուրան երկնային.
 Մենք երբէք չենք մնայ անտարբեր
 Յաղթակա՛ն հոգեւոր նոր կեանքին . . .
 Բե՛ր, վառենք սիրտ ու ջանք,
 Ե՛կ լարենք աշխատանք.
 — Տիեզերքին նոր արեւ,
 Մարդկութեան ազատ կեանք
 Յօրինենք յարատեւ . . .
 Դո՛ւ, լուսին, բռն մասին
 Շատ յանախ եմ խօսում —
 Երագներ ու հեքեաք.
 — Ի՞նչ ես միշտ թափառում
 Լոյսերովդ արծաթ . . .
 — Ձանձրալի եմ ու անչափ դառնագին .
 Քո գնացքը անփոյթ, բռն ուղին . . .
 Մեզ ահա աշխատա՛նքն է կանչում.

Մեր ուղին՝ մեր սրտին
 Նոր գարուն ու յոյսեր է հնչում,
 Կախարդուած մեր հոգին
 Նո՛ր կեանքի է տենչում . . .

— Տե՛ս. այստեղ մի կողմից
 Մեր ծանօթ հին գրքարն է գգում,
 Եւ շարժում քաջաբար իր չափին.
 Միւս կողմից՝ պատին կից
 Իր մեծ փութսն է փչում
 Մեր ծանօթ քաջ դարբին . . .
 — Ահա՛, նա բորբոքում է բուրան
 Եւ սարգում է իր կռանն ու զնդան,
 Որ երկաթն ու պողպատը հալի
 Եւ լինի երկնային դռներին բանալի . . .

Դէ՛հ, սարգենք մեր դազգահը անվախ.
 Շուտ արա՛, փութադ բեր եւ փչիր.
 Բանուորներ ենք ազատ ու խիզախ,
 Ճշմարի՛տ մեզ կ'ասեն կլէյչի . . .
 — Ա՛յ էսպէս միշտ սրբիր,
 Հա երգիր ու կանչիր.
 — Աշխատանքը մեզնից չի՛ փախչի . . .
 Կուրծքդ լայն բաց արա ու փչիր,
 Գործի դիր եւ շարժիր փութադ ժիր.
 Թող անվերջ բորբոքուի այս ածուխը ընտիր,

Ու անվերջ շողշողան մեր բոցերը կարմիր . . .

Այս բոցերը կարմիր ու փայլուն

Ճիշտ հոգի են հզօր ու աստուած,

Կ'վառին, կ'գտեն մարդկութիւն . . .

— Գիտե՞ս, ո՞ւր են տանում

Մեր կռիւն, աշխատանք . . .

Աշխարհի սկզբից կատարուած՝

Անարդա՛ր մեր վզին փաթաթուած

Սեւ ռիւրն ու յանցանք

Կ'շիտկի միայն նա —

Մեր տոկուն, անխնայ —

Յաղթական աշխատանք . . .

Շուտ արա՛. մի լինի անտարբեր.

Բեր սարգենք մեր դազգահը գործի՛.

Տե՛ս, ինչքան ամաններ

Աղտով լի, կեղտով լի

Կուտակուած են մեր դէմ . . .

Միայն մեր աշխատանքը վսեմ

Այս աղտոտ ամաններն ու անօթ

Կ'մաքի՛, կ'գտի յաւիտեան . . .

— Շուտ արա՛. ես գործի եմ կարօտ.

Բեր վառենք մեր կրակն ու բուրան . . .

Նիւթեղէն, հրեղէն ամաններ

Թափուած են մեր առաջ շարէշար.

Զանազան ու անթիւ անօթներ,

Որ սրտեր են կարծես կենդանի,

Եւ հոգի յանցաւոր ու խաւար . . .

Տե՛ս, շատերը կեղտով են պատած,

Իսկ ոմանք՝ այլանդա՛կ, վայրենի՛

Կեանքից դո՛ւրս են նետուած . . .

Պէտք է ձեռք ու մկան,

Աշխատանք յաղթական,

Որ մաքրենք ամանները աղտոտ

Զա՛րկ անվերջ, որ սրբենք սիրտ, հոգի եւ աման,

Եւ առնենք վեհարար մեր փափա՛գն ու կարօ՛տ . . .

1904 .

Ժիր եւ հօր, տերեւագարդ յամառ անտառ.
 — Հսկայ ծառեր՝ բիր եղբայրներ միշտ կողք-կողքի՝
 փունջ մագերով բռնել են խիտ հովիտն ու սար,
 ինչպէս բանակն անպարտելի անթիւ գօրփի:
 Ամէն գարնան նոր հագուստով, նոր ժպիտով,
 Ամէն ձմեռ ներմակ գլխով, խոհուն, տոկուն,
 Իսկ ամառը երգ ու տենչով, խօսուն, շարժուն —
 Կանգնած է նա — անյաղթ, հպարտ գօրաբանակն,
 Արհամարում ե՛ւ ահ, ե՛ւ մահ ու մրրիկներ . . .
 Հողմն է փչում — ջինճ, աստղալից երկնփի՛ տակ —
 Վարում է նա խորհրդաւոր իւր գրոյցներ —
 Նա խօսում է համատարած ու կայտառ . . .
 — Երկինք, աստղեր, հեռու աստուած լո՛յս ու կրակ,
 Անմեկնելի ձեր գաղտնիքն է քննում անտառ . . .

1921.

Կախարդական ուղիներով յաւերժապէս անվրդով
 Ընթանում են հազար ու բիր ուխտաւորներ բեռնաւոր.
 Ուխտ են գնում վառ աստղերը հեռո՛ւ օտա՛ր խմբերով,
 — Քոչուորներ են վառ աստղերը խորհրդաւոր եւ սո-
 վոր . . .
 Եւ լուսեղէն ասպետները քոչի առաջ միշտ ընկած՝
 Հեքեաթներ են անվերջ ասում ուխտագնաց խմբերին . . .
 — Ու՞ր են գնում վառ աստղերը երագներով կախար-
 դուած.
 Եարաք նոքա չե՞ն սպասում իրենց անյայտ մուրազին . .
 Ուխտ է գնում քարվանք մեծ անապատով երկնփի —
 Միշտ իրարու հաւատարիմ եւ միշտ յիշար ու արթուն,
 Ուխտաւորներ միտք են անում եւ ընթանում միշտ հե-
 ոուն:
 — Երկիրը մեր ձեռքը բռնած իր մէկուեւոր զաւակի,
 Կախարդական երագ ունի, ուխտ է գնում առյաւէտ —
 Յաւերժական մուրազ ունի, ուխտաւոր է նա սա-
 հուն . . .
 — Լուսընթացը՝ ինն երեխայ իւր փէշերից կախ ընկած,
 Ուղեկիցը՝ վզին գցած վզնոցը հին, — հին պսակ, —
 Սաւառնում է տաս չափահաս որդու հետ:
 Ուխտ են գնում Հրատն, Ատղիկ, Փայլածուն.

Եւ արեւը, փէշտանգը ժիր ու կարմիր,
Ընթանում է, առաջ փաշում փարվանը իւր համար-
ձակ . . .

— Ուխտաւորներ, ե՞րբ կ'հասնէ՞ք ուխտատեղին անա-
նուն . . .

Հազար ու բիւր բեռներ ունի մեր երկիրը ուխտաւոր .

— Քանի՞ տեսակ կենդանիներ, թռչուն եւ բոյս ան-
համար . . .

Զէ՞ որ մարդն էլ ուխտաւոր է, մուրազ ունի դարաւոր,
Աստղերի պէս նա յաւիտեան երազ ունի իր համար . . .

Եւ գնում է փարվանի հետ երկիրը մեր բեռնաւոր,
Հազար տեսակ վերքեր ու ցաւ իւր ուսերին կուտա-
կուած . . .

— Ասէ՛ք, եարար էլ ո՞վ ունի փարվանի մէջ հեռաւոր
Մեր երկրի պէս կեանք ու հոգի՞, մուրազներով կա-
խարդուած . . .

Ե՞րբ կ'հասնի ուխտատեղին փարվանը մեծ, երկնա-
ւոր . . .

1926 .

ԼԳ.

Իմ սեփական բեռները չեն, որ կրում է իմ հոգին .

Իմ անձնական ցաւերը չեն, որ բարձել են իմ նաւին .

Ողջ աշխարհի տառապանքը, միտք ու ցաւ

Լուռ եւ յօժար միշտ կրում է իմ հոգին . . .

Ցաւ են զգում եւ միշտ սգում ծառ ու ծաղիկ եւ բոյսեր,

Դաւ ու կոիւ են գուր անում կենդանիներ, գազաններ .

Փառք ու պատիւ են որոնում մարդիկ ի գուր, անարգել,

— Սաղ աշխարհի ցաւերն ու վիշտ բարձել են միշտ իմ
նաւին . . .

Իմ հոգեւոր նաւի վերայ հազար տեսակ բեռներ կան —
Եւ բոյսերի տաջանքն ու մահ, եւ լոյսերի կիրքն հա-
մայն

Զիրք ու ձգտում, ազնիւ կոիւ միշտ տառապող մարդ-
կութեան .

— Համայնական կեանքը իր մէջ միշտ կրում է իմ հո-
գին . . .

1926 .

ԼԴ.

ԼՈՒՌ ԵՍ ՄԱՍԻՍ.

Հակտիդ կննիո, դէմֆիդ ամպեր,
Լուռ ես Մասիս.

Այդ ի՞նչ մտքեր — անհուն խռիւր,
Կաշկանդել են քեզ Մասիս . . .
Սէգ լեռները, դաշտ եւ արօտ,
Անտառ, հովիտ կանաչ հագած,
Քեզ են օրհնում՝ կամֆիդ կարօտ.
— Դու վիշտ ունիս, լեռների քաջ . . .
Դու տեսնում ես եւ լաւ գիտես —
Սիրտդ մեծ է, հսկայ լեռանց,
— Մենք դարդ ունինք, մեզ էլ քեզ պէս
Ցան է մաշում, ցաւը անանց . . .

Եւ բիւր դարեր իբրեւ գերի՝
Մեր սիրտը ցաւ.

Ծծում ենք սեւ քոյնն աշխարհի
Կեանքը ողբում, լոյսին ծարաւ . . .
Այս դառնութեան սեւ օրերին
Մեր սիրտը պիրկ քար է կտրել.
Բռունցքն ու սուր միշտ մեր գլխին —
Մեր ուղեղն է արեան փոխուել . . .
Դառը դատում, կարօտ նստում.

Սովն ու կարիք, վիշտն ու կրակ
Աշխարհը բիրտ մեզ է բերում . . .

Խոր անցեալի անմահ վկայ՝
Լուռ ես Մասիս.

Սէգ լեռների տէրն ես, Արֆա՛յ,
Մեր սեւ օրը քե՛զ ենք լալիս . . .
Մենք դա՛տ ունենք խոր եւ արդար,
Մենք դարդ ունենք սարի նման.
Այս հորտուքիւնն ու խիտ խաւար
Արդեօ՞ք մի օր վերջ կ'ունենան . . .
Եթէ միշտ է — արշալոյս կայ.
— Մեր հանճարն է այն յօրինել.
Մենք ենք հիւսել, աստուած վկայ,
Կեանքին արե՛ւ, ազա՛տ օրեր . . .

Դէմֆդ մոայլ, ճակատդ սեւ,
Լուռ ես Մասիս.

Մենք մեր դատը գահիդ ներքեւ
Քեզ ենք բերում, եւ տանջահար
Աշխատանքի արեւ երգում. —
— Անվերջ կռիւ լոյսի՛ համար,
Նո՛ր աստուած ենք մենք յօրհնում . . .
Եթերումն է գահդ կանգնած՝
Աստղ ու երկինք՝ ճակտիդ պսակ.
Այս կոյր կեանքում միշտ հալածուած՝

Քա՛ջդ լերանց՝ երկնապսակ —
 Լուռ ես Մասիս .
 Մեր կրծքի տակ ցաւ ու կրակ ,
 Մեր ցաւերը քեզ ենք լալիս . . .
 Մեզ դա՛տ արա՛ արդա՛ր ու խոր
 Եւ խորհուրդը կեանքի մեկնիր . . .
 Ու երկնային կամֆով հզօր
 Մեր սեւ օրին շուտով հասիր . . .

— 52 —

Շուտով բերէ՛ք — ով ինչ ունի .
Ծանր բեռներ ձեր սրտերում կուտակուած .
Բերէ՛ք բարձէ՛ք աննիւթական իմ նաւին .
— Ահա ձեր դէմ կանգնած է նա արժանի՛ —
Եւ փաջաբար մեկնելու է դէպ Աստուած . . .
— Անպարտելի նաւավար է իմ հոգին . . .
Հողմերը թող փող փչեն .
Շանթերը թող շառաչեն —
Մրրիկներին, կայծակին
Օրհասական կռիւների թող կանչեն . . .
Ծովը ներքեւ թող որոտայ դառնագին
Ու բարկանայթ ալեկոծի իւր ջրեր .
— Բայց անխախտ է մտքիս նաւը անվեհեր .
Նա համարձակ բաց է արել իր երազուն առագաստ,
Իւր հրեղէն անիւները ու կայմեր —
— Մրրիկների, կռուի դաշտով նա կ'ընթանայ միշտ
անսաստ . . .
Ծովերի մէջ՝ ահեղ մամբին —
Չախորդութեան սեւ օրերին
Անպարտելի նաւավար է իմ հոգին . . .
Լուսածնունդ եւ հրեղէն իմ նաւը
Զի սարսափում մրրիկներից աշխարհի .

— 53 —

Նա անխափան կատարում է իր երկնային արշարը,
կայծակի պէս սաւառնում է ֆաջարի՝ . . .

— Բերէ՛ք շուտով ձեր սրտերի

Բեռները շատ, ծանր ու հաստ .

Բերէ՛ք դարսէ՛ք աստծու պէս քեւաւորուած իմ նաւին .

Փորձանքների՝ հովերի մէջ՝

Եւ նիւթական հարուածների տակ անվերջ

Նա կ'մեկնի միշտ անխափան եւ անսաստ . . .

— Աստուածագոր նաւավար է իմ հոգին . . .

Կեանքի նամբին մի՛՛ք նահանջի, տարակուսած հոգիներ ,

— Եկէ՛ք նստէ՛ք լուսածնունդ իմ նաւին .

Բերէ՛ք բարձէ՛ք հաստ ու բարակ ձեր բեռներ .

— Ահա շուտով դէպի երկինք նա կ'նախրի անվեհեր . . .

Իսկ երբ հասնի անմահութեան սահմանին —

Նա կ'գտնի յաւերժական նաւահանգիստ մեր կեան-
քին . . .

Թող գա՛ն մարդիկ, քող գայ աշխարհն ու տեսնի .

— Աստծու պէս վսեմ ու ֆաջ նաւավար է իմ հոգին . . .

1926 .

ԼԶ .

ԿՌԻԻ .

Մի ահաւոր գորահաւաք է կատարում երկնքում .

— Ո՞վ է ուզում կռուի հանել անպարտելի զօրքերին .

Ծովն է յուզում իր ջրերը, ծովն է հնչում, մոնչում . . .

— Հակատամարտ է վիթխարի՝ զրահաւոր տարերֆին,
Ու կանչում են կռուի համար մրրիկներին, կայծա-
կին . . .

Սահմանադիրն է երկնային վե՛հ-վերել . . .

Նորան հլու է աշխարհը, լուռ աստղերը եւ արեւ .

Նա է անյագ չար հողմերեն

Պատուէր տալիս, հանդէս բերում,

Կռուի հանում ֆաջ զօրքերին,

Կռուի համար սուր ու սուսեր եւ հրազէնք բաժա-
նում . . .

Ի՞նչպէս է նա հաղորդում իւր պատուէրները աշխար-
հին,

Ի՞նչպէս է միշտ ցրում երկրին բոցապտոյտ մրրիկներ .

Ծովն է յուզում իւր ջրերը ահագին,

Ալիքներն են վազվազում

Եւ շան նման գազազում . . .

Իսկ ամպերի սել շարքերից քափքափում են շէկ շան-
քեր .

— Խե՛ղն երկրին է հարուած տալիս քշնամին . . .

Պայթեց ահա մրրիկն ահեղ ու հզօր .
Հագար ու մի գորագնդեր աղօսում են կռուի դաշտ .
Զօրապետներ փող են փչում ահաւոր . . .
Զար հողմերը մոնչում են վայրենաբար ու անհաշտ —
Ու բաժանում բիւր գօրֆերին գօրամբերֆ ահաւոր . . .
Զօրֆերը խիտ, գարհուրելի գայրացած՝
Վայրենու պէս իրար կոկորդը բռնած —
Վէն են անում — իրենց վէճը դարաւոր . . .
— Ասա՛, վերին սահմանադիր արարիչ .
Ի՞նչ է ուզում այս կռիւը կործանիչ . . .

1926 .

ԼԷ .

ԳՈՐԾԱՐԱՆ .

— Հէ՛յ հագար հագարներ —
Աշխատանք-արելի հերոսներ .
Ձեզ կանչում են հեռուից փարոսներ .
Բա՛ց արէ՛ք գործարանը ահեղ .
Որ իր լոյսը սփռի ամէն տեղ . . .
Թող շարժուի գործարանը կեանքի ու մտքի
Ու կանգնի սուրբ տաճար ճշմարտի՛, գեղեցկի՛ . . .

Բիւր դարեր են անցել այն օրից ,
Երբ չարիքը ծնուեց աշխարհում .
Երբ անմահ գործարանը ծնուեց իր մօրից ,
Որ իր սուրբ ջանքերովն անդադրում
Կեանքի վիշտը իսպա՛ռ խորտակի . . .
Բիւր դարեր է գործել ֆաջարի
Եւ նիւթել մեր կեանքին արելներ ու գարուն .
— Գործարանը մտքի, փրկութեան տիեզերքի —
Յաւիտեան կ'գործի ճշմարիտը անհուն . . .

— Հէ՛յ հագար հագարներ —
Նոր տիեզերք յօրինող
Ճշմարտի ուղիներ որոնող՝

Աշխատանք-արեւի հերոսներ . . .
 Շուտ ելէ՛ք ու բերէ՛ք փայտ ու կիր,
 Քարածուխ, հում նիւթեր անխտիր,
 Քար, արմին ու երկաթ,
 Եւ պղինձ անսպառ, եւ պողպատ,
 Շուտ բերէ՛ք ու լեցրէ՛ք գործարան,
 Հոգու պէս լուսաւոր ձուլարանը, բուրան . . .

— Թրա՛խ, քա՛խ, քրա՛խ . . . չա՛խ, չու՛խ, չախ . . .
 Քաջ բանուոր, զսապանակը բռնիր,
 Մեծ անիւն ու շարժիչը շարժի՛ր աջ ու ձախ . . .
 Կայծակի պէս հզօր խթանները նետիր,
 Մի՛շտ մտփիդ պէս արագ, համարձակ
 Տա՛ր ու բե՛ր այդ հզօր պտտակ . . .
 Թող անթիւ կոճակները շարժուին . . .
 Եւ թռիմախն ու թռիսիչ,
 Հնչարանը, սոնակն ու կտրիչ
 Թող շարժուին, կայծակի պէս հզօր գալարուին . . .
 Բիւրաւոր մասնիկներ աջ ու ձախ
 Թող պարեն, հեծկլտան անխարդախ . . .

— Մի՛ կանգնի՛ր դու ուստա՛, ժի՛ր վարպետ.
 Սաստկացիր վեհ շարժում պողպատի ու մտփի . . .
 Շուտ հալէ՛ք ու ձուլէ՛ք հում նիւթերը յաւէ՛տ
 Ու կանգնէ՛ք նոր գարուն տիեզերքի . . .
 Թող եռայ կրակուած մետաղի սուրբ զանգուած,
 — Միայն նա կ'ստեղծի ձեզ համար նոր աստուած . . .

— Երագուն եւ անհուն տիեզերքի
 Լոյսերովը յդի յաղթական գործարան.
 Թող անմահ պտտուին անիւներդ մտփի
 Եւ նիւթեն նոր աշխարհ բերկրութեան . . .

— Թրա՛խ, քա՛խ, քրա՛խ, չա՛խ, չո՛ւխ, չա՛խ . . .
 Բանուորներ՝ գարկեցէ՛ք միշտ անվախ,
 Գործարանը փաղցած չ'մնայ —
 Արեւներ՝ ստեղծի անխնայ . . .

Դո՛ւ բանուոր ու վարպետ — մի կանգնիր,
 Քաջաբար ու անյաղթ ֆո ջանքերը լարիր . . .
 Շուտ ելէ՛ք եւ անտառն ու ծովերը արէ՛ք տեղահան,
 Սեւ ժայռերն ու լեռները պոկէ՛ք արմատից,
 Վե՛ր առէ՛ք ոյժն ու շունչը հողմից,
 Հառագայթը եւ լոյսն արեւից —
 — Վե՛ր առէ՛ք ու լեցրէ՛ք գործարան,
 Որ երկրի երեսին
 Նա գործի՛ անմեկին —
 Մեր գնացքը դէպ վեր՛, դէպ երկինքը տանի
 Բնութեան, աստղերին մեզ անմահ տէ՛ր անի . . .

— Ի՞նչ ես գուր գալարում, ա՛յ երկիր,
 Ու շրջում միշտ անյայտ ուղիներ.
 Դո՛ւ, լուսին, մեր երկրի երեսին
 Ի՞նչ ես գուր ֆո ձանձրոյթը ցանում . . .
 Արեւներ՝ ու աստղեր անհամար —

— Յե՛տ ֆաշուէֆ, բա՛ց արէֆ մեր ուղին, խա՛րար-
դա՛ր . . .

Մեծ մտֆի գործարանն է գալիս,

Ձեր գնացքը նա կարող է շեղել .

Եւ լոյսով ողջ աշխարհն հեղեղել . . .

— Ե՛լ վարպետ, յաղթական ֆո ձեռքով

Մեր զանգերը ֆաշիր,

Կեանքի երգը հնչի՛ր . . .

Արեւին, աստղերին անխռով

Հրեղէն մեր գնացքը յայտնիր . . .

Ե՛լ վարպետ. պողպատից կրակուած

Մեր զանգերը ֆաշի՛ր ահաւոր,

Թող աստղերը լսեն ճշմարիտը հզօր .

Որ մեր միտքը նիւթից յօրինում է աստուած . . .

Ձեր կրակն յաւիտեան թող վառուի .

Ու կանչի բնութիւնը կռուի . . .

Թող բոցերը կարմիր ու կապոյտ

Երկնքին միշտ նետեն մտֆի լոյ՛սն ու զայրոյ՛թ . . .

— Անխափան գործարան նոր կեանքի,

Մեծ արգանդ լոյսերի, հանճարի .

Միշտ հազար հազարներ՝

Քաջարի բանուորներ

Քո շնչով են շնչում .

Քո հանճարն են կանչում,

Քո փուֆսերն են փչում,

Որ վառեն եւ այրեն կեանքի սուտն ու չարիք,

Եւ նիւթեն նո՛ր աշխարհ, նոր արեւ ու բարիք . . .

— Ջարկեցէֆ բանուորներ ժրագան

Ու վառէ՛ք ճշմարտի՛ գործարան . . .

Քաջ վարպետ. յաւիտեան ֆո զանգերը ֆաշի՛ր,

Աստղերին, արեւին նոր կեանքի դու կանչիր . . .

— Հէ՛յ հազար հազարներ,

Աշխատանք — արեւի հերոսներ,

Ձեզ կանչում են հեռուից փարոսներ . . .

1925 .

ԻՄ ԳԻՐՔԸ .

Դեռ շատ անգամ յետ կ'դառնամ,
Անցած օրիս գիրքը թերթե՛մ ու կարդամ .
Տեսիլներով առատ ու լի եւ լոյսերով կենդանի՝
Սրտիս գիրքը երազի պէս անվերջ թերթեմ ու կար-
դամ . . .

Դեռ շատ անգամ յետ կ'դառնամ ես մօլոր,
Որ լաւ յիշեմ կեանքիս անցած ուղիները անսովոր .
— Ոսկի կազմով կեանքիս գիրքը կարդամ ու լամ . . .
— Ո՞վ է եարաք իմ սուրբ գրքի բանաստեղծը գօրաւոր . .

Նա հորտ ու խորք սեւ գրերով չի գրուած .
Հազար յիմար սուտ-օղորթով չի լեցուած . . .
Ոչ գիտունն է գրի առել, ոչ իմաստուն,
Նրա միտքը չեն հասկանայ ոչ աշխարհը, ոչ աւ-
տուած . . .

Վարձկանների մատները չեն շարել գրքիս սուրբ տողեր,
Ոչ էլ տգէտ կազմարարն է գուգել նորա նուրբ կողեր .
Անփոյթ եւ սուտ գրչակները չեն յօրինել իմ գարուն .
— Ո՞վ է եարաք գրի առել հոգուս խաղերն ու շողեր . . .

Ո՞վ կարօտ է, թող բաց անի սրտիս գիրքը կենդանի,
Թող բա՛ց անի, կեանքը տեսնի արժանի՝ . . .
Աննիւթական իմ գրքի մէջ նկարուած է ողջ աշխարհ .

— Իմ գրքից դուրս չ'կայ ոչինչ . ոչ լաւ ու վատ, ոչ
խաւար . . .

Ով որ կ'ուզի, թող բաց անի գիրքս կերտող, ոսկետող .
Թող կարդայ միշտ կեանքը համայն, չարն ու բարին,
աստղ ու շող ,

Գարուն ու սէր, փորձանք ու մահ նենգամիտ —

— Կարդա՛յ, տեսնի՛ անմահութիւն ճշմարիտ . . .

Իմ գրքի մէջ՝ սրտիս ոսկի՛ կամարում
Անդրաշխարհը իւր դիւթական գօրահանդէսն է անում .
Գրքիս մէջ է միշտ կատարում կեանքի ահեղ դա-
տաստան . . .

— Ո՞վ է վառել արեւները սրտիս խորունկ էջերում . . .
Հազար ու մի հարտարախօս եւ իմաստուն անուանի
Թող գան կարդան երկնքի պէս պայծառ գիրքը իմ
սրտի .

Թող բիւր տարի քրտինք թափեն ու մեկնեն,
— Նորա անմահ, յաւերժական աղբիւրներից չե՛ն հաս-
նի . . .

Երագաշէն, պատկերագօր հոգի է նա երկնատես .
Տեսիլները, անցքերը վառ շարուած են մէջ լոյսի պէս . .
Քանի՛ քանի ծանօթ, կարօտ, դուշման ու եադ եւ ընկեր
Ճի՛շտ, կենդանի՛ նայում են ինձ տխրատես .
Եւ կարդալիս ոսկի՛ գրքիս էջերը սուրբ, անստուեր
Տեսնում եմ միշտ եւ յետ կանչում իմ օրերը լոյսի
պէս . . .

Յետ եմ կանչում անցած կեանքիս տերեւները հողմա-
հար .

— Ինչո՞ւ այդպէս շուտով անցա՞մ, անյետացա՞մ անգիւ-
ման . . .

Ու՛ր եմ հիմայ իմ մտերիմ ընկերները ցիրուցան . . .

Ես ամէն օր բաց եմ անում սրտիս գիրքը ոսկետառ

Ու կարդում եմ կարօտագին սուրբ էջերը մեղմաբար . . .

— Ես շատ անգամ լաց եմ անում իմ սուրբ գիրքը թեր-
թելիս .

Լաց եմ անում տխուր եւ գուր իմ օրերը յիշելիս . . .

— Ո՞վ է եարար սրտիս գիրքը հիւսել անհո՛ւն, երկնա-
շա՛ր . . .

1926 .

ԼԹ .

ԶՕՐԱՀԱՆԴԵՍ .

Էսօր հգօր գօրահանդէս է կանչուած .

Մարդը կրկին ցոյցը իր հին կատարում է կռուարար .

Զօրամասեր, գէնֆ ու գրահ անհամար —

Աշխարհային իշխանութեան հիմքերն են սուտ եւ յիմար .

Ինչ է ուզում մարդը անմիտ իր աղմուկով անաս-
տուած . . .

Ինչո՞ւ է իր կարողութեան նշանները ցոյց տալիս .

Ինչի՞նչ եմ պէտք հազարաւոր զօրքերը հին, արնախում,

Որ սովոր են աւերմունքի եղբայրասպան գործերում,

Որ խեղճերին բերում են միշտ մահ ու կրակ եւ գու-
լում . . .

— Իր արիւնով միշտ արբեցած՝ մարդը՝ ո՞ւր է դուրս
գալիս . . .

Խորք է եւ ճորտ ինձ համար այդ իրարանցումը մթին .

Ես գարշում եմ գուր եւ անհաշտ արարմունքի աղմու-
կից .

Միշտ խորշում եմ ես նիւթապաշտ զինուած կեանքի
ժխորից

Ու կանչում եմ գօրահանդէս իմ հոգեւոր զօրքերից . . .

— Զօրահանդէս իմ մտքերին, աներեւոյթ, երկնային . . .

Զօրքերը իմ յաւերժակա՛ն, քեւաւոր՝

Հագար ու բիւր սուր շարժումով կանգնած են միշտ իմ
դիմաց .

Հագար ու բիւր գալարումով, երկնատարա՛ծ, նուրբ ու
փա՛ղ .

Մտքերը իմ արշաւում են միշտ առաջ, —

Որ պաշարեն ու նուաճեն տիեզերքը այս ահաւար . . .

Անմահական իմ զօրքերը չունին զէնքեր նիւթական .

Երազական իմ գնդերը չունին վառօդ եւ քնդանօթ ար-
նախում . . .

Անդրաշխարհի յաւերժական գարուններին միշտ կա-
րօ՛տ՝

Զօրքերը իմ չեն տարածում մահ ու կրակ եւ գուլում,
Զեն որոնում շահ ու շուկայ, կեղծիք եւ սուտ ու մըր-
ցում . . .

Արեւներին եւ աստղերին միշտ ծանօթ

Իմ զօրքերը վարում են միշտ նակատամարտ յաղթա-
կան

Ես չեմ նայում ձեր սուտ, խախտու զօրքերին .

Ինձ չեն յուզում գնդերն ու վաշտ աշխարհային ոյժերի,
Որ յածում են եւ միշտ գործում բռունցքի տակ տէրերի,
Եւ փորձում են իշխել անմիտ անցուդարձին ներկայի . . .
Ես կ'կանչեմ զօրահանդէս իմ հոգեւոր գնդերին . . .

Իմ զօրքերի բանակները լոյսից աւել սրընթաց,

Իմ գնդերի ֆանակները յօրինում են ինձ աստուած, —

Եւ կախար՛դում անցքերը մութ մեր անցեալի եւ ներ-
կան,

Ու քափանցում դեռ չ'ծնուած ապագան . . .

Կայծակի պէս գալարում են տիեզերքը մեծ, անսահ-
ման,

— Իմ մտքերը արշաւում են իբրեւ հոգի՛ եւ աս-
տուած . . .

Սրտիս համար խորք են իսպառ զօրքերը չար աշխարհի .

Իսկ հոգեւոր զօրքերը իմ աստուածաբար, փաշարի՛

Ման են գալիս, կեանք են տալիս նրբաթեւ . . .

Ես կ'կանչեմ զօրահանդէս իմ զօրքերին աներեւ .

— Թող արշաւեն եւ նուաճեն տիեզերքը մեծ եւ արե՛ւ . .

1926 .

Լուռ գնում եմ իմ համբէն —
Անյայտ ու մութ իմ համբէն.
— Ի՞նչ պիտ ասեն իմ մասին,
Երբ վերջանայ իմ համբէն . . .

Աստղերն էլի կ'շողան,
Արեւն էլի կ'փայլի.
Ծառն ու ծաղիկ կ'մնան,
— Կ'վերանայ իմ համբէն . . .

Ի՞նչ կարող եմ, որ տանեմ
Վայելֆներից աշխարհի . . .
Իմ մուրազին կ'հասնե՞մ,
Երբ վերջանայ իմ համբէն . . .

— Թշնամիներ, եադ ու ծանօթ,
Եկե՛ք, սիրտս ձեզ բանամ . . .
Գէթ չ'մնամ ձեզ կարօտ,
Երբ վերջանայ իմ համբէն . . .

1925.

Երբ մահը գայ եւ ինձ տանի
Իր սեւ տունը յաւիտեան.
Երբ անիւնիս վերայ կանգնի
Հողակոյտ մի աննշան, —
— Ծանօթ, ընկեր, եկե՛ք այցի
Իմ լուրքեան խոր տաճարին.
Եկե՛ք, բայց ոչ ողբի, լացի,
Ողբ չի՛ սիրում մահը մթին . . .
Եկե՛ք այցի. Բայց իմ վերել
Ոչ հառաչանք, ոչ խունկ լինի.
— Միայն պատմե՛ք. արդեօ՞ք արել,
Եւ գորախումբը աստղերի
Փայլո՞ւմ են վառ, ինչպէս առաջ . . .
Փակ դռնիցս ինձ լուր տուէ՛ք.
Կեանքը գտա՞ւ իր սուրբ ուղին . . .
Կենդանարար ինձ լուր բերէ՛ք,
Խարդը հասա՞ւ իր կոչումին . . .
— Եկե՛ք այցի . . . իսկ ես այնտեղ,
Մահու տխուր կամարի տակ՝
Գէթ իմանամ, թէ կայ անմեղ
Եւ հոգեւոր կե՛անք մի յստակ,
Միայն լսեմ, թէ այս աշխարհ
Էլ էնպէս չէ, ինչպէս որ կար —
Դագաղիս մէջ՝ անհուն ոյժով
Կ'խորտակեմ մահուան դռներ,
Որ գա՛մ տեսնե՛մ կեանքն անխռով,
Գարուն արե՛ւ, նո՛ր կեանք ու սէր . . .

1922.

ԽԲ.

Ամպ ու գամպ է իմ չորս կողմ,
Լոյսն ու արեւ ֆողարկուած.
— Ո՞վ է կանչում.
— Հողմն է փչում,
Խենթ ու խաւար, անմիտ հողմ . . .

Ամպ ու գամպ է իմ հոգին,
Սիրոյ լոյսերն հալածուած . . .
Ո՞վ է ճչում.
— Ու՞ր է կանչում
Անյայտ ուղին դառնագին . . .

Ամպ ու գամպ է իմ չորս կողմ.
Զ'կան խորհուրդ եւ աստուած . . .
Ո՞ւմ սիրտն է գուր
Ողբում տխու՛ր
Օր ու գիշեր անգութ հողմ . . .

1926.

ԽԳ.

Կեանքս իգուր, շէնքս տխուր մի տուն էր.
Որ նիւթեցին կոպիտ ու բիրտ վարպետներ . . .
Հիմքը աւագ, շէնքը պակաս մի տուն էր,
— Զուր շարեցին անտաշ ու ֆաշ պարիսպներ . . .

Եւ պատերիս աղիւսները թարս ու շիտակ շարուեցան,
Գերաններս եւ սիւններս դրին սխա՛լ ու խախտ՛ւտ.
Վատ շինեցին օթեւանիս դուռն ու կտուր, պատուհան,
Վարպետներս անուս էին, շէնքս դրին շա՛տ անփայթ . .

Հիմքս աւագ, ձեռքս պակաս, կեանքս եղաւ պատուհաս.
Փորձանքն եկաւ, յորձանք տուաւ, զարկեց պատին,
կտուրին . . .

Սեւաւն առաւ, հիմքս տարաւ, շէնքս աւեր ու վնաս . . .
— Իմ դռները, պարիսպները ֆանդեց, տարա՛ւ հարա-
մին . . .

1926.

ԽԴ.

Գարուն է վառ ու մայիս.
Աստղերն ելան երկնփիս.
Կարօտն առէ՛ք արեւից,
— Ի՞նչ է՛ք նստել ու լալիս . . .

Կանաչ կարմիր ես, պայծա՛ր,
Կայտառ ու ժիր ես, արդա՛ր . . .
— Մեզ չես թողնի սգալից,
Մեր աստուածն ես, մեր հանճար . . .

Վարդն ու տերեւ եւ թռչուն
Երգում են սէր ու ողջո՛յն.
— Ո՞վ չ'գիտի. էն գլխից
Անմահական է գարուն . . .

Երկինքն է քեզ թեւ տուել,
Որ կեա՛նք շողաս, լոյս ու սէր.
— Անդրաշխարհից, եթերից
Մեր սրտերին ողջո՛յն բեր . . .

Բարով գարուն ու մայիս.
Սէր կ'շողաս աստղերիս.
— Արեւներից, եթերից
Ինչո՞ւ յաճախ չես գալիս . . .

1926.

ԽԵ.

Կեանքս ծառ էր մի անպտուղ
— Չո՛ր աւագոտ հողի վերայ.
Իսկ իմ օրը՝ տերեւ ու ճիւղ
Միշտ երերուն ծառի վերայ . . .
Խեղն իմ հոգին՝ արմատ ու բուն՝
Խաւար օտար հողի մէջ . . .
Վրայ հասաւ դժգոյն աշուն,
Քամին փչեց ինձ վերայ . . .

Տերեւ ու ճիւղ միշտ հողմահար՝
Մէկ մէկ ընկան ու չորացան.
Արմատներս չո՛ր, անդադար
Որդեր կերան՝ փռչիացան . . .
— Աւաղ, բունս մերկ ու մեճակ
Ընկած է գուր փանապարհին,
Եւ թշնամու հարուածի տակ
Վա՛յ է տալիս իւր գլխին . . .

1926.

ԽԶ .

ԸՆԿԵՐՆԵՐ .

Չունիմ ընկեր ու մտերիմ .
Չունիմ ոչ մի հաւատարիմ .
Շատերին ես գուր սիրեցի ,
Սիրտս սիրոյն նուիրեցի . . .
Բայց ուրացան ու հեռացան ,
Եւ միշտ օտա՛ր՝ ինձ մոռացան . . .
Հիմայ տրտում իմ անկիւնում
Խեղճ ու կրակ միտք եմ անում . —
— Էս բովանդակ երկնքի տակ
Միայն երկու սիրուն էակ
Ունիմ անվերջ հաւատարիմ .
Խեղճ իմ կատուն , շնիկը իմ ,
Որ միշտ նստած ինձ են նայում
Եւ մտքերիս են հետեւում . . .
— Արի անգին նախշուն իմ շուն ,
Արի եւ դո՛ւ սիրուն կատու .
Ջերմ ընկերներ լուռ ու վսեմ ,
Եկէ՛ք ձեզ մի՛շտ սրտիս գգեմ ,
Ու ցաւերս անվերջ պատմեմ . . .
Ձեր այդ խոնարհ աչքերի մէջ
Պայծառ սէր է վառում անշէջ . . .

Դուք տեսնում է՛ք եւ գիտէ՛ք միշտ
Ապրումներն իմ , ցաւս ու վիշտ . . .

Ջան ընկերներ իմ անմեկին .
Թողէ՛ք , սեղմե՛մ ձեզ իմ կրծքին . . .
Ես ձեզ պատմեմ իմ օրերից ,
Դուք ինձ ասէ՛ք ձեր խոհերից . . .
Բացի ձեզնից ոչ ոք ունիմ
Ես մտերի՛մ , հաւատարիմ . . .
— Ջա՛ն ընկերներ խոնա՛րհ , արդա՛ր .
Սիրտս բաց է միշտ ձեզ համար . . .

1922 .

ԽԵ .

ԵՐԳԻԶՆԵՐ .

Հոգու վիշտը երգող երգիչներ .
Որ նիւթել էֆ ցնորֆ ու աստուած .
Դու՛ք մեր յոյսը կերտող կտրիչներ ,
Որ կոչում էֆ ասողերը մարած . . .
— Ու՛ր է ձեր երկնային վեհ ֆնար ,
Ու՛ր է ձեր սուրբ աւիւնն ու կրակ .
Զարկեցէ՛ք լարերին յաղթաբար ,
— Թող հնչեն անմահ երգն ու դաշնակ . . .
Մեր հոգին դառնագին փոթորիկ ,
Մեր սրտերը դժոխֆ են արեան .
Մեր գլխին թող պայթին սուր , մրրիկ , —
— Մեր կռիւն է հզօր , անասան . . .
Թող փշրին նորտութեան կապանքներ .
Դէպ երկին՛ք սլացէֆ , դէպ արեւ . . .
— Երգիչներ , կեանքի լոյս աստուածներ ,
Երգէ՛ք երգ վայրենի՛ , յարատեւ . . .
Երբ մեզ բանտը , ոնիրն էր մաշում ,
Զեր ֆնարը երգեց մեզ գարուն .
Երբ խաւարը մեզի դէպի մահն էր ֆշում ,
Զեր նոր խօսքը հնչե՛ց վեհութիւն . . .
— Երգիչնե՛ր , զարկեցէֆ ֆնարին ,
Եւ մեր մէջ զարթեցրէֆ աստուածներ .
Մեր բախտին , մեր սրտին դառնագին
Հնչեցէ՛ք երկնային նուագներ . . .

1916 .

ԽԸ .

ԻՄ ՄՏՔԵՐԸ .

Ին՞չ էֆ խօսում , ո՞ւր էֆ հոսում եւ ին՞՞ք ֆաշում , ա՛յ
անսովոր հալածական իմ մտքեր . . .
Ին՞չ էֆ մաշում , ո՞ւր էֆ ֆշում խոր ու մոլոր իմ ջան-
քերը , իմ երգեր . . .
Ինչպէս վայրի անտառի մէջ նոր պատահած արիւնար-
բու թշնամի ,
Ին՞չ էֆ իգուր այդպէս տանջում ին՞՞ք շղթայուած , կար-
ծես կոպիտ հարամի . . .
Հերիֆ չէ՞ որ ին՞՞ք գերեցիֆ իմ մանկութեան ազատ ու
վառ օրերին .
Հերիֆ չէ՞ որ ին՞՞ք բերեցիֆ էսֆան դաժա՛ն , շղթայա-
կապ սեւ օրին . . .
Երբեմն ուրախ ու թեւաւոր , երազներով միշտ կա-
խարդուն ու անհուն
Տանում էիֆ ին՞՞ք հեռուներ՝ դէպ անխռով յաւերժական
սուրբ գարուն . . .
Երբեմն արի՛ , աստուածային լոյսով օժտուած , ցնո-
րամիտ ու խիզախ —
Տանում էիֆ դէպի երկինֆ , դէպի աստուած —
Ու յաղթական երգեր հնչում անխարդախ . . .
Իսկ երբեմն էլ էս աշխարհի հոգսերը սեւ — եւ ժխորի
անմիտ ծովն

Լեցնում էին իմ խեղճ հոգին՝ թռչլ, անարեւ խոր ցաւե-
 րով ու թռչնով . . .
 Եւ ձեր ձեռքին շղթայակալ ես մի գործիք — օր ու
 արեւ չ'տեսայ . . .
 Մարդիկ — չարիք, իսկ իմ կեանքը դառն ու կարիք,
 իմ մուրազին չ'հասա՛յ . . .
 Իմ մանկութեան եռանդն ու սէր իգուր կորան, երա-
 զի՛ պէս հեռացա՛ն . . .
 Հիմայ ունայն եւ անապատ իմ այս ցամքին ոչ մի խոս-
 տում էլ չ'կայ . . .
 Ջահէլ կեանքիս արեւն ու յոյս մեռա՛ն, անցա՛ն. —
 երկին՛ք աստուած էլ չ'կայ . . .
 Ի՞նչ էք յուզում, ո՞ւր էք սուզում իմ աւերակ մոռյլ
 հոգու խորքերում . . .
 — Զո՛ւր էք մաշում, ո՞ւր էք փաշում արագ-անյագ,
 — լոյսեր չ'կան իմ կեանքում . . .

1922.

ԽԹ.

Ինչպէս թշնամի անհամար գորքեր —
 Մէկ մէկուց ահեղ,
 Մէկ մէկուց հզօր,
 Գալի՛ս են ալիք, լալի՛ս են ալիք,
 Նետում են ափին . . . սուլում է փամին . . .
 Թշնամու ձեռքից պոկում են դիրքեր,
 Զարկում են ուժեղ,
 Զայնում ահաւոր . . .
 — Ո՞ւր է, որ չ'կան կայծակն ու մրրիկ . . .
 Ծովն է աղմկում ագահ, փրփրալից,
 Ալեգարդ գանգուր
 Թափափում դէս-դէն.
 Սուլում է փամին, պայթում է մրրիկ,
 Տարերք բնութեան պոկում իրարից . . .
 Կռին ընդհանուր
 Կեանքի խորքերէն
 Շաչում է, գոչում, թռչում դէպ երկինք . . .

1920.

Վերցնեմ իմ ֆնար, ընկնեմ սարէ սար,
 Զարնեմ լարերին, երգեմ տխրագին . . .
 Արեւն ու աստղեր եւ երկնակամար
 Կախարդուած՝ լսեն իմ հզօր երգին . . .
 Քնարը ձեռիս՝ վշտալի հոգիս,
 Աստուած որոնե՛մ արարիչ, անհուն . . .
 — Զարնեմ ու փշրեմ կապանքը կեանքիս,
 Եւ իմ մէջ պահեմ արեւն ու գարուն . . .

Յաւիտեան շրջեմ հեռու երկիրներ.
 — Ընկնեմ ձեր յետեւ, Աստղունք ու երկիր.
 Յաւիտ որոնե՛մ մեռակ, անընկեր,
 Մինչեւ որ գտնեմ իդօս մտացիր . . .
 Իսկ եթէ արեւն ինձ լոյսեր չ'տայ,
 Ծովը եւ լեռներ մամբայ չ'բանան.
 — Թէ աստղերն ասեն. մենք քեզ հետ չե՛նք գայ, —
 Եւ գլխիս թափեն փորձանքը դաժան . . .
 — Կ'թռչիմ վերեւ հպա՛րտ եւ արի՛.
 Սրտիս ջահերը կ'այրեմ, կ'վառեմ,
 Առանց արեւի, առանց աստղերի
 Մտքիս լոյսերով Աստուած կ'գտնեմ . . .

1921.

Հախրե՛մ հեռուն, ծովը անհուն —
 Նաւակիս մէջ համարձակ.
 Միտքս ինձ հետ, սիրտս գարուն՝
 Վերեւ երկի՛նք կապուտակ . . .

Նաւս հեռո՛ւ ինձ կ'տանի —
 Ծովի հզօր պայքարում . . .
 Միտքս երկի՛նք ինձ կ'հանի,
 Հոգիս մեռա՛կ մեծ կուում . . .

Պողպատի պէս ձեռքեր ունիմ,
 Կայծակն ու շանթ սրտիս մէջ . . .
 — Տա՛ր ինձ նաւակ հաւատարիմ —
 Դէպ հեռունները անվերջ . . .

Աշխարհը լա՛յն, արեւ անմեռ,
 Տիեզե՛րքն է ինձ ողջունում.
 — Յաւերժութիւնն ու նուրբ եթեր
 Նայում են ինձ ու ժպտում . . .

1927.

Երգեր ունիմ, զօրքեր չունիմ.
 — Ո՞ւր է, բերե՛ք իմ սրտակից
 Զունգուրն ու սագ,
 Որ միշտ հնչեմ, աստղեր կանչեմ խո՛ր երկնփից
 Ատլաս ու խաս . . .
 Լոյսեր ունիմ, բայց սէր չունիմ.
 — Ինչո՞ւ կորան միտքն ու երագ . . .
 Ո՞վ էր ասաց. լոյս արելից եւ աստղերից
 Քեզ չի՛ մնայ ոչ մի մաս . . .
 Աշխարհն էսպէս շէն կ'մնայ,
 Շէ՛ն ու շֆեղ եւ պայծառ.
 Բայց իմ ճամբին եւ ինձ համար
 Զի՛ վերանայ եւ չի՛ փոխուի ոչ մի մագ . . .
 Կ'ուզես եղի՛ր մեծ ու հաննար,
 Թող ամէն տեղ երկրպագեն քեզ անվերջ,
 Լուսապայծառ արեւ դարձի՛ր կեանքի համար,
 Եւ աշխարհի խորհուրդները իմացի՛ր . . .
 Կ'ուզես եղի՛ր աշխարհակալ, հզօր եւ ժիր,
 — Բայց աշխարհը ինչպէս որ կար,
 Միշտ էնպէ՛ս էլ կ'մնայ . . .
 Մարդու համար, կեանքի համար անգուք է նա,
 — Մեր սրտերին միշտ եղել է եւ կ'լինի անխնայ . . .

Ապրի՛ր միշտ ժի՛ր, պայծառ ու լի,
 Միշտ լուսաւոր, անպակա՛ւ.
 Կեանքդ անվե՛րջ թող զարդարեն զարուն եւ սէր,
 Զառ ու գոհար, ատլաս ու խաս.
 Նիստուկացդ թող լինի
 Արփայակա՛ն, անուանի՛,
 — Յնորքներդ աստուածային ու անհաս.
 Կարող եղի՛ր ու փառարի՛ . . . Բայց էստեղ,
 Էս աշխարհում դու չես կարող նոր յօրինել
 Գէթ մի հիւլէ՛, մի աւագ.
 — Էս աշխարհից, շէն աշխարհից
 Քեզ չի մնայ ոչ մի մագ . . .

Ինչպէս հազար հազարները եկա՛ն, անցա՛ն.
 — Անցա՛ն, կորա՛ն անյայտ, իգուր.
 Նոքա անվերջ երգ ու վերփո՛վ կեա՛նք ասպրեցան,
 Արեւներին, զարուններին
 Զուր հասնելու ջա՛նք ունեցան . . .
 Բայց հեռացա՛ն անհետ, եւ լուռ,
 — Դու էլ կ'անցնես զուր, անմա՛ւ.
 Էս աշխարհից, նոխ աշխարհից
 Քեզ չի՛ մնայ ոչ մի մագ . . .

Երգեր ունիմ, բերքեր չունիմ.
 Ո՞ւր է, բերե՛ք իմ սրտակից
 Զունգուրն ու սագ,

Որ միշտ հնչեմ, աստղեր կանչեմ խոր երկնքից
Ատլաս ու խաս . . .
Լոյսեր ունիմ, բայց սէր չունիմ,
Ինչո՞ւ կորան սէր ու երազ . . .
Ո՞ւր է, բերէ՞ք չունգուրն ու սազ,
Երգեմ երկինք, լոյս ու արեւ, աստղերն անհաս . . .

1926.

ԾԳ.

ՀԱՐՍԱՆԻՔ ԳՆԱՆՔ.

Իմ հզօր մտքեր, իմ լոյս երազներ
Երկնային բաղձանք, խնդութիւն ու սէր
Զարթնէ՞ք խմբովին, ելէ՞ք անհամար,
Ու փարուէ՞ք իրար ջերմ ու խանդավառ . . .
— Զեգ հետ անմեկին գործի եմ գնում,
Վեհ-վեր քեւերով երկինք սլանում . . .

Գարունն է ծաղկել հազար ժպիտով.
Զմրուխտ է հագել հազար քեւերով . . .
Երկիրը զուգուած դէմքով դիւքական
Իր հարսանիքը տօնում է գարնան . . .
— Մտքեր իմ անհուն, զարթնեցէ՛ք, խօսեմք,
Հարսանի՛ք գնանք ու երգե՛ք լսեմք . . .

Հազար գոյներով վառվում է արեւ,
Խորին խորհրդով փայլում են աստղեր.
Կանգնած են լեռներ վիթխարի՛ եւ լուռ,
Իբրեւ խաչեղբայր ու ժիր փեսաւէր,
Որ շուտ ողջունեն գարնան հարսանիք,
Սիրոյ, լոյսերի բերկրա՛նքն ու ծաղիկ . . .

Զուգուած են պայծառ անտառ ու հովիտ,
Խնկաբոյր դաշտեր բերկրանք են շողում.

Նետում է ծովը ժպիտ, մարգարիտ,
Անասուն ու բոյս նոր կեանք են ապրում, —
Որ յաւերժական տօներն հարսանիք,
Երկնային փեսան տօնում է գատիկ . . .

— Է՛յ հօր մտքեր, իմ խոր երազներ,
Պայծառ մանկութեան իմ ցնորք ու սէր.
Յե՛տ եկէ՛ք շուտով, զարթնէ՛ք անհամար,
Գնա՛նք բնութեան հարսանիքը վառ . . .
— Հասնենք խնոյքին այս անմահական
Որ մի՛շտ տօնում է երկնքի փեսան . . .

1921.

ԾԳ.

Մարդի՛կ, ունի՛ք շա՛տ բարք ու վարք, օրէնք ու դա՛տ,
դատաստա՛ն.

Յանցանքն ու կիրք ձեզ բերում են ցա՛ւ ու կրակ եւ սեւ
բանտ . . .

Բայց առաւել չար օրէնքներ կան իմ սրտում անսա-
սան, —

Որ տալիս են արարքներին փա՛ռք եւ պատիւ, ու զար-
գա՛նդ . . .

Մարդի՛կ, ունի՛ք հազար տեսակ կարգ ու կանոն, խըղճ-
մտա՛նք.

Որ շղթայած տանում են ձեզ դէպ հեռո՛ւները պայ-
ծառ . . .

— Բայց աւելի զարհուրելի կարգ ու կանոն եւ կապանք
կա՛ն իմ սրտում եւ տանում են դէպի երկին՛քը ար-
դար . . .

Եթէ մի օր անհետանան սրտիս բանտը, եւ շղթաներ
չարաչար,

Իսկ լուսաւո՛ր իմ հոգու մէջ էլ չ'մնան կիրք ու կռիւ,
դատաստա՛ն.

Երբ ես հոգով լինիմ ազատ եւ լոյսի՛ պէս կատարեալ, —

— Գիտցե՛ք, որ միշտ կ'տապալուին կապանքը ձեր եւ
պատուհասն անարժա՛ն . . .

1927.

Լոյսի պէս լաւատես ձեզ գարուն եմ բերում,
 Երգերով, զօրֆերով ես արին եմ գրում.
 Իմ սրտի սուրբ արիւնն է այդպէս միշտ խօսում,
 — Ձեզ համար նա անմար գարնան երգ է ասում . . .

Իմ սրտում մի տրտում ես աղբիւր եմ լսում,
 — Իմ բերդում անդադրում անմար հո՛ւր է հոսում . . .
 — Իսկ աստղերն ու արեւը ինձ հարց են տալիս.
 — Էդ աղբիւրը եւ հուրը ինչե՞ր են ասում . . .

Ես անվերջ սրտիս մէջ արտ արօտ եմ վարել.
 Երկնաէջ արտիս մէջ բիւր սերմեր եմ ցանել . . .
 — Իսկ աստղերն ու արեւը ինձ հարց են տալիս.
 — Արդե՞օք շուտ կ'հասնին քո հունձերն ու բերքեր . . .

Կ'հեծնեմ ես նժոյգը մտփս,
 Ու կ'անցնեմ ամբոցները բերդիս —
 Պաշտպանե՛մ սահմանները արտիս . . .
 Որ սրտիս հուր աղբիւրը հասնեմ,

Իմ արտի վեհ բերքերը տեսնեմ . . .
 Որ հեռու աստղերին, արեւին
 Իմ արտի երկնային բերքերից
 Աննման ծաղկեփունջս նետեն . . .

1926.

Ո՞ր երկրից եմ եկել եւ ի՞նչպէս,
 Ո՞ւր կ'երթամ մեն-մենակ ու այսպէս, — չ'գիտեմ . . .
 Իմ յետեւը խաւար, իմ առջեւը անյայտ՝
 Մի արդար փանապարհ կ'գտնե՞մ . . . — չ'գիտեմ . . .
 Ասացին, տիեզերքով ես գնում,
 Արեւի՛, լուսնի քով ես գնում.
 Աշխարհին՝ ճշմարտի՛ վեհութեան
 Լուսաւոր ճրագներ վառելու
 — Անդրաշխարհ — երկնքով ես գնում . . .

Մենակ չեմ էս փամբին դառնագին.
 Շատ շատերն են անցել այս ուղին . . .
 — Ի՞նչ եղաւ նոցա կեանքն ու հոգին . . .
 Ո՞վ գիտէ, հիմա ո՞ւր են նոքա . . .
 Բայց չ'կայ մի վկայ,
 Որ մեզի ճշմարիտը ասի . . .
 Ի՞նչ եղան էն հազար հազարներ,
 Ուր կորան նոցա կեանքը եւ սէր . . .
 — Թէ արեւը գիտի, թո՞ղ խօսի՛ . . .

Յոյսերի՛, լոյսերի փափագով
 Շատ շատերը եկան ճրագով, կրակով —
 Զարկեցին, տանջահար կռուեցան.
 Բայց չարիքն ու բարիք իրարից չ'գտած՝
 Շուտ թողի՛ն, հեռացան . . .

— Ո՞ւր կորան այն կրֆերն ու գորով,
 Ի՞նչ եղան կռիւներն ու աւար.
 Զուր ինչո՞ւ գոհուեցին անհամար . . .
 — Ես երբէք չեմ տեսել, ու երբէք չեմ լսել,
 Ու բնա՛ւ չ'գիտեմ . . .
 Միշտ անմահ բնութիւն, անցուդարձ եւ ժխոր —
 Կործանում ու ծնունդ ամէն տեղ, ամէն օր . . .
 Բիւր զարդեր եւ գարուն.
 Անասուն եւ մարդիկ իմաստուն,
 Հշմարիտ ու լոյսեր, եւ չարիք ու կեղծիք . . .
 — Ո՞ւմ խնոյցն է անհուն,
 — Ո՞ւմն է այս անտարբեր հարսանիք . . .
 Արդեօք կա՞յ մի խորհուրդ երկնային ու անյայտ,
 Թէ՛ տեսիլ է մի գուր եւ տխուր անապատ . . .
 — Ո՞վ է տէրը անհուն եւ հօր այս շէնքի,
 Այս անվերջ, անխուսափ արարքի . . .
 Ի՞նչ երազ է այս երթը մտքի —
 — Չեմ տեսել, չեմ լսել, չ'գիտեմ . . .
 Ո՞ր ահեղ հանճարի ծրագիրն է կերտուած
 Էս աշխա՛րհը համայն, Էս ժխո՛րը կեանքի . . .
 Դէպի ո՞ւր է տանում մեր ուղին անմոռաց.
 — Այդ հեքիաթը մաշող ես երբէք չեմ լսել,
 — Այդ լոյսերը ճնշող ես երբէք չեմ տեսել . . .
 Եւ ինչո՞ւ, չ'գիտեմ . . .

1921.

ԾԷ.

Երկնքի՛ խորութիւն.
 Օ՛, անհուն, երազուն բարձունքներ.
 Արդեօ՛ք երբ կ'լինի իմ հոգին
 Ձեզ պէս բարձր, պայծառ, լուսաբեր . . .
 Իմ հոգին էլ ձեզ պէս մրրկոտ՝
 Միշտ արգանդ վառուո՛ղ, բորբոքուող կրֆերի
 Որ յաւե՛րծ ու անմար ձեր ազատ երեսին
 Շողշողում են լոյսով արեւի՛, աստղերի՛ . . .
 Երբ ամպերը անմիտ, անարժա՛ն,
 Իբրեւ նեւգ ու խաւար ոգիներ երկնային
 Զուր լողում, եւ սողում են անձայն
 Ձեր խոհում եւ անհուն ճակատին, —
 — Բանակները խաւար, վշտահար ամպերի,
 Իբրեւ չար ոգիներ՝ աշխարհի,
 Թափառում են իմ մէջ դառնագին
 Փոթորկում են մռայլ իմ հոգին . . .

Երկնքի խորութիւն.
 Երբ դու ջի՛նջ ես, փայլուն, աստղաւուն.
 Եւ քո մէջ երեւում է աստուածը հօր բնութեան,
 Եւ խորհուրդ է հոսում քո կրծքից սրբազան, —
 — Իմ սրտում շողշողում է գարուն,
 Իմ հոգու երկնքում միշտ վառում է արեւ,
 Եւ վառում է ցնորք, անսահման երազներ . . .

Իմ մտքի աւիւնի աղբիւրից յարատեւ
Միշտ հոսում են անմահ, երկնային նուագներ . . .

Երկնքի խորութիւն,
Անյայտի բարձունքներ միշտ գուլալ .
— Իմ հոգին է ձեր վեհ բանալին .
Միայն նա ձեր դռները կարող է բանալ . . .
Եւ քանի՜ էս կեանքում գուր անցնին
Երկրածին թռչնները մտքի .
Բայց էլի իմ հոգի՜ն է ազատ .
Միայն նա ձեր խորհուրդը կարող է մեկնել . . .
Իր անմահ գործերովն հարազատ . —

Նա կարող է ձեր կուրծքը նեղֆել,
Նա կարող է հզօր արշաւանք յօրինել դէպի վեր,
Եւ առմիշտ փականքները ձեր պիրկ արձակել . . .
Օ՛, անհաս բարձունքներ երկնային
Եւ յստա՛կ լազուրի խորութիւն .
— Արդեօ՞ք երբ կը հասնի իմ հոգին
Ձեր անմահ վեհութեան, ձեր գահին լուսաբեր . . .

1904 .

ԾԸ .

Հագար ու մի համբայ անցայ,
Հագար տեսակ փորձանք տեսայ .
Օր ու գիշեր շրջիկ դարձայ,
Բայց իմ բախտին ես չ'հասայ . . .

Գարուն բախտս անցաւ գնաց
Աներեւո՛յթ, հեռո՛ւ եւ վեր .
Իսկ իմ սրտում անմահ մնաց
Նորա շողֆը, արեւն ու սէր . . .

Եւ շրջում եմ օր եւ գիշեր,
Սարին քարին ձայն եմ տալիս .
Կանչում եմ հին մարած յուշեր,
Բայց իմ բախտը յետ չի՛ գալիս . . .

Հագար տեսակ համբայ կ'անցնեմ,
Որ յագենայ իմ լոյս հոգին . . .
Նոր աստղերով սիրտս լեցնե՛մ,
— Եարար կ'հասնե՞մ իմ նոր բախտին . . .

1926 .

Ոչ սկիզբը գիտեմ, ոչ վախճանը համբիս.

— Ո՞րտեղից եւ ի՞նչպէս եմ վառել

Բնութեան լոյսերով իմ մտքերն ու հոգիս . . .

Իբր անցորդ՝ հողմերով, անձանօթ կողմերով

Եւ շրջել եմ հեռու եւ անյայտ ուղիներ,

Եւ լսել եմ մարդուն եւ տեսել եմ անտառ, լեռ ու
ծով . . .

Գարունի ծաղկունի մեղմ համերգն եմ լսել —

Ափսոսանքն ու տրտունջը աշնան . . .

— Վերջալո՛յս, քո կարօ՞տն եմ անհուն եւ փաշել . . .

Եւ խորհուրդն հեռաւոր արեւի՛, աստղերի՛,

Աննման երազները գարնան

Շատ յանախ եւ տեսել եմ շողփում լոյսերի՛ . . .

Եւ հիմայ իմ անցած ուղիներն եմ պատմում,

Իմ տեսած երազները, աստղեր . . .

— Երկնի՛ ու գարնան կարօ՞տներն եմ խօսում . . .

1927.

Ծաղիկերն աննման, տերեւները գարնան

— Երազներ հիւսեցին ինձ համար.

Աղբիւրներ գուարթուն եւ ծովերը արթուն

Անյայտ ե՛րգ հնչեցին վեհաբար . . .

Իսկ աստղերը անմար եւ արեւը արդար

Դէպի վե՛ր, դէպ՝ եթե՛ր կանչեցին . . .

— Տիեզերքի անմահներ — երկնային բարձունքներ

Դիւթական սաղմոսներ՝ հնչեցին . . .

Երազի քեւերին՝ մտքերիս գնացփով

Դէպի վե՛ր, դէպ աստղեր սլացայ.

Ու հեռուից մեր երկիրը խռով

Միշտ օտա՛ր, մոլորուած եւ տեսայ . . .

Կաշկանդուած նիւթապաշտ ժխորով

Զուր շրջո՛ւմ է երկիրը մոլոր . . .

Իմ մտքի կուսական գորգերով

Նորա վիշտն եմ տեսնում ամէն օր . . .

1924.

Տերեւներն են, տերեւները հողմահար
Սգում, երգում գարնան մահը սեւաւոր.
— Խուլ փամին է, փամին յամառ
Այդպէս երգում անցները հի՛ն, դարաւոր . . .

Ելնեմ ընկնեմ դաշտը ազա՛տ, ամայի՛.
Զոր գլուխս դնեմ ֆարին ու թմբին.
— Նա կանչում է, անվերջ նչում ահրելի —
Հին անցների պատմիչը դեւ, սեւ փամին . . .

Լսե՛մ, տեսնե՛մ. ի՞նչ է խօսում անցեալից,
Ի՞նչպէս կորան եւ ո՞ւր կորան յաւիտեան
Բիւր ազգերը եւ ֆաջերը մեր հովտից . . .
Ի՞նչ արեցին, կամ այս կեանքից ի՞նչ տարան . . .

Տերեւներն են, տերեւները հողմահար —
Այդպէս սգում գարնան մահը դառնագին . . .
— Եարաք փամին այդքան տխո՛ւր ու երկա՛ր
Ի՞նչ է խօսում, ի՞նչ է ասում մեր մասին . . .

1926.

Ինչի՞ս են փառք, պատիւ. ինչի՞ս են ժպիտները գար-
նան,
— Զէ՞ որ կեանքս չնչի՛ն, դառնագին մի վարկեան է
միայն . . .

Ինձ ասում են. կ'ապրես, լաւ կ'ապրես անտրտում հո-
վիտում.
Գարուններ ու գարդեր կ'ծաղկեն մենաւոր քո սրտում..

Շատ անգամ աշխարհի բերկրանքով ու ջանքով
Քո հոգին թեւ՛ կ'առնի, կ'նախրի — երկնքով . . .

Շատ անգամ անթափանց իսկութիւնը անանց բնութեան
Կ'գարթնի քո սրտում իբրեւ լոյս կենաբար բերկրու-
թեան . . .

Երբ ծովերը արթուն հոլովում են անհուն փոթորիկ
Ու երգում տիեզերքի սաղմոսներն ու գաղտնիք, —

Երբ աստղերն են կանչում երկնային զօրքերին,
Որ շո՛ւտ գան էութեան խորհուրդները ֆննին, —

Քո հոգին է միայն վե՛ր ելնում եւ ապրում ամէն բան,
Քո սրտումն են միայն առկայծում խորհուրդները գար-
նան . . .

— Ինչի՞ս են այդ բոլորը — աստղեր ու արեւը գար-
նան,
Զէ՞ որ կեանքս չնչի՛ն, դառնագին մի վարկեան է
միայն . . .

1924.

ԿԳ.

Հագար նագով, երգ ու սագով
Գարունն եկաւ՝ զարդարուած.
Դաշուն ու հովիտ իւր մարգարիտ
Գէսքը հագա՛ւ ու ժպտա՛ց . . .
— Էրնէ՛կ ձեզի, ծաղիկներո՛վ լիք սարեր,
— Ո՛ւմ խնոյքն է, կատարում էք, ջա՛ն սարեր . . .

Իմ գարունն էլ երգ ու սագով եւ նագով
Եկա՛ւ, փայլե՛ց ու գնա՛ց.
Ծաղիկներից եւ դաշտերից հով ու գո՛վ
Սրտիս էլ բա՛ն չ՛մնաց . . .
— Էրնէ՛կ ձեզի, սէր ու խանդով լի՛ք սարե՛ր.
— Իմ գարունը ձեզ են տուել, լաւ ֆէֆ արէք, ջա՛ն
սարեր . . .

1927.

ԿԴ.

ՈՒԹ ՏՈՂ

Եթերի պէս նուրբ է, ազատ էս գիշեր.
— Տե՛ս. կանչել եմ ես խնոյքի իմ յուշեր . . .
Վառուած են սուրբ նրագները իմ սրտի,
Շողշողում են ծաղիկներս կարօտի՛ . . .
— Կանգնի՛ր գիշեր, քող որ սիրտս յագեցայ.
Մի շտապիր դու, պայծառ արեւ անխնայ . . .
Թող երկարի՛ խնոյքը իմ յուշերից,
Ծաղիկներն են շողշողում ինձ եթերից . . .

* * *

Ո՛ւր ես վանում սէրը ֆեզնից երկնային.
Թէ երգիչը ֆեզ չի սիրում էլ պայծառ,
— Ինչո՛ւ, ասա, նորա սրտի պատերին
Քո պատկերը նկարուած է լուսավառ . . .
Զո՛ւր ես վանում գարնան սէրը անարատ.
Թէ որ չ՛կասս դու իմ սրտի պարտէզում,
— Ինչպէ՛ս է որ ամէն գիշեր, անընդհատ
Լոյսի նման ինձ ես գալիս երագում . . .

* * *

Ես շատ անգամ ասել եմ ձեզ, խղճուկներ.
Իմ սրտի մէջ դուք տեղ ունիք հաւասար.
Ձեր տանջանքը, ձեր խնդութեան շողն ու սէր
Պահեստ ունին իմ հոգու մէջ միշտ արդար . . .
— Ի՞նչ էք իզուր ինձ հալածում ամէն տեղ
Կ'ուզէք արդե՛օք զէնք ու սրով ձեր անմիտ
Քանդել սրտիս օթեակը սուրբ ու շքեղ,
Տեսնել այնտեղ ձեր իսկ բախտը ճշմարիտ . . .

* * *

Պարտիզայան ես, մի զարմանայ, թէ երբէք
Մարգերիդ մէջ բսնին փշեր խոտ ու վարդ.
— Դու ես տէրը քո մարգերի իրազէկ,
Որ ցանել ես բոստանիդ մէջ լաւն ու վատ . . .
Դու, արարիչ. մի նեղանայ, որ յաճախ
Մենք գործում ենք ռնիր ու դաւ դառնագին.
— Չէ՞ որ դու ես չարն ու բարին անխարդախ
Առաջօրէն գրել դժբախտ մեր ճակտին . . .

* * *

Ես լսել եմ. վերել՛, հեռու երկնքում
Մէկը նստած մահ է ծնում մեզ համար.
— Նենգամիտ բախտ, դո՛ւ ես այդպէս անդադրում
Կսկիծ ու ցաւ, տանջանք բերում անարդար . . .
— Ա՛խ, թէ լինէր միտքս մի շանթ անխնայ,
Ձեռքս հզօր հարուածի պէս կայծակի.
Կ'փշրէի գահը քո սեւ, Մեքենայ,
Որ չ'գործես կտաւը մեր պատանքի . . .

* * *

Այսօր մտայ պարտէզը իմ ծաղկազարդ.
Փայլում էին բիւր ծաղիկներ ու ալվարդ.
— Ասի. բանամ սրտիս դուռը կախարդուն,
Մրցման հանեմ երազները իմ անհուն . . .
Երբ դուրս եկան երազներս ոգելից
Ու բռնեցին պարտէզը իմ լուսաւոր.
— Թառամեցին ծաղիկները ամօթից,
Ու թափուեցին ոտքերիս տակ գլխիկո՛ր . . .

* * *

Սի՛րտ իմ, սի՛րտ իմ, ինչո՞ւ նիշտ
 Վայրի վագր ես, կամ առիւծ.
 Ու կուում ես իմ դէմ միշտ
 Հարամու պէս հինաւորց . . .
 — Սիրտ իմ, սիրտ իմ թէ միայն
 Ձեռքս ընկնես դու մի օր.
 Կ'կտրատեմ քեզ դաժան,
 Տեսնեմ, ի՞նչ ես անսովոր . . .¹

* * *

Ինձ իր տունը կանչելու
 Կ'գայ մահը մի անգամ.
 — Շա՛տ բան չ'կայ կորչելու.
 Սրտիս բերը ո՞ւմ տամ . . .
 Ոսկորն ու միս եւ արիւն
 Կրկին կ'տամ ես հողին.
 — Իսկ մտքե՞րը իմ անհուն,
 — Ո՞ւր կ'նախրի՞ իմ հոգին . . .

* * *

¹ Պարսկերէնից (Բաբա - Թահէր):

Հագիւ սիրտս մօտեցաւ
 Գարնան սիրուն վարդերին
 Հագիւ միտքս նո՛ր հասաւ
 Այն հեռաւոր աստղերին, —
 — Օրս, ափսո՛ս, խաւարեց,
 Կեանքիս թելը կտրուած . . .
 — Եարար, ով էր անիծեց
 Իմ գարունը, իմ աստուած . . .

* * *

Անյայտ աշխարհից եկած մի նամակ՝
 — Շատերն ուզեցին սիրտս իմանալ.
 Եւ սուր կարօտից վառուած մի նրագ՝
 — Իգուր ջանք արին գաղտնիքս բանալ . . .
 Անյայտ բարբառով նամակն էր գրուած
 Ու խեղճ իմ սրտին թարգման էլ չեղաւ . . .
 — Այն ո՞ւմ սիրով էր նրագը վառուած,
 Որ այնքան իգո՛ւր փայլեց ու հանգաւ . . .

* * *

Էն աշխարհից, ուր գնացին
Հագար հագար մարդ ու կին,
Մինչեւ հիմայ ոչ մի խաբար
Դեռ չի եկել մեզ համար . . .
Ես շատ անգամ միտք եմ անում .
— Ի՞նչ է պատճառն էս բանի .
Էս սեւ ուղին ո՞ւր է տանում —
Մեր նաւերը անուանի՛ր . . .

* * *

Բաբա-թահեր, քո երգն եմ ես միշտ ասում .
— Խենթ է սիրտս, խօսք ու խրատ չի լսում .
Ինչե՞ր ասես, նա չի բերում իմ գլխին,
— Չարչարում է ինձ ամէն ժամ դառնագին .
— Կրակ արի, ասի՛ ծածուկ խենթին այրե՛մ, վերջա-
նայ ,
Բայց նա մնաց, եւ հրդեհը ինձ է այրում անխնայ . . .
Սաստում եմ խիստ, որ լուռ մնայ կապելու գիծն իր
բանդում .
— Վայրենու պէս իր պատերն է նա կրծոտում ու ֆան-
դում . . .

* * *

Բաբա-թահեր, մի՛շտ է խօսքդ վշտահար .
Երբ կրծքիս տակ անշէջ կրակ է վառում .
Եւ աշխարհի դաւ ու ցաւից անսպառ
Արցունքն է իմ աղի՛ր լեղի՛ր ծով կտրում, —
— Օր ու գիշեր միտք եմ անում ես անուն .
Ո՞վ է վառել կրծքիս խորքում խարոյկը այս թա՛ց
փայտի ,
Որ մի կողմից թորում է նա յո՛րդ արին ,
Իսկ միւս կողմից բոցն է լափում շէն շէնքերը իմ սրտի . .

* * *

Արեւներին շարժում տուողը դու ես .
Կայծակների եւ շանթի՛ պէս ազդո՛ւ ես .
Գարուններին դու ես հմայք ներշնչում ,
Քո կարօտն է հողմը անդուլ հառաչում . . .
Քեզնից է, որ ամէն ծաղիկ սիրտ ունի ,
— Ամէն մի բոյս խորհրդաւոր, կենդանի՛ . . .
Երագներին մայր ես անմահ, դու ով Սէր ,
Տիեզերական սարգուկարգի միակ տէր . . .

* * *

Երագումս ինձ էս գիշեր

Նամակ բերին էնտեղից .

— Եղբայրս է ինձ կրկին յիշել

Եւ գրում է իւր նամբից .

— Յետ ենք գնում մեր հին ուղին .

Կեանքից դէպ' հոգ, հոգից' ծով . . .

Կեանքի համար մի օր կրկին

Հանդէս կ'գանք նո՛ր ձեւով . . .

* * *

Ասես մի նամակ հեռու աշխարհից

Որ իւր մէջ ունի անցեալ ու ներկան .

— Սիրտս մի նամակ միշտ խորհրդալից ,

Որտեղ իրերը եւ կա՛ն, եւ չ'կան . . .

Ո՞վ էր յօրինեց նամակն անսովոր

Եւ իգութն նետեց տխուր աշխարհին .

— Արդեօք կ'լինի մի քարգման մի օր ,

Որ իրաւացի մեկնի՛ իմ հոգին . . .

* * *

Սուտ է . ինձնից ծանօթ , ընկեր հեռացած չեն տակաւին .

Մի օր նոքա ինձ հետ մէկտեղ ապրում էին միասին ,

Իսկ հիմայ՝ լոկ տեղը փոխած , ապրում են իմ սրտի

մէջ . . .

Սուտ է . ջահէլ օրերը իմ ոսկեվառ

Զեն հեռացել , չեն վերացել անարդար . . .

— Հոգիս նոցա պահում է դեռ իւր երկնքում լուսաէջ . .

— Լաւ ու վատով լի՛ իմ անցեալ նանապարհ

Սրտիս մէջ կա՛յ եւ կ'մնայ իբրեւ անմա՛հ մի նկար . . .

* * *

Զէ՞ք տեսնում որ լաւն ու վատը մարդու համար կայ
միայն ,

Քանի՛ նորա առջեւը կայ նանապարհը փառութեան . . .

Նիւթի շարժումն երբէ՛ք չունի լաւ ու վատի գաղա-
փար ,

— Զարն ու բարին գործում են հին նաւի վերայ մարդ-
կութեան . . .

Երբ տեղ հասնի նաւը մի օր , յաղթական .

Շղթաները նոցա ահեղ խորտակուելու են իսպառ . . .

— Լաւն ու վատը չ'կայ վերե՛ւ — վեհ ու պայծառ
երկնքում ,

Նա չի լինի նաեւ գալիք միշտ կատարեալ մեր կեան-
քում . . .

* * *

Կաւից շինած մի կնուն, ինքը թեթեւ՝ անպանոյն
կրակ կայ մէջ մի անշէջ, ինչ կ'լինի նորա վերջ . . .
Կաւից շինած մի մարմին, արիւն ու միս հողածին,
— Մէջը կրակ մի անհագ, վառուում է միշտ մեր հո-
գին . . .

— Ի՞նչ ես արել, բնութիւն. կնունի մէջ ապարդիւն
լեցրել ես զուր անշէջ հուր, որ տնակը իւր այրի,
Մոխի՛ր անի՛, կործանի՛ միս ու արիւն զգայո՛ւն, —
Տեսնենք անմիտ այս գործում ո՞րն է ազնիւ ու բարի . . .

* * *

Կա՛յ դիտարան իմ սրտի մէջ — հեռադէտ մի աննման,
Որից յաճախ տեսնում եմ ես անցեալը մեր, ապագան .
Հողից մինչեւ մտքի արեւ՝ աստուածային վիճակի,
Զարհուրելի անցքերով լի՛ — ահա մեր մեծ մանա-
պարհ . . .

Զնաշխարհիկ նաւի վերայ — ծովի միջով տանջանքի —
Մեզ բերել է էս բարձունքին գիտակցութեան նաւա-
վար . . .

Իսկ երբ հիմայ մեր մահը գայ, ու յետ դառնանք մենք
կրկին,
Դէպ նախնական վիճակը այն շուտ կ'տանի՛ մեր ուղին . .

* * *

Թէ ճիշտ է որ իրերի մէջ աներեւոյթ կապեր կան .
Նիւթը նիւթին ձգում է ճիշտ, փաշում ներփուստ ան-
խափան .

— Ո՞վ է անտես հիմնել այդպէս բնութեան կարգն ու
կանոն .

— Զէ՞ որ հոգին է արարիչ, աներեւոյթ մի գործօն . . .
Թէ աշխարհը ձեւն է միայն տարածութեան ու շարժ-
ման,

Իսկ կեանքը մեր՝ արդի՛ւնք, ստուե՛ր — ժամանակի՛,
բերմունքի,

— Ո՞վ է տէրը ամէն բանի, որ հսկում է անկործան
իրադարձին յաւերժական այս հոյակապ տիեզերքի . . .

1920—1927 .

(ԻՄ ԸՆԿԵՐ Ա. Տ. ԳՐ. ՅԻՇԱՏԱԿԻՆ) .

Դու ի՞նչ գիտես, երբ պիտի գայ,
Երբ պիտի գայ կանչելու .
Երբ պիտի գայ մահը ագահ
Տխո՛ւր գանգը հնչելու . . .

Տասնեակ տարի կեանք ես վարել,
Հագար-հագար ջանք ես արել,
Միտք ես վառել արեւի պէս .
Կեանքում կրել ես ցաւ ու վիշտ .
Եւ լուսաւո՛ր լայն ասպարէզ
Յօրինել ես, փայփայել միշտ . . .
Բայց չ'գիտիս, ե՞րբ պիտի գայ,
Ե՞րբ պիտի գայ կանչելու . . .
Մութ եւ անյայտ մահը ագահ
Տխո՛ւր երգը հնչելու . . .

Իսկ երբ նա գա՛յ, սիրտդ խոկա՛յ,
Վերջի՛ն անգամ միտքդ դառնա՛յ,
Վերջին իդո՛ղ ո՞վ կ'իմանայ . . .
Ո՞ւմ կ'թողնես հոգուդ գանձեր,
Պայծառ մտքիդ բե՛րքն ու հունձեր . . .
Ո՞վ կարող է նիշտը մեկնել
Քո սո՛ւրբ ուղիւն, քո նո՛ւրբ ըղձեր . . .

Է՛հ, ի՞նչ գիտես, երբ պիտի գայ,
Ե՞րբ պիտի գայ կանչելու .
Երբ պիտի գայ մահը ագահ
Տխո՛ւր գանգը հնչելու . . .

ՕՁԵՐ-ԲՈՑԵՐ .

Ահ ու զարգանդ, կայծակ ու շանթ,
Կեանք յարատեւ գարնան արեւ՝
Մտքերիս հոծ կրակ ու բոց —
— Ելե՛ք նետէ՛ք հոգիս վերել
Դէպի աստղեր, երկնքի՛ ծոց . . .

Ես միշտ մեռակ ամէն գիշեր
Կանչում եմ գուր իմ հուր յուշեր .
Ինչպէս նրազն ահա վառուող իմ դէմ դրուած՝
Որ մի՛տք ունի, խորհուրդ ունի նոր կեանքի,
Զարթնում եմ հուր, վառում եմ լուռ
Երազները իմ մանկութեան, ցնորքի՛ . . .
Աստղերի պէս՝ բոցերն հոգիս լուսաւորած՝
Սրտիս ծովում զարթեցնում եմ անարգել
Անդրաշխարհի խորհուրդները յաւերժական . . .

Զայն տուէ՛ք ինձ կարմիր բոցեր —
Սիրտը այրող անյայտ խոցեր .
— Դու՛ք է՛ք լո՛յսը մեր որոնած նշմարտութեան . . .
Զեր երթն երա՛զ, ձեր գօրքն անհաս եւ ահաւոր .
— Ի՞նչ է՛ք այդպէս շողում, լողում խորհրդաւոր . . .

Ես մանկութեան խենթ օրերին
Երազներս տեսնում էի բոցերի մէջ .
Անթառամ սէր, գարուն, արե՛ւ սրտագին
Զգում էի կրակներում, եւ կայծակում երկնաէջ . . .

Ա՛խ, երագներն իմ մոռացուած անցեալի
Բոցերի մէջ փայլում են միշտ մեղմաբար.
Աներեւոյթ հոգիներն անդրաշխարհի
Այդպէս շողում նոր խորհուրդներ յաղթաբար . . .
— Աստուածներն են շողում բոցերը կարմիր
Մեր հոգեւոր հայրենիքի կարօտն է այն մտացի՛ր . . .

Մարդի՛կ. ելէ՛ք, խոնարհուեցէ՛ք ալ-բոցերին.
— Երկրպագէ՛ք երկնածնունդ կուռքերի պէս.
Սաղմո՛ւս ասէ՛ք հրդեհներին, կրակին . . .
Աստուածները՝ յաւերժ անտես
Բոցերով են կախարդում մե՛զ, մեր հոգի՛ն . . .
— Կարմի՛ր բոցեր, դուք ծնում է՛ք աստղ ու արե՛ւ ան-
հունի . . .
Բոցերից դուրս այլ խորհուրդներ կեանքը չունի՛ր . . .
— Կարմիր բոցեր, այրող լացեր, սրտի օձեր.
Ո՞վ է վարում պայֆարը ձեր յաւերժական . . .
Անդրաշխարհի գօրքերն են փաջ անսասան —
Կործանում են կուռքերը հին եւ անմիտ . . .
— Աստուածն է այն սրի փաշում նի՛ւթը կոպիտ . . .

Կարմի՛ր, կապոյտ, միշտ անարատ եւ ազատ —
Պաշտում եմ ես շանթ ու կայծակն հարագատ . . .
— Հրդեհների կրակը հոծ
Եւ մտքերիս կայծակն ու բոց —
Ելէ՛ք նետէ՛ք հոգիս վերեւ՝ —
Դէպի աստղե՛ր — երկնփի՛ ծոց . . .
— Ես սիրում եմ այրող լացե՛ր, սրտի բոցե՛ր.
Երկինքն է վեհ յօրինել մեզ անմա՛հ խոցեր . . .

1922.

ԿԷ.

Իմ սրտում կայ խորհուրդ եւ արեւ
Միտք հպարտ ու երագ յաւիտեան.
Իմ մէջ կայ եւ Աստուած աներեւ,
Եւ մաքաժ լոյսերի գերեզման . . .
Իմ մէջ կայ բնութեան ահ, զայրո՛յթ.
Եւ կայծա՛կ, եւ խաւար, — ամէն ինչ.
Մրրիկներ ու կոիւ, սէր ու գութ
Եւ երկինք, եւ դժոխք, եւ ոչինչ . . .
Միշտ իմ մէջ են վսեմ խոր մտքեր ու տանջանք,
Արշալոյս կախարդուն, անթափանց մութ գիշեր.
Եւ երկինք ու լեռներ անմահ ծով ու ցամաք,
Եւ գարո՛ւն, եւ երա՛գ, եւ յուշեր . . .
Իմ մտքի ճախարակն է մանում
Եւ արեւ՝ ու թռիչք, եւ անկում . . .
— Ինձնից դուրս չ'կան սէր, ժամանա՛կ,
Ոչ երկի՛նք, ոչ խնդո՛ւմ ու տանջանք . . .

1916.

Վերե՛ւ, վերե՛ւ մինչեւ արեւն յարատեւ
 Ես հոգեւոր իմ թեւերը տարածեմ .
 Երկի՛նք, աստղեր եւ նուրբ եթեր աներեւ —
 — Անմահական ձեր խոհերը նուանեմ . . .

Ո՞վ է վառել իմ մէջ կրակն անսահման —
 Յաւերժական երկնահաւան նրագներ .
 — Եթէ վառեմ մտքերիս վեհ նրագները անվախճան,
 Կ'յօրինեմ կեանքի համար նո՛ր հոգեւոր արեւներ . . .

Վերե՛ւ վերե՛ւ, մինչ եթերը երկնաձեւ
 Ծաւալում եմ մտքերը իմ յաղթական .
 Յաւերժութեան բարձունքներում աներեւ
 — Զարկեմ պիտի աստուածային իմ վրան . . .

Աներեւոյթ հեռուների բարձուքից
 Իբրեւ հոգի՛ ուղղեմ կեանքին լոյսերը իմ երկնային .
 Եւ կրակներն հզօր մտքիս արեւից
 Դա՛ն ու այրե՛ն սուտն ու մութը էս աշխարհի դառ-
 նագին . . .

1924 .

Ես անբուն թռչուն եմ, թեւ չունեմ .
 Արծիւի պէս հզօր ձեւ չունեմ .
 Երկնքին, աստղերին մտերիմ՝
 — Արեւին հասնելու թեւ չունեմ . . .

Ես մի բոց կրակ եմ, մար չունեմ .
 Տիեզերքի նրագ եմ, թառ չունեմ .
 Աշխարհի մոխ գարունն ու լեզուն
 Ճշմարիտ կարդալու մար չունեմ . . .

Նաւավար եմ մտքի, նաւ չունեմ .
 Տիեզերքով եմ անցնում, դա՛ւ չունեմ .
 Երկնքի կուռ դռները բացող
 Ճշմարիտ բանալին բա՛ւ չունեմ . . .

Կեանքի խորթ մի անցորդ՝ փայ չունեմ,
 Ինձ այրող մտքերում թա՛յ չունեմ .
 — Էս կեանքի մութ բանտում ես տրտում
 Միշտ օտա՛ր եւ անհա՛ր փա՛յ չունեմ . . .

1924 .

Հեռուներ, լեռների կատարներ կախարդուն.
 Հովիւներ ու սրինգ, խարոյկներ ու հեֆիաթ.
 Ձեր լոյսերն են խօսում իմ սրտին սուրբ գարուն,
 — Ձեր երա՛գն է լսում իմ ֆնարն անարատ . . .
 Երբ ժխորը մարի, երբ երկինքը վառի
 Իւր խարոյկը հօր՝ վերջալոյսը վսեմ.
 Երբ գիշերը արի իր յուշերը բերի, —
 Ու հեռու աստղերի սաղմոսները լսեմ . . .
 — Դէպի վե՛ր, կատարները ելնեմ լեռների —
 Որ վառեմ իմ հոգու խարոյկները հօր,
 Որ տեսնեմ կառուցուածքն անմահ եթերի . . .
 — Անմահներ, որ լսեմ ձեր խորհուրդն ահաւոր . . .

Վերջալոյսը ժպտա՛ց, իր տխուր վերջին խօսքը ասաց,
 Եւ մեկնեց լեռներին ու ծովին իր խամբոյրը վերջին . . .
 Իսկ ամպերը յդի շարուեցան զօրֆի պէ՛ս եւ յուզուած,
 — Հրածեշտի սուրբ ժամին ֆամիներն ու ծովեր լոե-
 ցին . . .

Իսկ ծաղիկն ու տերեւ խնկարոյր
 Ծածկուեցան արցունքով մի տխուր . . .
 Եւ գիշերը իջաւ, տարածեց իւր յուշերը անբաւ,
 Անմահները կրկին երկնային մեծ գահին բազմեցին . . .
 Իսկ աստղերն հեռաւոր եւ անցաւ,

Իբրեւ մեծ արարչի խարոյկներ գօրաւոր,
 Զարթնեցին, վառուեցին, եւ գօրֆերն աշխարհի կան-
 չեցին . . .

— Խարոյկներս վառեմ հոգեւոր
 Ու կանչեմ աստղերին, եթերին.
 Մտֆերովս հօր, ահաւոր՝
 Նոր արեւ յօրինեմ Տիեզերքին . . .

Իմ կրծքում գարուններ են շրջում,
 Իմ սրտում վերջալոյսն է լալիս . . .
 — Իսկ արեւն ու աստղեր երկնքում
 Իմ մտքին միշտ ողջո՛յն են տալիս . . .

1924.

Ես այսօր նստեցի իմ օրերն հաշուեցի.

— Իմ անցած ուղիներն, իմ աստղերն յիշեցի . . .

Եւ ինչե՞ր չեն անցել իմ գլխով լաւ ու վատ.

Հալածանիք ու փորձանիք եւ խնդում հարազատ.

Գարնան լոյս ու ժպիտ, արեւ, յոյս, մարգարիտ,

Ընկերներ մտերիմ, երազներ միշտ անմիտ . . .

Ու աշնան սեւ ֆամիլն՝ իր տխուր մեղեդին,

Տերեւներ հողմահար եւ դաշտեր մերկ ու սին . . .

— Ես այսօր իմ սրտում հարց տուի անսովոր.

Ո՞վ է մեզ հովովում, գուր ֆշում ամէն օր . . .

Գարունֆին շուտ հասայ, արեւներ շա՛տ տեսա՛յ,

— Սիրտս հո՛ւր, ջանֆս գո՛ւր՝ իմ բախտին չ'հասայ . . .

Ծաղիկներս գարնան՝ երազներս անցա՛ն,

Ընկերներ մտերիմ շուտ թողի՛ն, հեռացա՛ն . . .

— Ո՞ւմ արարֆն է մթին այս պատկերն անսովոր,

Ո՞վ փաթեց իմ վզին անցուդարձը մոլոր . . .

Ես այսօր նստեցի իմ օրերն հաշուեցի, —

— Անցած սեւ՝ ուղիներ, իմ աստղե՛րն յիշեցի . . .

1925.

Անմիտ եւ բիրտ՝ մահին դահին գազաններ —

— Երկրպագու սուտ կուռքերին նիւթեղէն.

Աշխարհը ողջ՝ ձեզ մի շուկայ օգտարեր,

Եւ սողում էֆ օտա՛ր, հեռո՛ւ երկնֆէթ . . .

Ի՞նչ էֆ ուզում. բռո՛ւնցֆ, շղթայ, մոլութիւն,

Ունայն հոգսե՞ր — կեանֆը փողով գնելու . . .

— Իսկ հանճարի թռիչֆներին վսե՛մ, անհո՛ւն

Դուֆ իրաւո՛ւնֆ եւ հի՛մֆ չունէֆ հասնելու . . .

Ձեր այդ կոպիտ եւ արիւնոտ ձեռքերով

Դուֆ պոկեցիֆ հոգուս ջահերն հանճարի.

Ձեր միշտ անկուշտ եւ փոֆրոգի կրֆերով

— Խորտակեցիֆ բարձունֆներն եմ տանարի . . .

Ձեզ երկնֆի բերել էի պատգամներ,

Իբրեւ հոգի՛ վառել էի արե՛ւ, աստուած.

— Յաւերժութեան սուրբ երգերին անտարբեր

Դուֆ դէպ՛ շուկա՛յ ինձ կանչեցիֆ մոլորուած . . .

Սրտիս զարդերն, հոգուս վարդերն երկնաւոր

Դուֆ՝ թեւագուրկ, մոլի՛, գերի՛, — ծաղրեցիֆ.

Եւ վեհ մտֆիս նուրբ շէնֆերը փառաւոր

Չա՛ր դահիՆներ, եկաֆ, տեսա՛ֆ, փշրեցի՛ֆ . . .

Ձեզ կանչեցի սուրբ երգերի, աղօթփի,
Որ երկնքի անյայտ լեզուն հասկանաք.
— Խորհուրդը վեհ՝ յաւերժական տիեզերքի
Ձեր սրտերում վառի անմահ արեգակ . . .

Իսկ դուք, անձուկ, անմիտ ճորտեր, իմ կանչին
Բռունցքներով ու չարութեամբ ձայնեցիք.
Աստուածային սուրբ աղօթփին, անմահ երգին
Կեդտ ու չարիք, ծաղր ու կեղծիք նետեցիք . . .

Էլ մի՛ կանչե՛ք. մեր մէջ կան խոր անդունդներ.
— Դուք երկնային սուրբ ձայներին չե՛ք հասնի . . .
Օ՛, դահիճներ, հոգով-սրտով մահիճներ,
— Ձեր սրտերում երգն հանճարի չի՞ բսնի . . .

1922.

ՀԳ.

Ինչպէս աշունքին անտառը տխուր
Եւ տերեւաթափ՝
Խորհում է գարնան լոյսերի մասին,
Նիրհում է անձայն մահիճումը իւր.
— Թէ ինչո՞ւ իր զարդերն, ծաղիկ ու տերեւ
Այսօր շո՛ւտ կորան, շուտով քափուեցան . . .
Այդպէս իմ հոգին մենակ եւ իգուր
Երագում է միշտ, քէ, ի՞նչպէ՛ս գարնան
Ձուարթ օրերին փայլում էր լոյսով,
Երգում ու ծաղկում անմահ յոյսերով . . .
— Ինչո՞ւ ամէն բան կորաւ յաւիտեան . . .

Բայց կը գայ շուտով նոր շփեղ գարուն —
Իւր մոխ զարդերով, եւ բի՛ւր վարդերով.
Շուտով կ'ծաղկի նոր կեանք զարդարուն,
Կ'փայլի՛ արեւ, կ'վազե՛ն ջրեր,
Խնճոյք կ'սկսի անհուն բնութիւն —
Իւր կանաչագգեստ երկնային գէսով,
Հագար երգերով, հագար բերքերով . . .
Եւ մոխ կ'գուգուի անտառը նորից,
Նո՛ր կեանք կ'շողա՛յ, կ'կանչի հեռուից . . .
Բայց իմ խեղճ սրտի գարունը կրկին
Էլ յետ չի՛ դառնայ, յետ չի գայ երբե՛ք . . .
Էլ չեն շողշողայ մարած իմ աստղեր,
Ձի՛ գարթնի կրկին տխուր իմ հոգին . . .
— Մարդիկ, ասացե՛ք.
Ո՞ւր կորան իմ մոխ գարունը եւ սէր . . .

1923.

ՀԴ.

Է՛յ այգեպան.

Դժբախտ ես միշտ, սրտիդ սեւ վիշտ,
Երբ ծառերդ ցանկապատից դուրս եմ նայում
Եւ հարամու փայ դառնում . . .

Արժանաւոր՝

Դժբախտ ես միշտ, սիրտդ սեւ վիշտ,
Երբ մտքերդ կեանքի ձորից դուրս եմ նայում
Եւ վայրենի քն թշնամու բաժին դառնում . . .

Դո՛ւ, այգեպան, ի՞նչ ես սպասում,
Վերցուր կացին՝
Էն ծառերը արմատներով պոկի՛ր, հանի՛ր,
Որ քո սիրտը զուր չ'մաշեն բնաւին . . .

Կանգնի՛ր, ա՛յ մարդ, զուր մի տանջիր
Քո խեղճ հոգին . . .
— Պոկիր ու հա՛ն այդ մտքերը արմատներով,
Որ քո ուղին զուր չ'պատեն փշերով . . .

1923.

ՀԵ.

Զե՞ որ գնում ես հեռու երկիրներ,
Առաջդ ընկած անյայտ ճանապարհ . . .
— Ի՞նչ ես կուտակել սրտումդ բեռներ,
Զուր ձիրք ու ձգտում եւ կիրք անհամար

Իբրեւ մի անցորդ օտար ու մի՛այն —
Քեզ պէտք չեն կեանքի բարիքն ու չարիք.
— Կտրատի՛ր, թափի՛ր բեռներդ ունայն,
Որ շուտո՛վ հասնես քո սուրբ հայրենիք . . .

1927.

— Ի՞նչ ես իզուր սիրտդ մաշում ցաւերով .
Տե՛ս, դեռ երկա՛ր քեզ կ'փայլեն արեւն, աստղե՛ր ան-
համար . . .

Տիեզերական շարժումները դեռ կ'մնան անվրդով
եւ դեռ կ'տա՛ն քեզ օդ եւ ջո՛ւր, սուրբ հառագա՛յթ
կենարար .

— Ի՞նչ ես իզուր ստուեր անում քո սրտին .
Տե՛ս, յաւիտեան կ'շողշողա՛ն արեւն, աստղե՛րը ան-
հուն .

Եթէ այստեղ նաւդ կանգնի եւ վերջանայ քո ուղին, —
Նոր հանապարհ յաւերժաբար քեզ կ'բանայ բնութիւն . .

1927 .

Եկայ հասայ բարձունքներիդ, Քեօն օղլի —
Եկայ տեսայ արցունքներիդ, Քեօն-օղլի .
Հագար հագար ուխտաւորներ են գալիս
եւ երկնահաս ամբոցիդ մօտ՝
Վեհ փառքերիդ միայն կարօտ՝ —
— Յաւերժական քո դիւանին գլուխ տալիս . . .

Քեզ եմ երգում,
Ով անվեհեր լեռների քաջ,
Էս ամենի ժայռերի տակ քեզ յիշելիս
Սիրտն է մարդու ալեկոծում
Ու դառնութեան վշտով լեցում . . .
Աշխարհի սեւ հանապարհին տառապած՝
Կանչում եմ քեզ, լեռների քաջ,
Ճակատդ բա՛ց, Քեօնօղլի . . .

Հրեղէն ձիով, շանթէ թուրը կարող ձեռիդ՝
Արշաւում ես դու համարձակ լեռների մէջ .
— Գալարում ես երկնքի տակ, ամպերի մէջ,
Զարգանդ թափում քո թշնամու գլխին անմիտ,
Անպարտելի Քեօն օղլի . . .

Յանախ արդար հեփաթներում քեզ են գովում,
Եւ յաղթարար քո գործերն են բերնէ բերան միշտ ա-
տում .

Արեւի պէս բարձր է դիրքդ, ով իգիթ,
Երկնքի պէս անկասող լայն, ճշմարիտ . . .
Միայն կայծակն է քեզ նման.
— Նա երկնքի թուրն է դաժան,
Միշտ յաղթարար Քեօնօղի . . .

Քանի՜ քանի մենք տեսել ենք սուրբ երկնի,
Երբ ամպերն է նա կտրատում անասան . . .
Քանի՞ քանի մենք լսել ենք անուանի, —
— Աստուածների գայրոյթն է նա յաւիտեան . . .
Էս աշխարհում տեսանելի եւ անտես
Դո՛ւ ես, որ կաս կայծակի պէս յաղթարար.
Իսկ վիթխարի բարձունքներդ՝ սրբութեան լոյս մեզ
համար,
— Անմահական է քո գահը, Քեօ՛ն-օղի . . .

Ճիշտ անցել ես հեփիաթի պէս քո ուղին,
Միշտ եղել ես երազի՝ պէս պաշտելի . . .
Բա՛րձր, հեռո՛ւ կեանքի անմիտ ժխորից՝
— Խորհուրդներով դու եղել ես վեհ ու լի՛ . . .
Քո գործե՛րը, քո անո՛ւնը միշտ անբիծ
Շողշողում են կեանքի խաւար հովիտում,
— Դու յաւիտեան ակօսուած ես մեր սրտում . . .
Եկայ հասայ բարձունքներիդ, Քեօն օղի,
Ու լաւ տեսայ վսեմ գահդ երկնահաս.
— Ա՛խ, թէ գտնեմ ուղիներդ այն երազ
Գէթ մի գգամ յաւերժական քո մտքերը եւ մուրա՛զ,
Ու փառքերիդ երկրպագե՛մ, Քեօ՛ն-օղի . . .

1924

ՀԸ.

Առաւօտ է. էս մե՛ղմ, սրբութեան ժամերին
— Տե՛ս, աղօ՛տ, կիսալոյս է աշխարհ . . .
Խորհուրդներ ու երազ անկաստին՝
Աղօթում են ջրերը, հովիտ, խիտ անտա՛ռը եւ սար . . .
Բնութեան արարիչը՝ նստած իր գահին
Էս կեանքի՛, էութեան խնդիրներն է քննում.
Նորա շուրջը արեւ՝ եւ աստղեր խմբովին
Տիեզերքի անյայտ ե՛րգն ու աղօթքն են ասում . . .
Անմահ ծովը՝ երազը պատած՝
Եթերի շարժումներն է խօսում.
Եւ քնկոտ հեռաստանը՝ քննոյշ մէգերով ֆոգարկուած՝
Ջրերի հին սաղմոսն է լսում . . .
Իսկ հովիկը շրջիկ՝ մեղմաբար եւ հանգիստ
Խօսեցնում է տխուր անտառին վաղանիստ . . .
Արշալոյսը վսեմ, ժպտերե՛ս
Անյայտից համբաւներ՝ է բերում երկնատես . . .
— Ի՞նչ ես գուր թաթախուած աշխարհի ժխորում,
Միթէ՞ նոր արեւներ չեն ծագում քո սրտում . . .
— Ե՛լ շուտով. թող անմիտ այդ հոգսերը յամառ,
Եւ հասի՛ր կեանքի մեծ խորհրդին.
— Տե՛ս, թէ ի՞նչ է խօսում հին աշխարհ,
— Տե՛ս, թէ ի՞նչ են ասում մեր մասին . . .

1919.

ԻՆՁ ԱՐԵԻՆ ԷՐ ԿԱՆՉՈՒՄ.

Գիւղի մէջ հասարակ մի տնակ —
Անպանոյն կացութեան մի անկիւն.
— Ես ծնուել եմ հեռու ու մեռակ
Եւ սնուել արեւով կախարդուն . . .
Բնութեան լոյսերին միշտ կարօտ՝
Դէպի վեր էր ձգտում իմ հոգին . . .
— Ինձ միշտ խորթ էր ծանօթ, անծանօթ,
Եւ լսում էի միշտ աստղերին. —
Հոխ լեզուն անվախճան տիեզերքի
Եւ լսում էի միշտ ու միայն
Երգի մէջն հողմերի, ալիքի,
Ցոլֆի մէջ արեւի՝ ու գարնան . . .
— Ո՞վ կարող էր մեկնել անյայտի
Խորհուրդները հզօր ու անհաս,
Որոնել սուրբ ուղիւն ողորտի,
— Եթէ ոչ մեղմ աղօթքֆն ու երազ . . .

Ես մանուկ հասակից անդադար
Աղօթում էի միշտ աստղերին,
Աղօթում էի ճիշտ, մեղմաբար
Բոյսերին, լոյսերին, արեւին . . .
— Աղօթում էի խո՛ր, որ մի օր

Իր խորհուրդը աշխարհն ինձ խօսի՛ . . .
Որ կայծակը, մրրիկն ահաւոր
Իրերի իսկութիւնն ինձ ասի՛ . . .
Եւ արեւը վաղուց է անվերջ ինձ կանչում.
Յորդ աղբիւրը, քամին ու անտառ
Բնութեան սուրբ խորհուրդն են հնչում,
Իսկ աստղերը սաղմո՛ւ են ասում ինձ համար . . .
Շատ վաղուց է վսեմ աստղերի շողֆի մէջ
Ես կարդում եմ իմ ուխտը, գարուն.
— Եթերո՛ւմ, արեւի՛ լոյսի մէջ
Ինձ կանչում է խորհուրդը անհուն . . .

1924.

ՀԱՐԱԶԱՏՆԵՐՍ.

I.

Մայր իմ կաթոգին, հեռու ափերից
 Ես քեզ եմ ուղղում իմ երգն ու դաշնակ.
 Աշխարհի ցաւով լեցուն իմ սրտից
 Ել չի՛ հեռանայ քո սո՛ւրբ յիշատակ . . .
 Եւ թէ՛ւ վաղուց ցուրտ անիւն դառած՝
 Նինջ ես վայելում սուրբ հողի ծոցում.
 Շիրիմիդ չորս կողմ ծաղիկն ու կանաչ
 Տխուր մրմունջով երգեր են հնչում . . .
 Եւ թէ՛ւ քան վերջին անջատման ժամին,
 — Երբ դու հեռացար անյայտի աշխարհ,
 Օ՛, ես չ'կայի, մայր իմ սրտագին,
 — Թափառում էի երկիրներ օտար . . .
 Բայց ես չեմ մոռնայ — յաւերժ կ'յիշեմ —
 Քո սիրտը գթո՛ւտ, ազնի՛ւ, սիրառատ.
 Այս օտար համբին քո շունչն է վսեմ,
 Որ լոյս է տալիս իմ սրտին ազա՛տ . . .
 — Կաթոգին մայր իմ. դու որ իբր հոգի
 Անմահ կ'մնաս յուշերիս դաշտում.
 Այս ջերմ երգերը շիթով արցունքի
 Անմահ անունիդ ու քեզ եմ բերում . . .

1904.

Դու իմ համբին, քարոտ համբին
 Մի լոյս էիր, դեռ չ'տեսնուած պայծա՛ռ մի լոյս . . .
 — Հայր իմ անգին, խեղն իմ կեանքին ու իմ սրտին
 Դու երկնային մի աստղ էիր, անմահ մի յոյս . . .
 Ուր էլ լինեմ, ուր որ գնամ,
 Քեզ չեմ մոռնայ ես երբէ՛ք . . .
 Հայր իմ անգին, դու իմ համբին մի ա՛ստղ էիր անտա-
 րակոյս . . .
 Երգերը այս միշտ մտացի՛ր, խոր ու ժիր,
 Ճշմարտութեան կոչն ու կոչնակ
 Դու ինձ ազա՛տ ներշնչեցիր,
 Ու ձգեցի՛ր ներսը սրտիս արեգակ . . .
 Եւ այն օրից, երբ հեռացար
 Խորհրդալի անդրաշխարհ,
 Չայնդ իմ մէջ հնչում է միշտ յաւերժութեան զանգի
 պէս,
 Քեզ ամէն ժամ ես գգում եմ տեսանելի եւ անտե՛ս . . .

Ազնիւ կռիւ, ճշմարտութիւն ու պատիւ,
 Երկինք ու սէր, պայծառ արե՛ւ, աշխատանք, —
 Անհուն ձգտում դէպի գարունը անհաս, —
 — Այդ էր հօր քո աւանդը, քո սուրբ ջանք,
 Որ բաց արին էս աշխարհի իմ ուղին . . .
 — Հայր իմ անգին, դու իմ համբին, քարոտ համբին

Արեւ դարձար անմահական ու վսեմ .

Քո լոյսերն են ինձ միշտ նետում դէպի արեւ երկնա-
դէմ . . .

1926 .

III .

Եղբայր՝ իմ սրտագին .

Այդքան շուտ դու անցար քո ուղին դառնագին

Արդեօք ո՞ւմ թողեցիր քո կարօտն ու կսկիծ ,

Քո սուրբ ուխտը , մուրազն աստղերի՛ , արեւի՛ . . .

Այս տխուր եւ իգուր աշխարհում

Քո սուրբ ձայնը զուարթ ,

Քո մտքերը ազնիւ ու հպարտ

Մէկ անգամ էլ արդեօք կ'լսե՞մ ես նորից . . .

Եղբայր՝ իմ սրտագին .

Մենք միտեղ ու անմեղ բռնեցինք մեր ուղին .

Եռանդով ու կայտա՛ն , ջանքերով լուսավառ —

Միասին սովբեցանք սաւառներ ի հեռուներ ,

Միասին մենք տեսանք հալածանք ու ցաւեր .

— Միասին դիմեցինք մեր պայծառ

Գարունին ու բախտին . . .

— Բայց ինչո՞ւ այդքան շուտ վերջացաւ քո ուղին . . .

Եղբայր՝ իմ , անծանօթ աշխարհում անտրտում

Քո զանգերը քաշի՛ր , քո եղբօրը յիշի՛ր . . .

— Ես էլ միշտ կ'հնչեմ իմ զանգերն անդադրում .

Թող թնդա՛ն ու խնդա՛ն սուրբ զանգերն հոգեւոր ,

Գէթ այդպէ՛ս հանդիպենք ձայներով մենք նորից ,

Գէթ այդպէ՛ս պատահեն մեր սրտերը մոլոր . . .

— Եղբայր՝ իմ , հարագատ քո լոյսերը , քո սէրը անբիծ
Յաւիտեան անպակա՛ս կ'շողա՛ն իմ սրտում . . .

1926 .

— Սուտ մի՛ ասէ՛ք. ես աշխարհի մասը չեմ.
Աշխարհն ինքը լոկ մի մասն է իմ հոգու . . .
Օր ու գիշեր, արեւն, աստղեր լուսադէմ
Յօրինել են զօրքերը իմ ահարկու . . .

— Զուր մի՛ ասէ՛ք. ես մարդկութեան մասը չեմ.
Իմ հոգին է նորան ծնել վեհագո՛յն.
Երբ հեռանամ ու այս ուղին ես բռնեմ,
Նա է՛լ կ'անցնի ստուերի՛ պէս եւ իսկո՛յն . . .

Երբ կուում են մարդիկ յաճա՛խ իրար հետ
Եւ յօրինում իրաւունքի՛, ազատութեա՛ն ուղիներ.
Երբ ատում են, պախարակո՛ւմ ինձ իմաստուն եւ ան-
գէտ, —
— Այդ ամէնը իմ արարքն է, եւ ի՛մ հոգու շարժում-
ներ . . .

1927.

Սիրտս բանել, արտ է ցանել իւր հոգեւոր պարտիզում,
Իւր ակունքից ջուր է հանել — արտը ջրել արցունքում.
Սիրտս կախարդ՝ կեանքս մի արտ, տունս արտի կեն-
տրոնում . . .

— Ես շա՛տ ունիմ ծաղիկ ու վարդ իմ հոգեւոր պահես-
տում . . .

Ահա հասաւ պայծառ գարուն — արտս ծաղկեց երկ-
նատես,

Հոգիս գանձեց բերքը անհուն՝ դարձաւ լոյսի մի հան-
դէս . . .

Բայց ես վաղուց լսել էի, որ կայ ահեղ թշնամի,
Մի օր պիտի նա յարձակուի սրտիս վերայ.

Անգուսպ մահը՝ գո՛ղ, աւագա՛կ, հարամի՛ —
Կ'գայ մի օր իր խեղճ որսին աշխարայ . . .

Եւ ննջում էր սարսափը ինձ անիրաւ . . .

Մաշում էին սիրտս անվերջ վիշտ ու ցաւ . . .

— Զէ՞ որ մահը մի օր դաժան ներս կ'իջուծի սրտիս մէջ,
Եւ ահրելի՛ ալան-թալան նա կ'սկսի բերդիս մէջ . . .

Գիշեր ցերեկ միտք արեցի — հազիւ գտայ մի հնար.

— Սրտիս համար շինել տուի մի ցանկապա՛տ յաղթա-
րար . . .

Հաստատուն է, անմատչելի՛ իմ հոգեւոր ցանկապատն,
Հիմքը դրած ժէռ ֆար ու կիր, իսկ նաղերը սուր երկաթ,
Որ հարամի չար թշնամին ներս չ'խուծի սրտիս մէջ,
— Գող աւագակ մահը անհագ չ'առնի՛ տունս երկնաէջ...

Անմահական եւ միշտ անթիւ բերքերը կա՛ն իմ արտի.
Յաւերժական եւ միշտ ազնիւ զօրքերը կա՛ն իմ սրտի...
Տունս ունի պատ ու պարիսպ, արտս ունի ցանկապատ,
Բերդս ունի տէ՛ր ու հսկիչ զրահակիր անարատ...
— Երբ հարամի մահը ահեղ — աւագակը վայրենի՛, —
Ներս էր խուծում տունս անմեղ, որ աւերի՛, թալանի՛,
Հսկիչներս վրայ հասան ու բռնեցին թշնամուն,
Շղթայակապ եւ անարժան մօտս բերին մահն — ա-
րին... .

Եւ բերդի մէջ իմ հոյակապ՝ սրտիս անմահ խորանում,
Մահն իմ առաջ շղթայակապ՝ դա՛տ եմ անում ու հար-
ցում... .

— Դու հարամի՛, գո՛ղ աւագակ.

Քանի՞ էդպէս ալան-թալա՛ն կատարես.

Վեր դիր շուտով դժոխածին գէնֆդ ու կրակ... .

Ո՞վ է, ասա, քեզ ներշնչում աներես՝... .

Ո՞վ է բերում քեզ գողութե՛ան, աւարի՛... .

— Ինչի՞դ եմ պէտք գուլումները էս կործանիչ աւերի.

— Ուր ես տանում էսֆան անմեղ դու գոհեր... .

Զուր ինչո՞ւ ես միշտ աւերում խալիսի տներ... .

Ասա՛ դաժան եւ զինաթափ թշնամի.

— Ո՞վ է անմիտ ֆռ չար տէրը հարամի՛... .

Իմ բերդի մէջ՝ սրտի անմահ տաճարում —

Մահը իմ դէմ՝ գերուած, անգո՛ր, զինաթափ.

Զէնքերս բի՛ւր, բերքերս հո՛ւր, անհատնում,

— Դա՛տ եմ անում իմ թշնամուն իրաչափ... .

Սիրտս կախարդ՝ կեանքս մի արտ երկնաւոր,

Մահը գերուած՝ ահ ու երկիւղ էլ չունեմ... .

— Բիւ՛ր բերքերս գնացֆներով հոգեւոր

Սաղ աշխարհն յաւերժաբար կ'ցանեմ... .

1926.

ԶԳ.

ՃԻՃՈՒ.

Անյիշելի խոր ժամանակ
Ծնուած էի մթի մէջ.
Զնչին նիւն ծովերի տակ —
Սողում էի ստի մէջ . . .
Ճիշտ մի սողուն — վհատ միջատ,
— Ինձ գշում էր քշամին.
Շուրջս խաւար եւ անապատ,
Միշտ մաշում էր մութ ուղին . . .

Սուր պայքարից մահ ու կեանքի
Թեւ ու թիկունք ստացայ.
Բիւր ձեւերից խոր երկունքի
Հզօր զինուոր ես դարձայ . . .
Եւ կեանք՝ միշտ ինձ դեկավար՝
Պարգեւեց նոյն զրահ ու զէնք.
— Թշնամու դէմ միշտ կռուարար —
Սարգեց հզօր իմ այս շէնք . . .

Սիրտս թնդաց բիւր ձայներով,
Հոգիս վառեց լոյս ու նրագ,
Եւ բիւրաւոր նոր գործերով
Յօրինեց վեհ արշաւանք . . .

Եւ կաշկանդող տարերքը մութ
Եւ ոխերի՛մ քշամին,
Ինձ հալածող խաւարն ու սուտ —
— Զօրք ու մտքիս գերութեցին . . .

— Դիտէ՞ք արդեօք. զրահակիր
Ո՞ւր է մեկնում իմ հոգին . . .
Վեհ տիեզերքում անծայրած՝իր
Իշխո՛ւմ է միշտ իմ հոգին . . .
Դուք չէ՞ք տեսնում, որ խեղճ նիւն
Նուաճում է ողջ աշխարհ.
Որոնում է լոյս ու գարուն,
Կեա՛նք յօրինում աստուածաբար . . .

1926.

ՀԵՔԻԱԹ.

Ճիշտ ինչպէս թիթեռնիկ լեռների
Դէպ հովիտն է հախրում՝ իր կարօտը առնի.
Ես անփորձ ու անգործ դուրս եկայ կեանքի դաշտ,
Ուր տիրում էր ժխորը անհաշտ:
Ես արագ հախրեցի անվեհեր,
Որ փնջեմ ծաղիկներ:
— Ես մի խեղճ թիթեռնիկ,
Իսկ իմ դէմ չար մարդիկ.
— Ես իմ վառ յոյսերով եռանդուն,
Իսկ իմ շուրջ ցաւ ու դաւ, նենգութիւն . . .
— Իմ սրտում երազներ, լոյսի պէս կախարդիչ,
Իմ չորս կողմ՝ դառնութիւն, սեւ դաշոյն ու դահիճ.
— Իմ ամէն մի քայլին ու ջանքին
Թունաւոր պատասխան էր տալիս թշնամին . . .
Ես անմեղ մի թիթեռ,
Ինչպէս նոր գարնան սէր, —
Էս անմիտ կռուի մէջ չարաչար
Շուտ կորցրի իմ գարդերն, իմ թեւերը պայծառ . . .
— Ա՛խ ամառ՝ աշնան շուտ
Կռուի մէջ էս անգութ
Իմ յոյսերը կորան, իմ աստղերը թափուան,
Իմ շէնքերը բնաւ փռւլ եկան . . .

Անցան շատ տարիներ.

Շատ փորձանք, անդուլ ջանք —

Եւ ձախորդ օրերի անխնայ հալածանք

Ինձ բերին նոր թեւեր,

Վառեցին նոր լոյսեր . . .

— Նո՛ր շէնքեր յօրինեց իմ հոգին,

Որ մի օր հասնի՝ վեհ երկնքին, —

— Իւր աստուած դառնալու ցնորքին . . .

Երբ այդպէս նոր զինուած՝

Իբր հոգի եւ աստուած՝

Ես հախրում եմ իմ ծանօթ դաշտերով,

Ու տեսնում վաղեմի խիտ խաւարն անվրդով, —

Միշտ իմ դէմ է ելնում հարամի թշնամին,

Որ զինուած է իւր հին կրքերով երկրային . . .

Նա կանչում է կռուի,

Ու ճշում վայրենի՝.

— Եկ, ցած դիր քո հրեղէն այդ զէնքեր,

Ում համար ես կանգնում հոգեղէն այդ շէնքեր . . .

Եկ մտի՛ր կռուի մէջ, կեանքի դա՛շտը անվախ,

Տանջահա՛ր սաւառնիւր աջ ու ձախ . . .

Ես լսում եմ ձայներ աշխարհի,

Անարգել յօրինում նոր շէնքեր իմ մտքի՛ . . .

Յօրինեմ, որ մտքովս հասնեմ երկնքին.

— Թէ չէ ո՞վ լինի տէր տիեզերքին . . .

1921.

ԿԱՏՈՒԻ ՎԻՇՏԸ.

Շա՛տ շատ անգամ ես եւ նախշուն իմ կատուն
Միտք եմ անում ու հա՛րց տալիս միշտ իրար.
— Ասա՛, ինչո՞ւ աչքերի մէջ քո սիրուն
Դառնութեան խո՛ր վիշտ է ցոլում անդադար . . .
— Մարդը, իբրեւ վայրի գագան մի ահեղ՝
Օր ու գիշեր — արիւնալի՛ իւր ձեռքով
Կոտորում է եղբայրներին իմ անմեղ . . .
— Ինչպէ՞ս անեմ, որ չ'տխրե՛մ ես հոգով . . .

1924.

ՃԱՆԱՊԱՐՀ.

— Էյ ուղեւոր. հագար տեսակ կեղտ ու կեղծիք
Զո՛ւր ես պահում նաւիդ վերայ՝ սրտիդ մէջ.
Հագար տեսակ որդ ու ռնի՛ր, մեղք ու չարիք
Կեանքդ պատած՝ կաշկանդում եմ քեզ անվերջ . . .
Մէկ լաւ նայիր. այդ բեռներով դու չես կարող
Մեծ ու դժար մանապարհդ շուտ կտրել . . .
Նաւիդ վերայ սիրտդ մաշող բեռները թող,
Թէ որ կ'ուզես յաւերժապէ՛ս տեղ հասնել . . .

Մարդ ես դու ժիր, մտքիդ նաւակը շարժիր
Եւ լոյսի՛ պէս քո ծննդեան ակունքներին մէկ հասի՛ր . .
Յաւերժական եւ անվերջ է պատմութիւնը քո կեանքի.
Դու եղել ես ամենուրեք — իրադարձում տիեզերքի՛, —
Եւ արեւի՛, աստղերի մէջ՝ անձայրածիր եթերում,
Արշալոյսի՛ եւ լոյսի՛ մէջ, կայծակներում, խաւա-
րո՛ւմ . . .

Դու ծնուել ես բնութեան հետ, աստղերի հետ յաւի-
տեան,
Դու եղել ես երկունքի մէջ՝ երկրագնդի ծննդեան . . .

Քո յաղթական գիտակցութեան խորքերից,
Դուրս բեր գարնան ճրագներդ եւ վառիր,

Որ լա՛ւ տեսնես հեռուներից, ժամանակի ժխորից
 Գո անցեալի անյայտ ու բարդ ուղիները բեռնակիր...
 — Տե՛ս. ապրել ես իբրեւ սողուն ջրերի մէջ անյատակ,
 Մերթ եղել ես սնունդ ու կե՛ր ծաղիկներին ներդաշնակ.
 — Հաւք ու քոչուն, բոյս, անասուն ու վայրենի՛ լեռ-
 նային, —
 Եւ ամէն ինչ ու ամէն տեղ դու եղել ես քո նամբին...

 Դու ապրել ես կեանքը հեռո՛ւ՝ հին ազգերի պատմա-
 կան,
 Բարելոնում, չին ազգի մէջ եւ Նեղոսի ափերին...
 Դու ես, որ կաս մեր էութեան հոգին անմահ, անբա-
 ժան, —
 Դու ես անցել հզօր ցեղի համայնական մե՛ծ ուղին...
 Մարդ ես դու ժիր. մտփիդ նաւակը շարժիր,
 — Տե՛ս. քո սրտում աստուածներ՛ը կան երկնափառ.
 Սուտ եւ ունայն բեռների քող եւ անցի՛ր,
 Առջեւդ կա՛յ յաւերժութե՛ան նանապարհ...

1927.

Ձե՛.

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ.

Մոռացայ իմ օրերը անհաշտ
 Եւ անցայ դէպի վե՛ր, դէպի դաշտ.
 Հարց արի ես քարին ու սարին —
 Միշտ հեռո՛ւ եւ օտա՛ր աստղերին.
 — Ասէ՛ք, ո՞ւր է, աւա՛ղ, իմ երազը փայլուն,
 Իմ ազատը անհուն ու գարուն...
 Եւ նա՛ ժի՛ր, երկնածիր իմ աստուած —
 Իր մասին սրտագին այս երգերը ասաց...

 — Ես շղարշ ամպերի ծովերից
 Զեփիւոններ եմ հիւսում.
 Մրմնջուն ալիքի լազուրից
 Շիթ ու շող եմ կորզում,
 Որ շոյեմ սիրասուն ալվարդին
 Ու հնչե՛մ եղեմի մեղեդին...
 Իսկ երբ լուռ եմ դաշտեր, արտ, արօտը դժիւեմ,
 Եւ անտառն է տխո՛ւր սօսաւում.
 Արեւի լոյսն ու սէրը վսեմ
 Շատ յաճախ այս երկրին եմ բերում,

Ուր ծաղկում է գարուն կախարդուն,
Ու վառում են յոյսերը անհուն . . .

Երբ լուսինը քախծո՛ւտ ու խոկո՛ւն
Ցնորֆնե՛ր է ցանում դիւթական .
Եւ լսում է զմայիլ բնութիւնն
Զառանցումը նորա կուսական . . .
Երբ ալիքն է խօսում՝ յար յուզուած .
Ծովը երգ է ասում, հողմը հարց է տալիս .
Երբ լեռներն են տխուր աղօթում՝
Միշտ անյայտ խորհրդով համակուած . . .
— Այդ ամէնը իմ խո՛ր, հին կարօ՛տն են լալիս . . .

Երբ հեռուն, լեռների կատարին —
Երկնփի՛ խո՛ր, հզօ՛ր եթերում
Միշտ արծիւն է նախրում փառարի —
— Այն իմ սէրն է անմահ ու արի՛,
Որ թեւե՛ր է տալիս միշտ նորան
Սաւառնել յա՛ղթ, հպա՛րտ ու մի՛այն
Ու ցրել եթերում իմ մտքերն ու զեղում . . .
Երբ ամպերն են յուզուած, խննուն,
Եւ գորգերը նոցա սեւաթոյր
Ծանրանում, կաշկանդում են աշխարհ,
Ու նետում կայծակներ, եւ կրակ ու որոտ .
Իսկ երկինքը՝ ասես կատաղած՝
Զեռփն շանթ, հրազէնֆ ահաւոր,

Պայփարի՛ է կանչում բնութիւն . . .
— Ես եմ այն, — իմ տենչանքն ու կարօտ, —
Որ եռանդ ու զայրոյթ եմ տալիս աշխարհին .
— Մրրիկներ է ծնում երկնահա՛ս իմ հոգին . . .

Երբ խոհուն երկնփի անդունդից
Զեգ արեւը նո՛ր կեանք է շողում .
Երբ փարվանք անհուն աստղերի
Ուխտաւոր իր նամբին անհատնում
Ճո՛խ երա՛գ է ցանում ու գնում . . .
Ես եմ այն, — բովանդակ աշխարհի
Ճշմարիտ իսկութիւնն ու հոգի՛ . . .
Այն իմ շողֆն է, ժպիտն հարազա՛տ
Վեհարար արշալոյսը փնջել .
Այն իմ գէսֆն է, իմ լոյսը ազատ
Արեւին սէ՛ր ու կե՛անք ներշնչել . . .
— Խոհուն մարդ, կեանքի տէ՛ր, իմաստ՛ւն .
Ե՛կ, ասես իմ գաղտնիքը, խորհուրդը անհուն .
— Ես եմ միտքը հզօր . ես հոգի՛ եմ անմահ,
Իսկ արեւն ու եթերը իմ շէնքն են, իմ գահ . . .

ՃԱԽԱՐԱԿ.

Մանիր մանիր իմ նախարակ
 Ժիր ժամանակ.
 Զար եւ բարու մալանչներից
 Մանիր դարեր, եւ օր, եւ կեանք.
 Կենսակծիկ սեւ դարերից
 Մանիր անցեալն — մահացուցակ . . .
 Ականջներդ թոյն եմ ածել,
 Շուտով շարժուի՛ր, որ վի՛շտ մանե՛ս.
 Անէծքն է քեզ աշխարհ բերել,
 — Մահ ու տանջանք դու միշտ ցանե՛ս . . .

Անիւ ունիս կայծակաբեւ,
 Ճաղեր ունիս, շանթ է լիսեռ
 Սոնակ ունիս կեղծիք ու սեւ,
 — Ունիս հրեղէն խայթո՛ց, բեւեռ . . .
 Անյայտ ոյժեր քեզ դեկավար,
 Ողջ աշխարհը քեզ օքեւան —
 Պտտում ես անյագ, յամառ,
 Ծնում շարժում տիեզերական . . .
 Մանիր մանիր իմ նախարակ,
 Ժիր ժամանակ,
 Մանիր ցաւե՛ր հաստ ու բարակ . . .

Քաջ եմ մարդիկ. կ'ուզեն մտքով
 Կեանքին իմաստ ու սէր, գտնել.
 Կ'ուզեն երկինք հասնել հոգով,
 — Ճշմարտութեան գահին տիրել . . .
 Զուր ջանքեր են. լալկան ուռին
 Իւր նիւղերը առմիշտ թեփում
 Անկարող է շիտկել կրկին . . .
 Խղճուկ մարդիկ տենչով լեցում
 Զուր մտքերի երկունքի մէջ
 Անկարող են ինձ ըմբռնել.
 Մանիր մանիր իմ նախարակ,
 Խոր ժամանակ.
 Քուլա-քուլա մանիր կեանքեր . . .

Դեռ առաջի կեանքի օրից
 Մարդը ուզեց ինձի հասնել.
 Քեզ նիւթիցի չար ոյժերից —
 — Մտքի գործը խափանել . . .
 Եւ այն օրից արագ յամառ
 Ժիր մանածից մարդու համար
 Յօրինում սո՛ւտ, կեղծիք ու սէր . . .
 Քո յօրինած կեղծիքի մէջ
 Մարդն է սողում դարեր ի վեր.
 Քանի՛ դեռ կան մահ եւ աւեր,
 Նա կ'տանջուի գո՛ւր եւ անվերջ . . .

— Մանի՛ր մանի՛ր իմ նախարակ
ժիր ժամանակ .

Մանիր դժոխք, ցաւ ու կրակ . . .

Միջուկդ լի արիւն ու թոյն ,

— Պտտուում ես դու կոյր կամֆով .

Դու ես մանել ձմե՛ռ, գարուն ,

Արե՛ւ, երկինքն իր հիւսուածֆով .

Անմտութեան շունչը քո մէջ .

Քեզ տուել եմ շանթէ թելեր ,

Որ կեանք ու մահ մանես անվերջ —

Եւ մանածիդ ֆուլաներից

Ձախորդութեան հիւսես թելեր . . .

— Կծի՛կ արայ սեւ մանածից ,

Իլկիդ վերայ փաթաթի՛ր ,

Խաւար ու ցաւ կեանքին նիւթի՛ր . . .

Թող սլանայ միտքը դէպ վեր ,

Թող գալարուի եւ գուր խոկայ .

— Զուր եմ ջանքեր . նշմարտութեան

Լոյսից նորան բաժի՛ն չ'կայ . . .

Կայծակի պէս դու թափ ունես ,

Դէ՛հ շուտ շարժուիր իմ նախարակ ,

ժիր ժամանակ .

Անելիքդ դու լաւ գիտես ,

Մանիր կեղծի՛ք հաստ ու բարակ . . .

Անմիտ մարդիկ . խեղճ ու կրա՛կ

Միշտ ապրում եմ ստութեան մէջ .

Միշտ յօրինում երազ անյագ ,

Ձիրք ու ձդտում , վայելք անվերջ . . .

Ազատութեան ու նորտութեան

Տրուած անմիտ գաղափարին՝

Թագաւորներ սին աշխարհի

Եւ ժողովուրդներ մերկ ու թշուառ

Կոիւներ եմ մղում յամառ —

Զուր կոիւներ անմի՛տ փառքի . . .

Բայց ամէն ինչ . փառք ու պարծանք ,

Անուրջ եւ իդձ , գարդ ու գարուն ,

Ազատութիւնն ու սեւ կապանք

— Խորտակում ես , դարձնում անիւն . . .

— Մանիր մանիր իմ նախարակ ,

Խոր ժամանակ .

Լիսեռներդ պտտի՛ր .

Մանի՛ր դժոխք , մահ ու կրակ ,

Մարդու սրտի՛ն փաթաթիր . . .

1903 .

ՇԱՐ-ՔԻՇԱՏ

(ՊՈԼՄ)

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ.

Ամպերը չեն որ անդադար անհունաբար
Շարում, փարում, ֆոդարկում են երկնակամար.
Սեւ ամպերն են այրող սրտի, յուզուող մտքի,
Որ պատել են դէմքը հզօր թագաւորի,
Դառնութեան խոր ստուեններ կան նորա դէմքին:
Բիւր լոյսեր կան նորա շքեղ պալատի մէջ,
Ուր տիրում են խնոյժ եւ սէր, բերկրանք անվերջ..
Բայց տխուր է արքաների հզօր արքան —
Անմասնակից խնոյժներին ու բերկրութեան.
Տանջում է նա՝ իր մտքերի յետեւն ընկած.
— Նորա հոգին թափանցել են վիշտ եւ կասկած...

Եւ կանչում է Շար-Քիշատն իր նախարարին.
Ու հնչում է վերքերով լի՝ նորա հոգին..
— Քեզ կանչեցի շուտով պատմեմ երազը խոր,
Մէջս վառուող հրդեհները այս ահաւոր.
Նիքում էի կարծիս կէսփուն, կէսարթուն —
— Ներսս ամբողջ, եւ ուղեղս, եւ իմ արին,
Բորբոքումով այրում էին հրդեհի պէս.
Այրում էին, կարծես մի տուն հեռո՛ւ, անտե՛ս,

Կիսակործա՛ն եւ մոռացուա՛ծ մի անշուք տուն,
Որին չ'կա՛ր ոչ կարեկից, ոչ օգնութիւն...

3. Իբրեւ հոգի աստուածային ու հզօր
Ես՝ յաղթարար աշխարհակալ թագաւոր —
Վառում էի ինչպէս մի տուն մոռացուած.
Իսկ բոցերը թշնամու պէս գազազած՝
Դուրս ժայթֆելով երակներից, իմ գանգից,
Խիտ պաշարել, պատել էին իմ մարմին.
Կրակի մէջ տեսնում էի, ինչպէս հեռուից
Պար էր բռնել, ծաղր էր անում անմիտ քամին.
Եւ ոսկորֆս — իմ տնակի սին ու գերան —
Այրում էին չո՛ր, չորացած փայտի նման...

4. Դարձել էի միշտ մի խարոյկ աննար, յիմար.
Իսկ իմ շուրջը անկարեկից էր ողջ աշխարհ,
Ու դիտում էր իբրեւ անփոյթ մի տեսարան..
Տանջանքը խոր կաշկանդել էր իմ լեզուն.
Իսկ աչքերս՝ սուզուած ցաւի մէջ անհուն՝
Ջանում էին դուրս գալ, թռչիլ իրենց բնից,
Ինչպէս յաճախ՝ պատուհանից հրդեհուող տան
Անօգնական խեղճ գոհերը վայր են նետում վերին
յարկից...

5. Մինչ աւելի սաստկանում էր թշնամական հրդեհը
այն

Եւ աւելի պիրկ պաշարում ինձ, իմ բերդը ան-
պաշտպան . . .

Քանի գնում այս խեղճ շէնքից նիւթական
Այրում էին, թափում գետին միս ու մկան . . .

Եւ հիմնովին կործանում էր աչքիս առաջ

Այս հողեղէն կառուցուածքը լուռ եւ անտէր.

— Կործանում էր աստուածային գեղեցկութեան
իմ պատկեր.

Կործանում էր, անիւնանում, թափում ցած . . .

— Այդպէս տխուր վախճան ունէր այս տունը հին,
Ուր ապրում է տասնե՛ակ տարի իմ լոյս հոգին . . .

6. Բայց տանջահար տեսնում էի, սեւ ստուերներ,

Սուրում էին, պարում էին թշնամաբար.

— Մահն էր եկել իր մշտական որսի համար,

Որ տիրանայ ցուրտ անիւնիս անհամբեր . . .

Մահն էր եկել՝ սեւ դրօշակ սեւ ձեռքին,

Որ կատարի իր յաղթական գործը մթին . . .

Մտքով յամառ՝ տեսնում էի, որ իմ յետեւ

Ծաղկում են վառ գարուն ու գարդ, սէր ու արեւ.

Կեանքն էր եկել վերջին անգամ տեսութեան . . .

Մահն ուզում էր ինձ պարուրել սեւ պատանքով,

Կեանքն ուզում էր ինձ կախարդել սէր ու երգով . . .

7. Քիչ էլ անցաւ, բերդս տիրեց չար թշնամին՝

Անպատմելի տանջանքի մէջ ոխերիմ

Մահը անգութ գրկել էր բութ անիւնը իմ.

Իսկ խանդավառ կեանքը ժպտուն ծաղիկներով

Այլեւ չ'կա՛ր . . . հեռացել էր իւր երգերով . . .

— Տե՛ս, թէ ինչպէս յուզուած է խիստ իմ հոգին,

Սիրտս տխու՛ր զարկում է խիստ, դառնագի՛ն . . .

Երազը ինձ կաշկանդել է զարգանդով . . .

Տեսնում եմ ես. փառքերը իմ գո՛ւր եմ, ունայն,

— Տանջում եմ ինձ աղմուկները զուր բերկրու-
թեան . . .

8. — Հաւատարիմ իմ նախարար. ինչպէ՞ս մեկնել
նշմարտաբար

Երազը այս, որ տիրել է տխուր սրտիս չարաչար.

Միթէ՞ կեանքը մի տեսիլ է պատահական,

Միթէ՞ գո՛ւր եմ մտքերը մեր կախարդական . . .

Ինչո՞ւ, ասա, զուր կոիւներ ես մղեցի,

Արժանական իմ յաղթական փառքերին . . .

Եթէ միշտ է, որ կեանքը մեր կոյր է, ունայն,

Եթէ միշտ է, որ աշխարհի պայմաններում

Բաժին չ'կայ մեզ լոյսերից նշմարտութեան, —

Ես կ'պոկեմ թագն ու պսակ իմ նակատից

Ու յաւիտեան կ'հեռանա՛մ այս ժխորից . . .

9. «Աշխարհի տէր, արքաների հօր արքայ,

Քո փառքերին, քո զօրքերին սահման չ'կայ.

Շար-Քիշատը՝ հօրագոյն թագաւոր —

Անմահական, սրբազան է նորա անուն . . .

— Արեւ ես դու բնութեան մէջ փառաւոր . . .

Քո գայրոյթը միշտ ահաւոր, քո գութն ու սէր միշտ
անհուն :

Ողջ աշխարհը աղօթում է քո գահին .

Դո՛ւ ես, որ կաս եւ լոյս կ'տաս մեր կեանքին . . .

Եւ վնասել քե՛զ չեն կարող ոչ ահ, ոչ հուր,

Հանգիստ եղի՛ր, մի պղտորիւ սիրտդ իգուր . . .

10. Զուր եմ, արքայ, քո սուրբ հոգին մաշում մտքեր .
Զուր մի՛ ժխտիր կեանքիդ անմահ բերկրանքն ու
սէր .

— Իսկ թէ կ'ուզի Շար Քիշատը, արքան հօօր,
Սուրհանդակներ ես կ'ուղարկեմ երկրէ երկիր
եւ կ'կանչեմ գիտուններին անխտիր .

Թող գան տեսնեն եւ շուտ մեկնեն երագդ խոր,
եւ փարատեն կասկածներդ անսովոր» :

— Այո՛, գնա՛ եւ հաւաքիր գիտուններին,

Թող գան մեկնեն երագը իմ դառնագին . . .

Իսկ ես մենակ դեռ կ'մնամ ցաւերի հետ իմ անհուն,
Մինչեւ որ գան եւ ինձ մեկնեն ճշմարտութիւն . . .

11. Հիմքը նեղեփուած շէնքը արդեօք կ'ապրի՞ երկար .
Լուռ կ'մնա՞յ հողմի ժամին քաւուտ անտառ . . .
Ինչպէս ծովը մրրկահար յուզում է խոր,
Ճշում, շաշում, կռուի կանչում միշտ ահաւոր, —

— Շար Քիշատի ներսումն այդպէս մրրկն է խուլ
որոտում,

Նորա սիրտը թնդում է խոր եւ յուզում . . .

Ինչի՞ն է պէտք. թող գան անթիւ գիտնականներ
եւ զո՛ւր փորձեն մեկնել նորա միտքը յամառ .

Անմիտ ցնորք . — Ո՞վ կարող է ճշմարտաբար

Ներս թափանցե՛լ եւ ուրիշի հոգին տեսնել . . .

12. Քանի կ'ուզէ թող գան գիտուն եւ իմաստուն —
— Շար-Քիշատին չեն կարող տալ ճշմարտութիւն :
Կեանքի հարցը պարզ է արդէն նորա համար .
Նորա մտքի կառուցուածքը հանճարեղ
Վաղուց արդէն նեղփուած էր խո՛ր, չարաչա՛ր,
Ու անդադար խորտակում էր շէնքը շէնք,
Լուռ ծաւալում մի աւիրակ սոսկաբա՛ր . . .
Նա դիտում էր աւերմունքի գործողութեան,
Ողբում վաղանց իւր փառքերը, իւր օրերը բեր-
կրութեան . . .

13. Յիսուն տարի ապրի՛ հօօ՛ր ու փառաւոր,
Յիսուն տարի լուսաւորի կեանքի անհաս բար-
ձունքում .

Յիսուն տարի թագաւորի աշխարհներին ահաւոր,
Յիսուն տարի երկրպագի սէր ու խնդում . . .

Իսկ հայացքներ խոր ու տոկուն, իսկ յոյսերը եւ
տենչանք,

Եւ անհամար ձեռարկների եռանդն ու ջանք . . .
— Ողջը յանկարծ խորտակում էր եւ վերանում
անդառնալի՝

Մրրկահար սրտին բերում դատարկութիւն ահրե-
լի՝ . . .

— Եւ նայում էր Շար Գիշատը անցեալին .

Հագա՛ր ափսո՛ս, որ գո՛ւր, անխօս կործանում էր
մեծ հոգին . . .

14. Փոր ու փռման եւ անգիւման միտք էր անում ու
դատում .

— Ասէ՛ք, ինչո՞ւ, ի՞նչ պատահեց, որ գարունս
թառամեց,

Ինչպէ՛ս եղաւ՝ արեւն հանգաւ, եւ իմ կեանքը խա-
ւարեց . . .

Ինչո՞ւ եկաւ, սիրտս տարաւ աշունն անհուն եւ
տրտում .

— Ի՞նչ պատահեց, որ բնութեան վեհատեսիլ պատ-
կերին

Էսպէս անսէ՛ր, անտարբէ՛ր է իմ հոգին . . .

Եւ նա անհուն ու դատարկի՛ւն միտք էր անում ցա-
ւագար .

— Կ'ուզե՛ս եղի՛ր աղքատ ու խեղճ, կ'ուզես եղի՛ր
միշտ հարուստ,

Աշխարհը ողջ գործիք դարձուր քեզ համար, —

Վերջը մէկ է ու հաստատ . շուտով անին կ'դառ-
նաս,

— Շէն աշխարհից քեզ չի՛ մնայ ոչ մի մագ . . .

15. Եւ նա կրկին ու դառնագին մի՛տք էր անում .

— Քանի՛ կ'ուզես փարթամ ապրիւր աշխարհում .

Հասի՛ր գարնան, նշմարտութեան արեւին,

Լսի՛ր սիրոյ կախարդական աստղերին . . .

Թող սուրբ հոգիդ վառէ մտքեր հոյակապ,

Կրծքումդ լի՛ ձիրք ու ձգտում երանելի ու անչափ .

— Վերջը մէկ է . մահը կ'գայ իր չար որսին եւ
կ'տանի՛,

Քեզ գուր կ'անի անմի՛տ փռչի՛ ու վայրենի՛ կ'ցա-
նի . . .

Աչքերը այս, որ տեսնում են արե՛ւ, աստղեր,

Ուղեղը այս, որ ճի՛գ ունի նշմարտութեան,

Մի օր պիտի փռչի անան, որ բի՛ւր դարեր

Ցուրտ հողի տակ դատապարտուած լո՛ւռ մնան . . .

16. Եւ նա իգուր, լուռ եւ տխուր միտք էր անում .

Ահա կեանքիս փառքն ու պսակ, ոսկի՛, արծաթ .

Լա՛լ ու գոհար եւ աղամանդ, ապարանքներ ոսկե-
պատ . . .

Տասնեակ տարի՛ — կեանքն արդարի,

Միշտ յաղթութիւն, նուաճում . . .

Հարստութիւնը աշխարհի

Ահա՛, ձեռքիս է գումարուած . . .

Հագա՛ր տեսակ ծաղիկ ու զարդ, վայելք ու երգ
անտրտում

Իմ անսպառ ցանկութեամբ եմ յօրինուած,
Որ կախարդեն եւ զարդարեն իմ հոգին,
Որ յաւիտեան սիրոյ լո՛յս տան իմ կեանքին . . .

17. Հագար տեսակ ուղիներով — դրուստ ու պա՛րզ եւ
նենգաւոր —

Հասայ կեանքիս այս ծայրահեղ փառքերին.
Մտնով տեսայ իմաստութեան բարձունքները լու-
սաւոր —

Հիմայ տխո՛ւր յետ եմ նայում իմ անցեալին, իմ
օրին, —

Էս ձեռքերովս կատարած գործերին . . .

— Միայն մի բան է գլխաւոր ընկնում աչքիս,
Միայն մի բան է խորտակում խեղճ հոգիս . . .

Աշխարհն անմիտ, կեանքը ունա՛յն, անցաւոր.

— Զ՛կայ ոչինչ արեւի տակ յաւերժակա՛ն, փա-
ռաւո՛ր . . .

Հարուստն ու մեծ, ազգատն ու հորտ,

Զարն ու բարին, ռերագործը եւ արդար,

Հաւատացող եւ անհաւատ, լաւը եւ վատ, կոպիտն
ու խորք,

— Ողջը ունի մի վայրենի՛ եւ անխտիր հանապարհ,

Որ սահմանել է աշխարհին հակառակիւ.

— Ծնուի՛ր, տանջուի՛ր, զո՛ւր ու տխո՛ւր մահա-
ցի՛ր . . .

18. Ու ինքն իրան լուռ ու միայն միտք էր անում.

Ահա իմ քազն արքայական, որ աշխարհում
կախարդում էր, ոգեւորում, կանչում հեռուն.

— Ա՞յս եմ միթէ իմ փառքն ու զէնք, սուր եւ սու-
սեր,

Հագար ու բիւր հին յիշատակ, անգին իրեր,

Որ պատմում են գործերը իմ, իբրեւ վկայ.

Սէր ու խնդում ու վայելքներ, անթիւ կոիւ,

Արքայական փառք ու պատիւ,

Այս ոսկեպատ ապարանքներ, տենչանք ու կիրք,

Որդի եւ կին, մտերմութիւն, տաղանդ ու ձիրք,

Ի՞նչ եմ դոքա . . . հնչիւնների դատարկ մի կոյտ,

Որ կորչում է վարկենաբար իմացութեան լոյսի
տակ . . .

Ի՞նչ եմ նոքա մարդուն տալիս այս մոռացուած
երկնի՛ տակ,

Երբ ինքն իրան նշմարտաբար չի՛հանաչում նա ան-
փոյթ . . .

19. Ի՞նչ եմ անում այս պայմանում քշուառ մարդիկ.

Ո՞նց եմ ապրում նոքա անփոյթ ու երջանիկ.

Արդեօ՞ք երբէք չե՞մ մտածում կեանքի մասին.

Իսկ առեղծուածը գոյութեան չի փոքորկում նոցա
հոգին . . .

Ի՞նչ է կեանքը ու տիեզերքը նոցա համար . . .

Շար-Քիշատը դուրս է գալիս ակեղծուած իր
մտքով ,

Եւ խո՛ր դիտում , ու ֆննում է մարդկութիւնը ան-
արդա՛ր . . .

— Մարդը սիրում եւ ասում է միշտ կրքով ,
Զարկում , քափում , գործեր վարում թշնամաբար ,
Խաբում , լափում , փորձեր անում սրտով խաւա՛ր . .

20. Ինչպէս այնտեղ դերասանը բիմի վերայ
Հեշտ ապրում է շինծու իւր կեանքն անմիտ ձեւով .
Մերթ գայրանում , մերթ սուտ լալի՛ս անխնայ ,
Եւ գուր լեցնում իր կեանքը բիւր հոգսերով , —
— Այդպէս է միշտ մարդը ապրում աշխարհում .
Միշտ դերի մէջ ողորմելի՛ ստում է նա եւ խաբում :
Նորա կիրքը , թշնամութիւն , հոգս ու սէր ,
Փառք ու պատիւ , ձիրք ու ձգտում եւ յոյսե՛ր —
Կատարում են , ինչպէս այնտեղ բեմի վերայ .
— Եւ չ՛գիտէ խեղճը երբէք , ի՞նչ բան է դա . . .

21. Իսկ փառահեղ բնութիւնը ի՞նչ է ասում . —
Մրմնջում են անյայտ խօսում բոյս ու ծաղիկ .
Սար եւ անտառ խո՛ր խորհուրդ են փսփսում .

Մեր գոյութեան երգը անյայտ խօսում են ծով ու
ալիք . . .

Քամին ի՞նչ որ բան է կորցրել , հարցուփորձով է
ման գալիս .

Իսկ երկնում՝ աստղերը վառ եւ լուսին

Ինչ որ անյայտ կեանքի՛ մասին են հարց տալիս . . .

Ո՞ւմ խորհուրդն է բնութիւնը անվերջ ֆննում
սրտագին . . .

— Ման է գալիս Շար-Քիշատը միշտ տխուր ,
Զա՛յն է տալիս իր օրերին , իր մտքերին սեւ ու
հուր . . .

— Ա՛խ , երանի՛ կեղծիքը այս մոռանամ .

Սեւ ժխորը թողնե՛մ , ընդ միշտ հեռանամ . . .

Արքայական թագն ու պսակ , զարդարանք ,

Այս սրտմաշուկ վայելքն ու ելք , ապարանք —

Գէթ մոռանա՛մ ու թափառե՛մ երկրէ երկիր .

— Եարար մի օր կ՛ազատուե՛մ ես սեւ դժոխքից
այս պատի՛ր . . .

1. Խորհրդաւոր, անգութ եւ մո՛ւթ ֆակատագիր.
— Ի՞նչ ես իգուր փորձանքներովդ պատիր
Ծնուած օրից պատում մարդու սեւ ուղին.
Եւ կաշկանդում կեանքը թշուառ ու թունալից.
— Ո՞վ կարող է իրաւ խորշել ահից, մահից
Յաղթահարել օրէնքը պիրկ — բնութեան,
Եւ նո՛ր տաճար կանգնել կեանքին ու սրտին,
Ապրել վսե՛մ անդրաշխարհում ազատութեան . . .
Ինչպէ՞ս պատռել ցանցը հզօր պատճառների՛.
— Այս մութ բանտում գերուած ենք մենք, — միշտ
գերի՛.
Ո՞վ է հիմնել այս սեւ՛ բանտը ֆակատագրի . . .
2. Մերն են արդեօք մեր մտքերը ու գործեր.
Ո՞վ է տէրը ձեռնարկների հոյակապ,
Երբ ամէն ինչ. ցնորք եւ իզձ, լոյս ու սէր
Կատարում է մեզնից անկա՛խ, անխուսափ . . .
— Ճիշտ է, յաճախ բռնկում են հոգու մէջ
Անդրաշխարհի անմահ տենչեր ու լոյսեր,
Որ վառում են մեր էութեան արեւն անշէջ
Եւ յօրինում յաւերժութեան երազներ, —
— Բայց նի՛շտ է, որ գերուած ենք մենք այս նիւ-
թական իրադարձից,
Հանճար է պէտք — հզօր աստուա՛ծ, որ ազատուենք
այս բանտից . . .

3. Գործերը սուտ, խաւարը մութ, վայրենի՛,
Երջանկութեան տենչանք ու ջանք, ծրագիր,
Ձիրք ու ձգտում, կիրք ու կերտում անուանի՛,
Կեանք գարդարող բիր ձեռնակներ վեհ եւ ժիր —
— Ժամանակի հաճո՛յքն են գուր եւ ունայն.
Մի օր պիտի անհետանան, տրուի՛ն մահուան . . .
— Մահն է միայն էս աշխարհի աստուածը հին,
Որ տերել է անգթօրէ՛ն մեր հոգին . . .
4. Թող գան ժպտան գարունները սիրառատ,
Եւ մեր սրտում թող ճշմարտի փայլե՛ն լոյսեր.
Թող միշտ շողա՛ն կախարդաբար աստղ, արեւ,
Եւ երկիրը գուգեն ծաղիկ ու տերեւ.
Թող հանճարի հոգին վառի միտքը հզօ՛ր, անարատ
Ու յօրինի կեանքի համար արշալոյսներ լուսաբեր.
— Վերջը մէկ է. ձմեռը ցուրտ կ'գայ մի օր՝ վաղ
թէ ուշ.
Մահը դաժան կ'խորտակի սէր ու գարուն, երա՛զ
ու յուշ . . .
Ո՞վ կարող է իրադարձը անհրաժեշտի
Իւր հանճարի թափով շեղել, կործանել միշտ.
Եւ մեր կեանքում կանգնե՛լ տաճար ճշմարտի՛,
Ու թօթափե՛լ այս գերութեան տանջանքն ու վիշտ . .
5. Շրջապատն այս՝ խորհրդաւոր հանելուկ.
Մեզ մաշում են իրարանցումն ու ժխոր.

Մեզ քնում են մահն ու զարգանդ, ցաւ ու սուգ,
Իսկ լոյսերին վեհ ճշմարտի մենք կարօտ ենք ու
օտա՛ր:

Մեր երկնային էութիւնը հոգեւոր
Գերութեան է դատապարտուած վշտահա՛ր . . .
Մեր սրտի մէջ ահը դժգո՛յն, մահը անհո՛ւն
Կանգնած ունի իւր սեւ գահը — տանջանք ու թոյն:
— Ո՞վ չի տեսնում, որ գերի ենք աշխարհում,
Իսկութիւնը մեր սուրբ կեանքի չենք ճանաչում
Խաւարում . . .

— Քանի՛ խղճուկ եւ թեւագուրկ մեր սրտի մէջ
Պէտք է իշխի՛ մահը ազա՜հ — չարաչար.
Պէտք է ճնշի՛ գահը նորա անարդա՛ր,
Մենք չենք տեսնի ճշմարտութիւ՛նն երկնաէջ . . .

6. Եւ անհամար միտք ու մրրիկ, աւեր ցաւերը սաստիկ
Թշնամական զօրքերի պէս շրջում էին նորա մէջ.
Սուրում էին, զարնում նորան իբրեւ ահեղ փոթորիկ
Եւ ծովի պէս ալեկոծում զո՛ւր, անվե՛րջ . . .
— Ինչո՞ւ, ասէ՛ք, բանակները իր զօրքերի՝ թշնամին
Այդքան ազատ զարկել է ժիր նորա սրտում.
Ինչպէ՞ս եղաւ, որ ներս խուծեց հարամին
Ու անխնա՛յ կործանում է բերդը հին . . .
Ե՞րբ կ'իինի ճակատամարտն ահրելի
Շար-Քիշատի ալեկոծուա՛ծ հոգու դաշտում . . .

— Է՛յ անհամար միտք ու մրրիկ, — ով հարամի՛
չար զօրքեր,
Ո՞ւր էք գալիս թշնամական զօրագնդեր,
Ի՞նչ էք ազա՜հ գրոհ տալիս ու ներս խուծում բերդի
խորքեր.

Ո՞վ է տէրը այս զօրքերի, ո՞վ է ուղղում յարձակ-
ման.

Ո՞ւմ ամբոցին կ'ուզեն տիրել անարժա՛ն . . .

7. Պաշարուած էր Շար-Քիշատը մտքերով
Եւ յուզում էր իբրեւ հզօր ու խոր ծով, —
Մինչեւ իր ծոցն առաւ նորան փունը նուրբ
Ու տարածեց նորա սրտին իւր թեւերը մեղմ ու
սուրբ . . .
— Անմահութեան վրաններից ուղարկուած՝
Նուրբ երազներ՝ լուսատեսի՛լ, զմայի՛լ.
Քննո՛յշ անուշ ձեր թեւերին հոգիներ՝ կան ու աս-
տուած.
Ձեր հեւքն ու ձեւք արթնացնում են անմահ յուշե՛ր
գարունփի . . .
Խռիւ՛ք, սահե՛ք երկնփովը մեր սրտի,
Շոյե՛ք հոգին ձեր սուրբ թեւով ճշմարտի,
Հնչե՛ք, կանչե՛ք դէպի անյայտ ուղիներ,
— Ասե՛ք, խօսե՛ք վհատ սրտին յաւերժական լոյս
ու սէ՛ր . . .

8. Նուրբ երազներ, սուրբ երազներ ոսկեվառ
Անհուն թելով, սիրուն ձեւով հոսում են խիտ.
Բիւր տեսիլներ անց օրերի՛, ներկայի
Պաշարո՛ւմ էն Շար-Քիշատին ցնորամիտ . . .
— Սահուն, հոսուն եւ միշտ խօսուն ո՛վ երազներ
Սրտին բերէ՛ք անմահ գարուն, եղեմի սէր . . .
Ահա եկան երազները յորդ ու շփոթ,
Սրտին բերին մի դառնագին ահ ու կարօ՛տ . . .
Ահա հեռուից լեռները կից — ուղտերի պէս
Մոնչում են, առա՛ջ գալիս անհոռնի՛.
Յարձակում են շղթայաձե՛ւ, դելի՛ պէս,
Յարձակում են խեղճի՛ վերայ վայրենի՛ . . .
— Զարգանդապատ՝ ճշո՛ւմ է նա ահաբակ,
Կրկին սուգում երազների ծո՛վն աղէկ . . .

9. Եւ կանգնած է նա անծանօթ ծովափին.
Իսկ յետեւից ժայռերը սեւ, գազազած՝
Վայրենական հայացքներ են նետում խեղճին . . .
Գազանի պէս գազազած են ալիքներ —
Հարուածում են լերկ ափերին, պտո՛յտ գալիս.
Փրփրատեսիլ լեռների պէս կատղած ջրեր
Թշնամաբար յարձակւո՛ւմ են, գրոհ տալիս, —
Որ շուտ բռնեն Շար-Քիշատին իբրեւ գերի
Եւ ուսերին ֆշեն, ծո՛վն ահրելի . . .
Ու անհամար կայծակների ժապաւէններ —
Հրածին թելեր, իբրեւ օձեր ու բոցեր,

Փայլատակում, կտրատում են երկնակամար, —
Եւ պայթում է մրրիկը չար, յաղթարար . . .
— Փախուստ, կորուստ . . . ո՞ւր հեռանալ դժոխ-
փից.

Ճշում է նա, կրկին զարթնում խո՛ր ֆնից . . .

10. Կրկին մթի՛ն երազների երամներ —
Խննում են զարհուրելի տեսիլներ:
— Մի աշտարա՛կ իր երկնահաս կատարով
Ցցուած անթիւ աստղերի մէջ եթերի՛.
Նորա ծայրին նա է մենակ անխռով
Դատո՛ւմ, դիտո՛ւմ չարն ու բարին աշխարհի:
— Հեփաթների սիրանուշը, սինամ-դուշը դիւ-
թական

Թռա՛ւ, եկաւ հեռուներից եթերի՛.
Որ դիւթական իր թւերին նորան տանի՛
Դէպի երկի՛ր չնաշխարհի՛կ, յաւիտեան . . .
— Սիրուն՝ թռչո՛ւն եղեմական աշխարհի
Շար-Քիշատը իւր մանկութեան օրերից —
Յիշում է ֆեզ հեփաթի պէս բերկրալից . . .
Քո թւերին՝ սուրբ կարօտով մոլորում՝
Թող նա ճախրի՛ դէպի գարուն եւ աստուած . . .

11. Սինամ-դուշը Շար-Քիշատին ոսկի թւին
Կայծակի պէս տանում է վե՛ր ու հեռո՛ւ.

Եւ բացուում է նորա առջեւ երկինքը խո՛ր, ահաբ-
կո՛ւ . . .

— Այդպէս արա՛գ — երագների ֆնֆոյշ նաւով ան-
մարմին

Ճախրի՛ր, հասի՛ր անմահների հայրենիք,

Որ բա՛ց անի աշխարհը քեզ իւր գաղտնիք . . .

Եւ նա ահա արեւների անմահական ճնապարհին

Եւ աստղերի՛ կախարդական խնամոյքում

Լսում է խոր յաւերժութեան զանգերին,

Որ հնչում իսկութի՛ւնը հոգիների անտրտում . . .

— Աւա՛ղ, յանկարծ այդ ահրելի՛ բարձունքից

Նա դառնագին գահավիժո՛ւմ, նետւում է ցած .

Խռովայոյզ ցաւե՛ր, դաւե՛ր տանջալից,

— Ի՞նչ էք ուզում Շար-Քիշատից մոլորուած . . .

12. Կրկին երագ. կրկին հրդեհը նախկին

Պատե՛լ է խիստ ապարանքներն ու նորան . . .

Ինքը նորից հրդեհի մէջ, մահը աչքին . . .

— Կարմիր բոցեր, կրակէ օձերը հասան

Ու բռնեցին, պարուրեցին խեղճի մարմին . .

Մահը տխո՛ւր կանգնած է լո՛ւռ նորա դէմ .

Նա եկել է իւր գորգերով արնախում —

Իւր բաժինը գորով առնի՛ ու տանի՛ . . .

Անկոչ հիւրը՝ դաժան սուրը իւր ձեռքին՝

Խորտակո՛ւմ է նորա շէնքը եւ մարմին . . .

13. Քանի խորն էր հուրը լափում մարմինը զո՛ւր, ան-
ցաւոր,

— Էնքան թոյլ էր մահը գործում ահաւոր:

— Հասէ՛ք, տեսէ՛ք. տանջանքի մէջ վայրենի՛

Տեսնում է նա մահը մահուան մեր կեանքի . . .

Հոգով արի՛ — տեսնում է նա կործանումը նիւ-
թերի,

Որ միշտ միակ փրկութիւնն է աշխարհի . . .

Եւ նա նորից զարթնում է իւր խոր ֆնից .

Կրկին վհատ եւ յուսահատ միտք է անում,

Իւր օրերին եւ յուշերին ձայն է տալիս . . .

Փոր ու փոշման, օտա՛ր, հեռու աշխարհից

Իր սեւ բախտն է սգում, երգո՛ւմ ու լալիս . . .

— Դո՛ւ, աշխարհի այս նիւթական բանտում գե-
րուած,

Պատռի՛ր նիւթէ դաժան հանգոյցն, եղի՛ր աս-
տուած . . .

14. Ո՞ւր է, չ՛կաս ով անթափանց խոր գիշեր,

Ե՛կ, տարածի՛ր միշտ անխնայ քո փէշեր . . .

Շուտով դարձի՛ր կործանարար սեւ խաւար .

Թող գան, անցնին ու վերանա՛ն քո գորգեր,

Որ շուտ արե՛ւ ու լոյս տեսնի կեանքը մեր . . .

— Խարոյկները թող բորբոքուին արիւնավազ .

Եւ զուր լափեն անմեղների՛ անհամար .

Կիրք ու տանջանք, դահին, ճահին անպակա՛ս

Թող գան շուտով եւ աշխարհը հեղեղեն
Թող գայ մահը — մեր քշնամին չարաչար,
Եւ իր որսը շուտով առնի՛ ու տանի՛
— Միայն այդպէ՛ս մեր սուրբ հոգին իր լոյս ուղին
կ'գտնի՛ . . .

— Ասէ՛ք մարդիկ. չէ՞ որ մահն է քշնամին,
Որ տիրում է մեր սրտերին անկուշտ ու միշտ.
— Ելէ՛ք, հասէ՛ք, տանջանք բերէ՛ք, տանջանք ու
վիշտ,

Տանջանքը խո՛ր մա՛հ կ'բերի սեւ մահին . . .

15. Մտերը խո՛ր այրում են գուր Շար-Բիշատին
Ու խոստանում մի նոր-աշխարհ պայծառ ու վառ.
Երազներն են քեւաւորում նորա հոգին
Եւ յօրինում աստղ ու արեւ միշտ պայծա՛ռ . . .
— Անյայտ հեփաթ. կրկին եկար դու այցի.
Ժխոր ու խոր ակեկոծո՛ւմ, շո՛ւտ անցի . . .
Տեսնում է նա չնաշխարհիկ մի պատկեր —
Լուսատեսիլ մի ուրուական, մի աստուած —
Խորհրդաւո՛ր ցուաց, շողաց խուլ բառեր . . .
— Խասի՛ս-Ադրա, Խասի՛ս-Ադրա . . . Երկնփի լոյս.
Դու չե՞ս արդեօք, որ բերել ես կեանք ու յոյս . . .

16. Խասիս-Ադրա, Խասիս-Ադրա անմահական,
Երանաւէտ Իգդուրբարի նախահայր.
Իբրեւ աստուած՝ անդրաշխարհի գահը տեսար,

Հոգեպայծառ քո հաննարով յաւերժութեան դու
հասար .

Ու երկրնփի կամքը ձեռիդ արաչական՝
Կործանումից դու փրկեցի՛ր մեր աշխարհ . . .
Եւ վշտահար կեանքի հովտում կենդանի՛ յոյս՝
Դու մեկնեցի՛ր ծիածանը, — մեզ կախարդող ան-
մահ լոյս,

Որ բերում է մեր սրտերին խինդ եւ սէր,
Որ կանչում է դէպի գարնա՛ն ուղիներ . . .
— Խասիս-Ադրա, Խա՛սիս-Ադրա յաղթարա՛ր.
Դու կարո՛ղ ես յաւերժութեան դուռը բանալ մեզ
համար . . .

«Ես եմ արֆա՛յ, նախահայրը Իգդուրբարի,
Խոր երկնփից ես եկել եմ քեզ այցի՛» . . .

17. — Խա՛սիս-Ադրա. արի եւ տես իմ փշեր
Ու փարատի՛ր կասկածներն իմ հոգեկան, —
Որ խայթում են ինձ օձի պէս օ՛ր, գիշեր . . .
— Ի՞նչ է կեանքը. անմիտ մի խա՛ղ պատահար
Թէ՞ մի ձգտում դէպի երկինքն անսահման . . .
Մահն ինչո՞ւ է տիրել կեանքին մոլորուած,
Աշխարհը ողջ մատնե՛լ ցաւի, գերութեա՛ն . . .
Խասիս-Ադրա. մեզ երկնփի դուռը բաց. —
Տեսնենք, ճի՞շտ է, թէ աշխարհում կա՛յ աս-
տուած . . .

Ասա՛, խօսա՛. մա՛հն է տէրը այս կեանքի,
Թէ՞ կայ ուղի անմահութեան երկինքի՛ . . .

«Յաւիտեական լոյսերով պատած՝
Քաջ իգդուբարի նախահայրն եմ ես.
Երկնքի գահից, հեռու աստղերից
Եկել եմ ահա այցելութեան քեզ . . .
Անցել եմ հեռու՛, անյայտ ուղիներ,
Հանապարհները անմահ եթերի՛.
Բերել եմ քեզի լոյսը ճշմարտի,
Եկել եմ, յայտնեմ քեզ նո՛ր գարուններ . . .

Զո՛ւր էք աշխարհը համարում ունայն,
Ուր անհրաժեշտի ընթացքը յամառ
Տիրապետում է կեանքո՛ւմ անխափան.
Իսկ մահը՝ նորա անմիտ ղեկավար՝
Ամէն տեղ ու միշտ անխնայ եւ միշտ
Տարածում է իւր աւերմունքն ու վիշտ . . .

Անում են բոյսեր — ծաղիկ եւ անտառ —
Կարո՞ղ են արդեօք նոքա չ՛բուսել.
Վազո՛ւմ են գետեր, աղբիւրը կայտառ . . .
Կարո՞ղ են նոքա կանգնե՛լ, չ՛հոսե՛լ . . .
Անխուսափելի իրաքանցի մէջ
Մեկնել է մահը իւր սեւ՝ դրօշակ.
Ողջ կեանքը արել ցաւի ելեւէջ,

Ուր դահիճների կիրքը՝ — սանձարձակ,
Իսկ ազատութեան լոյսերն է մարած,
Ուր մա՛հն է միայն աշխարհի աստուած . . .

Բայց անհրաժեշտի գալարումից վեր
Կայ ազատութեան ոսկի՛ հայրենիք.
— Այնտեղ աշխատանքն, հոգին անվեհեր —
Յօրինում են ձեզ կեանքի նո՛ր գատիկ . . .
— Մերժում անցաւոր փառքի՛ն, վայելքի՛ն . . .
Սուրբ ուղիներով եւ միշտ դառնագին
Շարժեցէ՛ք զօրքերն անմիտ մահու դէմ.
Երկրպագեցէ՛ք տանջանքը վսեմ . . .
Տանջանքը եւ վիշտ յօրինել են միշտ
Երկինքը, արե՛ւ, աշխարհ ու հոգի.
— Ձեր արարչական աշխատանքը միշտ
Ձեզի բա՛ց կ՛անի դռնե՛ր երկնքի . . .

Եւ անհրաժեշտի դազգահի դիմաց —
Կանգնեցէ՛ք դազգահ ստեղծող կամփի.
Անվե՛րջ յօրինէք աշխատանք — աստուած,
Որ չ՛ո՛ր լոյսերով աշխարհը վառի . . .
— Մերժո՛ւմ բիրտ նիւթին . . . թող վառուի՛ հո-
գին

Եւ անմա՛հ արեւ դառնայ տիեզերքին, —
Որ շո՛ւտ վերանայ աշխարհից մթին
Ձեր կեանքը մաշող անխուսափելին» . . .

1. Ո՞վ չի տեսել ծովը ահեղ կռուի ժամին,
Երբ սուլում է վիշապի պէս խուլ ֆամին
Ու տարածում փոթորիկներ սե՛ւ քեւին . . .
Երբ ամպերի բանակներից շանթ եւ հուր
Թշնամու պէս պաշարում են կռուի բեմ . . .
— Ահա պայթեց փոթորիկը: Օդն ու ջուր
Խառնեց իրար ժխորների մէջ դժխեմ . . .
Եւ ջրերի լեռները փաջ
Ոտից գլուխ փրփուր հագած՝
Յարձակուեցան քշնամական գորֆի վերայ
Ու պոկեցի՛ն, խորտակեցին ափունք ու ժայռ . . .
— Ծովը հոգ՛ր, մրրկահա՛ր, անխնայ
Ճչում է խո՛ր, կռուի կանչում ողջ աշխա՛րհ . . .
2. Ո՞վ չի տեսել մրրիկներից, կռուից յետոյ
Ծովը յստա՛կ, անյատակ,
Երբ նիրհում է նա մահիճումն իր խաղաղ:
Երբ արեւի միշտ կենարար լոյսերի տակ
Նա շողում է ժպիտ ու զարդ, ֆնֆո՛յշ խաղ .
Եւ հեռաւոր ափերի մէջ աննման
Երգ ու զրոյց է յօրինում դիւթակա՛ն, —
Ու երագում նո՛ր առաւօտ, լոյս ու սէր . . .
— Ծովը յանախ փսփսո՛ւմ է երագներ . . .

3. Նո՛ր է ծնուել Շար-Քիշատը իր մօրից,
Նոր լոյսերով շողշողում է իւր հոգին,
Կռուից յետոյ մրրկահար խոր սրտից
Վերացել են մահիճները սեւ ու սին . . .
Ո՞ւր է, չ'կան կասկածները, վիշտ եւ կիրք,
Մահ տարածող դահիճները միշտ անգուր,
Էս աշխարհի միշտ յանցաւոր տեղն ու դիրք . . .
Թեւաւորուած՝ լոյս է տալիս նորա հոգին .
— Ելէ՛ք, տեսէ՛ք վերածնուած Շար-Քիշատին . . .
4. Մրրիկների ահեղ ժամին
Նա համարձակ բաց էր արել իւր հոգին,
Որ ներս խուժեն արեւները երկնֆի՛
Ու խորտակեն հին սարգն ու կարգը անմիտ,
— Յեղաշրջեն ծովերը բարկ էս կեանքի,
Եւ հաստատեն մի նո՛ր տաճար ճշմարիտ . . .
Ու ներս խուժեց հեղեղի պէս ծո՛վը լոյսի —
Աշխատանքի՛ սուրբ արեւը կենարար .
Նա յօրինեց սէ՛ր երկնֆի՛, անհասի՛
Եւ գարուններ յաւերժակա՛ն հոգեվա՛ն . . .
5. Առաւօտ է. արշալոյսն է փայլում վառ
Եւ աշխարհին կանչում կեանքի՛ դիւթական:
Հագար նագով, հագար սագով,
Բիւր գարդերով, գանգուր մագով
Մեկնում է նա հեռաստանից իր պայծա՛ն . . .
Նորահարսն է գարդարանքով նոր գարնան,

Որ ժպտերես սպասում է փեսային .
Շողում է նա, չորս կողմ ցրում հառագայթ —
Միշտ լուսաւոր եւ միշտ ընտիր ու կարմիր . . .
Անմահական հարսանիքի նուրբ ծաղիկներ, զարդ եւ
վարդ —

Բաժանում է նա լեռներին, անտառին,
Որ շուտ զարթնեն, պատրաստ լինին
Մեծ փեսայի աստուածային խնոյֆին . . .
— Արե՛ւ, արե՛ւ. կե՛անք ես, գարուն եւ ազատ-
երկի՛նք, երկիր կարօ՛տ եմ քեզ հարագա՛տ . . .

6. Առաւօտ է. արշալո՛յս կայ Շար-Քիշատի սրտի
մէջ,

— Աշխատանքի նոր արշալոյս երկնաէջ . . .
Նոր հոգեւոր գարունն է սուրբ կանչում նորան
Որ քեւ՛ առնի, կեանքը լեննի նո՛ր լոյսերով ան-
ման . . .

Պայծառ ու ժիր եւ մտացի՛ր. քեթե՛ւ, քեթե՛ւ,
Իբրեւ հոգի իսկ երկնի՛ք, կարծես մի լոյս գուար-
թո՛ւն —

Դուրս է գալիս նա դառնութեան պալատից
Որ հեռանայ եւ մոռանայ իր անցեալը սին ու սե՛ւ . .
Դուրս է գալիս նոր եռանդով ու տոկուն —
Յիստ՛ւն տարի նորան մաշող սեւ բանտից,
Որ յօրինի կեանքի համար նո՛ր հոգեւոր մի գա-
րուն . . .

7. Ափսոսանքի ոչ մի նշոյլ իւր սրտում. —

Սե՛ւ անցեալի հետքերը կոշտ էլ չ'կա՛ն.
Ի՞նչ է քողել նա աշխարհի հափնում,
Ուր տիրում են դափնեհե՛րը անարժան . . .
Ի՞նչը պէտք է նա ափսոսար սրտագին.

Արժանի՞ եմ ափսոսանքի կեանքը մոլի ու դաժան,
Փառք ու պատիւ, կիրք ու ձգտում դառնագին
Ժխորատես վերուդի՛րը նիւթական . . .

Հողմերը չա՛ր վերացել են իւր սրտից
— Արեւահաս հոգի՛ է նա մի անբիծ . . .
Թեթե՛ւ, քեթե՛ւ, եթերի պէս նրբաճեւ՝
Աներեւո՛յթ նա հեռացա՛ւ դէպ արեւ . . .
— Շար-Քիշատը քոա՛ւ, կորա՛ւ լոյսի՛ պէս.
Նա հոգի՛ է երկնատարա՛ծ ու անտես . . .

9. Ի՞նչ է խօսում հեփիաթի պէս մեղմագին

Աւանդութեան սուրբ լեզուն.

Ի՞նչ են ասում Շար-Քիշատի բախտի մասին
Մեր ջոջերը իմաստուն . . .

— Տանջանքը մեծ նորա հոգին հրդեհեց.

Իսկ հրդեհի կրակն ու բոց ահաւոր

Նիւթակառոյց նորա մարմինը այրեց . . .

Իսկ սուրբ հոգին՝ յաւերժական, երկնաւո՛ր,

Էս աշխարհի նիւթէ բանտից ազատուա՛ծ —

Կեանքի համար դարձաւ արե՛ւ ու աստուած . . .

10. Ուղիներով էս աշխարհի ու կեանքի
 Սաւառնում է աներեւոյթ մի հոգի . . .
 Նա ամէն տեղ ու ամէն ժամ, արեւի պէս լուսաւոր
 Հնչում է իւր զանգը անմահ ու հօր . . .
 — Շար-Քիշատն է զանգը հնչում յաւերժութեան,
 — Շար-Քիշատն է անվերջ կանչում նո՛ր գարնան . .

11. Ուր գիւղացին նետում է իւր բահն ու կացին,
 Ուր զարկում է բանւորը իւր դագգահին.
 Ուր ժրաջան աշխատաւորն՝
 Գիշեր ցերեկ ու տրտում
 Արիւն — ֆրտինք է բափում,
 Ուր հանճարն է թռիչք անում մտաւոր,
 — Այնտեղ է միշտ Շար-Քիշատը վեհաբար.
 Աշխատանքի՛ անիւները նա շարժում է յաղթաբար . .
 Շար-Քիշատը լուսապսակ, վեհ ու ժիր
 Կեանք է կերտում անմահական արեւից.
 Նա նախորդում է լոյսի թելով երկրէ երկիր
 Ու տարածում մեզ հոգեւոր յաւերժութի՛ւն —
 Իւր կենարար սրտի անմահ ակունքի՛ց . . .
 — Շար-Քիշատը, ձեռքին արեւ, փաջարի՛,
 Իբրեւ հոգի երկնահաս,
 Անմահութեամբ անպակաս
 Հնչում է իւր զանգը հոգո՛ր եւ արի՛.
 — Արշաւեցե՛ք դէպի բարձունք եթերի . . .

1922—1926.

ԲՈՎԱՆ ԳԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
Ա. Դարբին	5
Բ. Էս աշխարհում կեանքս մի զո՛ւր գրագ էր	7
Գ. Իմ պարտէզը	8
Դ. Անմահական ու երկնային կորուցել եմ իմ ուղին	9
Ե. Իմ կեանքը	10
Զ. Փարվանի պէս միշտ գալարունք արեւի շուրջ	11
Է. Զուլհակներ	12
Ը. Միթէ՛ շքեղ եւ փառահեղ աշխարհը այս տէր շունի	15
Թ. Ասէ՛ք, ինչո՞ւ երկիրը մեր	16
Ժ. Միտք ու երազ	17
ԺԱ. Ո՛վ է խօսում մթի մէջ	18
ԺԲ. Ես շատ անգամ ման եմ գալիս՝ աչքս արեւին	19
ԺԳ. Կեանքի լոյսով լեզի լեցուն է իմ հոգին	20
ԺԴ. Դատարկ՝ ու սին է աշխարհի սեւ ուղին	21
ԺԵ. Արեւներին եւ աստղերին միշտ կանչում է իմ հոգին	22
ԺԶ. Ո՛վ է հիմնել սքանչազործ այս տունը	23
ԺԷ. Զանի՛ կ'ուզէ վայրենաբար թող ինձ տանջի իմ ցաւը	24
ԺԸ. Կայծակը ինձ նետ՝	25
ԺԹ. Միտքը	26
Ի. Ձմրան գիշեր	27
ԻԱ. Ես եկուոր չեմ էս աշխարհում	28
ԻԲ. Լուսնի պէս մենակ՝ անդունդի ակին	31
ԻԳ. Գգրարի երգը	32
ԻԴ. Զանի՛ գնամ անդուր իզուր իմ ուղին	36
ԻԵ. Ո՛վ էր ասաց, թէ կայ աստուած մեզնից հեռու երկնքում	37
ԻԶ. Սուտ մի՛ ասէք. մարդը երբէք չի մեռնի	38
ԻԷ. Նստած մենակ միտք եմ անում	39
ԻԸ. Հազար տեսակ վարպետներ կան իմ ձեռքի տակ շինարար	40
ԻԹ. Էս աշխարհից, էս քաղաքից ու գիւղից	41

	ԷՂ
Լ. Կլէյշի	42
ԼԱ. Ժիր եւ հօօր, տերեւազարդ յամառ անտառ	46
ԼԲ. Ուխտաւորներ	47
ԼԳ. Իմ սեփական բեռները չեն, որ կրում է իմ հոգին	49
ԼԴ. Լուռ ես Մասիս	50
ԼԵ. Նաւաւար է իմ հոգին	53
ԼԶ. Կոհի	55
ԼԷ. Գործարան	57
ԼԸ. Իմ գիրքը	62
ԼԹ. Զօրահանդէս	65
Խ. Լուռ գնում եմ իմ ծամբէն	68
ԽԱ. Երբ մահը գայ եւ ինձ տանի	69
ԽԲ. Ամպ ու զամպ է իմ չորս կողմ	70
ԽԳ. Կեանքս իզուր, չէնքս տխուր մի տուն էր	71
ԽԴ. Գարուն է վառ ու մայիս	72
ԽԵ. Կեանքս ծառ էր մի անպտուղ	73
ԽԶ. Ընկերներ	74
ԽԷ. Երգիչներ	76
ԽԸ. Իմ մտքերը	77
ԽԹ. Ինչպէս թշնամի անհամար զօրքեր	79
Ժ. Վերցնեմ իմ քնար, ընկնեմ սարէ սար	80
ԺԱ. Ծախրեմ հեռուն, ծովը անհուն	81
ԺԲ. Երգեր ունիմ, զօրքեր չունիմ	82
ԺԳ. Հարսանիք գնանք	85
ԺԴ. Մարդիկ, ունիք շատ քարք ու վարք	87
ԺԵ. Լոյսի պէս լաւատես ծեղ զարուն են բերում	88
ԺԶ. Ո՞ր երկրից եմ եկել եւ ինչպէս	89
ԺԷ. Երկնքի խորութիւն	91
ԺԸ. Հազար ու մի ծամբայ անցայ	93
ԺԹ. Ոչ սկիզբը գիտեմ, ոչ վախճանը ծամբիս	94
Կ. Ժողիկներն անմահ, տերեւները զարնան	95
ԿԱ. Տերեւներն են, տերեւները հողմահար	96
ԿԲ. Ինչիս են փառք, պատիւ. ինչիս են ժպիտները զարնան	97
ԿԳ. Հազար նազով, երգ ու սազով	98
ԿԴ. Ութտող	99
ԿԵ. Դու ինչ գիտես, երբ պիտի գայ	110
ԿԶ. Օձեր քոցեր	111
ԿԷ. Իմ սրտում կայ խորհուրդ եւ արեւ	113
ԿԸ. Վերել վերել մինչեւ արեւն յարատել	114

	ԷՂ
ԿԹ. Ծս անբուն թռչուն եմ, թեւ չունեմ	115
Հ. Հեռուներ, լեռների կատարներ կախարդուն	116
ՀԱ. Ծս այսօր նստեցի իմ օրերն հաշուեցի	118
ՀԲ. Ամիս եւ քիրտ՝ ծահիճ դահիճ զազաններ	119
ՀԳ. Ինչպէս աշունքին անտառը տխուր	121
ՀԴ. Է՛յ այգեբան	122
ՀԵ. Չէ՞ որ գնում ես հեռու երկիրներ	123
ՀԶ. Ի՞նչ ես իզուր սիրտդ մաշում ցաւերով	124
ՀԷ. Զեռ-օղի	125
ՀԸ. Առաւօտ է. էս մեղմ, սրբութեան ժամերին	127
ՀԹ. Ինձ արեւն էր կանչում	128
Ձ. Հարազատներս	130
ՁԱ. Սուտ մի՛ ասէք. ես աշխարհի մասը չեմ	134
ՁԲ. Մահը գերուած	135
ՁԳ. Ծիծու	138
ՁԴ. Հեքիաթ	140
ՁԵ. Կատուի վիշտը	142
ՁԶ. Ծանապարհ	143
ՁԷ. Ազատութիւն	145
ՁԸ. Ծախարակ	148
ՁԹ. Շար-Բիշատ (Պոէմ)	152



Մխիթարեան Տպարան

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0029413

ЦЕНА

11

1333